ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(**74**-րդ տարի) **Թիվ-4** (1638) Ապրիլ 2020

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Տպագրված է «ՆԱՄԷ» տպագրատանը
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

Շապիկի 4-րդ էջի նկարը Վ. Պոտպոմոգովի «Ահազանգ»

1- Խմբագրականի փոխարեն

«Դրօշակ»ի հեռագիրը Ներքին նախարար
Թալէաթ պէյին (էջ 1-2)

2- Հարցազրույց

Պատասխանում է Կիրո Մանոյանը
Յաջողութեան գլխաւոր գրաւականը համազգային միասնականութիւնն ու համախոհութիւնն են: (էջ 3-6)

Պատասխանում է Ռուբեն Սաֆրաստյանը
Երիտասարդ սերունդները շարունակելու են պայքարը (էջ 7-12)

3- Պատմության լուսարձակ

Անի Մելքոնյան
Հայոց ցեղասպանություն. պատճառները, նախորդող իրադարձությունները եւ հետեւանքների վերացման ուղղությամբ անելիքները (էջ 13-17)

Անի Ոսկանյան
Զինվորագրումից ոչնչացում. հայերի ծառայությունն օսմանյան բանակում (էջ 18-20)

Արարատ Հակոբյան
Դրվագներ 1915 թ. արևմտահայության ինքնապաշտպանական կռիվներից (էջ 21-23)

4- Հայ Դատ

Մելինե Անումյան
Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունները թուրքերի կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչում (էջ 24-26)

Նորա Արիսեան
Սուրիոյ կողմէ Հայոց ցեղասպանութեան միաձայնութեամբ ճանաչումը պատմական խորապատկերի վրայ (էջ 27-28)

Զավեն Լիյլոզեան
Հայ դատի յանձնախումբն ու իր գործը եգիպտոսի մէջ (էջ 29-31)

Պատասխանում է Ռաֆֆի Համբարյանը
Անցնող երեք տասնամեակներուն մենք պայքարի առաջնագիծին վրայ էինք (էջ 32-36)

5- Հայրենի եզերք

Կարոտ Սասունյան
Դիարբեքիրի հայկական եկեղեցիները եւ հայերը (էջ 37-39)

6- Սփյուռք

Մկրտիչ Մկրտիչեան
Հայաստան – ՀՅԴ – Սփիւռք (4) (Ժամանակակից շրջան - 3) (էջ 40-41)

7- Սոցիալական

Մարիօ Նալպանդեան
Պետութեան տեղն ու դերը (էջ 42-44)

Դրօշակի հաջորդ համարում՝
Աւօ Գաթրճեանի «Դրոշակ»ը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան վավերագիր (մաս 3-րդ)
և Վրեժ Նահատակյանի «Զավախքի հիմնահարցերը » (մաս 4-րդ)

Թալէաթ պէյին

Ներքին նախարար

Կ. Պոլիս

Խոր վշտով է, որ ձեզ ուղղում ենք այս հեռագիրը՝ բողոքելու մեր ամբողջ ուժով, մեր հոգեկան ամբողջ թափով և համակ էութեամբ այն սարսափների դէմ, որ գործւում են հայ ժողովուրդի դէմ թուրքերի և քուրդերի կողմից և, որ ծանրագոյնն է, ակներև աջակցութեամբ թրքական կանոնաւոր բանակի:

Ո՞վ է կազմակերպել ջարդերը: Ո՞վ է պատասխանատուն այս գազանութիւնների, որոնք նսեմացնում են մինչև իսկ Սուլթան Համիտի ահաւոր կոտորածները: Ո՞վ է սփռել սուգի քողը ամբողջ Հայաստանի վրայ, Կիլիկիայից մինչև Արարատ, Արաքսի հովիտը: Ո՞վ է այդ դժբախտ երկիրը վերածել աւերակների կոյտի՝ անխնայ սրածելով նրա արու զաւակները՝ առանց տարիքի խտրութեան, առևանգելով և բռնաբարելով կիներին և ողջ թողնելով միայն անկարներին և պառաւներին՝ ողբալու համար մնացող աւերակների վրայ:

Զոհերի թիւը բազմաթիվ հազարների է հասնում: Հայաստանում այլևս գոյություն չունեն հայ գյուղեր, որոնք հիմնայատակ են եղել:

Բաւ չէր եղած ուղղակի թալանն ու կողոպուտը, հայերի ամբողջ ինչքն ու ստացուածքը բռնագրաւուած են զինուորական պիտոյքի պատրուակով: Բաւ չէր եղած հաւաքել բոլոր հայ չարքաշ երիտասարդներին զինակոչի անունով, և, փոխանակ նրանց ռազմադաշտ ուղարկելու, վատօրէն խողխողած են հեռու և անյայտ ձորերում:

Բաւ չէ եղած վիրաւորել և անպատուել զօրակոչիկ հայերի ազգային և կրօնական զգացումները. կը բռնադատէին նրանց ամօթալի և անպատիվ գործեր կատարելու, ստօրէն կը մեղադրէին նրանց լրտեսութեան և հայրենադաւութեան յանցանքով ու կը սպանէին: Բաւ չէր եղած անյայտացնել հայ կեանքի ակնառու և որակաւոր դէմքերին և անձնաւորութիւններին. նրանց կը բանտարկէին և կ'աքսորէին երկրի հեռաւոր և անծանօթ խորերը: Բաւ չէր ահաբեկումի ենթարկել ամբողջ հայ ժողովուրդը. Հայաստանն ու Կիլիկիան պէտք էր վերածել համատարած գերեզմանոցի:

Ո՞վ է մեղաւորը: Համայն աշխարհը և առաջին հերթին ձեր տարաբախտ զոհերը ձեր երեսն ի վեր կը պոռան ձեր ոճիրը, մանաւանդ՝ այն զոհերը, որոնք երէկ ձեր բարեկամներն էին և ձեզ հետ միասնաբար աղուհաց էին կերել:

Եւ ինչո՞ւ այս անլուր ոճիրները:

Նրա՞մ համար, որ այս մարտիրոս ժողովուրդը իր ամբողջական կարողութիւններով շարունակ կռուել է համիտեան բռնատիրութեան դէմ և մեծապէս նպաստել թրքական յեղափոխութեան: Նրա՞մ համար, որ դուք հայերին համարում էիք ձեր յեղափոխական ուսուցիչները: Նրա՞մ համար, որ իրենց երիտասարդ ու առնական ուժերը ձեր նորակազմ կառավարութեան տրամադրութեան տակ դրին՝ պաշտպանելու համար նորածիլ Սահմանադրութիւնը և Ազատութիւնը:

Նրա՞մ համար, որ համիտեան յետաշրջական շարժումների ժամանակ հայերը միայն սահմանադրութեան հավատարիմ մնացին, երբ ձեր ընկերներից շատերը դասալիք եղան:

Ձեր կառավարութիւնը բանտարկեց մեր ընկերներից շատերին, որոնց մեծ մասը դուք կնկատէիք ձեր բարեկամը և խորհրդատուն: Ձեր դիրքը ամրացնելուց յետոյ, երբ ձեզ վտանգից զերծ նկատեցիք, դուք խոստմնադրուժ եղաք ձեր վաղեմի գործակիցների հանդէպ և որդեգրեցիք բացայայտ հակահայկական կեցուածք: Սակայն նրանք շարունակեցին իրենց հաւատարիմ և օրինապահ ընթացքը՝ ջանալով լուսաբանել ձեր բռնած քաղաքականութեան սխալ լինելը հանդէպ թէ՛ հայ ժողովուրդին և թէ՛ օսմանեան պետութեան: Եւ երբ, յուսահատ ձեր յամառ դրժումից, ձեր հանդէպ մեր պաշտօնական կապը խզեցինք, ոչ միայն թշնամական դիրք չբռնեցինք, այլև շարունակեցինք մեր պարտքը կատարել հանդէպ ձեզ և ընդհանուր հայրենիքին: Մենք զգուշացրինք ձեր աղէտաբեր քաղաքականութիւնից և նշեցինք, որ Ռուսիոյ դէմ պատերազմի մտնելը ձեզ կործանման կտանի: Խորհուրդ տուեցինք ձեզ չհպատակուելու Գերմանիոյ ազդեցութեան և պատերազմ յայտարարելու Երրեակ համաձայնութեան, որոնցից Անգլիան և Ֆրանսիան միշտ հանդիսացած են Թուրքիոյ անկեղծ բարեկամները և բազմաթիւ առիթներով փրկած նրա գոյութիւնը:

Դուք ի՞նչ արիք, երբ ձեր այս դարաւոր բարեկամները և ձեր վաղեմի թշնամին՝ Ռուսիան, ձեզ խոստացան Թուրքիոյ անձեռնմխելիութիւնը երաշխաւորել: Դուք ապերախտ եղաք ձեր երբեմնի ազատարարների հանդէպ ծառանալով և Գերմանիոյ գիրկը նետուեցիք՝ կուրացած նրա հզօրութիւնից, նաև վերջ տուիք խոհեմ չէզոքութեան՝ կործանումի ճանապարհի վրայ դնելով օսմանեան պետութիւնը:

Արդէն իսկ աղքատ Թուրքիան այժմ ընթանում է դէպի փլուզում և հիմնայատակ աւերում:

Հայաստանի սահմանների վրայ արիւնաքամ պարտութիւններ կրեցիք, իսկ այժմ մղում էք

մահուան կոիւը, բայց այլևս անզօր էք հայրենիքը փրկելու համար: Դրա համար էլ դուք տմարդօրէն նետուել էք անզէն, անպաշտպան և դժբախտ հայ ժողովուրդի վրայ:

Ձեր քաղաքականութիւնն է, որ ստիպել է հայերին խումբ առ խումբ ընդվզելու և կռիւ մղելու սիստեմատիկ հայաջնջումի դէմ: Դուք քաղում էք, ինչ որ սերմանել էք:

«Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» պաշտօնաթերթը, անկախ կուսակցութիւնից, իր սեփական պատասխանատուութեան տակ գալիս է յայտարարելու ձեզ անձամբ, ձեր կառավարութեան և «Իթթիհատի» անդամներին, որ ձեզ ամբաստանում ենք և ձեզ պատասխանատու ենք համարում բարոյապէս և իրաւապէս այն բոլոր ոճիրների համար, որ գործում են հայ ժողովուրդի, ինչպէս նաև օսմանեան պետութեան դէմ:

ԴՐՕՇԱԿ
Օրգան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան»

2 Յունիս 1915, Ժընև

Սույն հեռագրի ֆրանսերեն բնագիրը պահպանվում է ՀՅԴ կենտրոնական արխիվում՝ Փաստ.63-54ա: Հրապարակվել է «ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ» մատենաշարի ԺԲ հատորում (Պէյրութ - Մայիս 2016):

Վ. Պողոսմոգով <<Ռեքվիեմ>>

Յաջողութեան գլխաւոր գրաւականը համազգային միասնականութիւնն ու համախոհութիւնն են:

Կիրո Մանոյան
ՀՅԴ Բյուրոյի անդամ, ՀՅԴ Բյուրոյի Հայ դատի և քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու

- Հարգելի՛ ընկ. Մանոյան, այս տարի լրանում է ցեղասպանության 105-րդ տարելիցը: Ինչպե՞ս կարելի է գնահատել Հայ դատի ուղղությամբ տարվող աշխատանքների վիճակը ներկայումս՝ նկատի ունենալով մասնավորապես ամիսներ առաջ ԱՄՆ Կոնգրեսի երկու պալատների և Սիրիայի խորհրդարանի կողմից մեծ ոճիրի ճանաչման և դատապարտման իրողությունները:

- Նախ անհրաժեշտ է յստակեցնել կամ վերյիշեցնել ընթերցողներուն, որ Հայ դատի աշխատանքները չեն վերաբերիր միայն ցեղասպանութեան առնչուող հարցերուն՝ ճանաչում, դատապարտում և հատուցումներ. մեր՝ ՀՅԴ-ի Հայ դատի յանձնախումբերն ու նաև գրասենեակները որոշ պարագաներու նույնիսկ առաւելաբար կը գործեն Հայաստանի Հանրապետութեան միջազգային վարկի բարձրացումին, Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչումին և արտաքին կապերու զարգացումին, Ջաւախքի հայութեան իրաւունքներու պաշտպանութեան ուղղութեամբ: Բոլոր ուղղութիւններով աշխատանքներու ծաւալն ու շեշտադրումները կախեալ են տուեալ միջավայրի քաղաքական պայմաններէն:

Ինչ կը վերաբերի ուղղակի Հայոց ցեղասպանութեան առնչուող հարցերուն, ապա պէտք է արձանագրել, որ յատկապէս Ձեր նշած վերջին դրական արդիւնքներէն ետք Թուրքիան բաւական դժուար կացութեան մէջ կը գտնուի, որովհետև այդ երկու երկիրներուն՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն և Սուրիոյ օրէնսդիր մարմիններուն կողմէ որդեգրուած՝ ցեղասպանութեան ճանաչումի կամ ճանաչումը վերահաստատող բանաձևերը քաղաքական յատուկ նշանակութիւն ունին:

ԱՄՆ-ն կը հանդիսանայ Թուրքիոյ կարևորագոյն դաշնակիցներէն մէկը, և այդ առումով անոր օրէնսդիր իշխանութեան երկու պալատներուն կողմէ որդեգրուած բանաձևերը նաև պատգամ և ուղեցոյց են Թուրքիոյ միւս դաշնակիցներուն, անոնց, որոնք ցարդ նման բանաձևեր կամ դիրքորոշում չունին, թէ կարելի է նման դիրքորոշում որդեգրել:

Ինչ կը վերաբերի Սուրիոյ խորհրդարանի բանաձևին, ապա այն յատկանշական է մի քանի առումներով. բանաձևին ներածականին մէջ յստակ կը յիշուի Արևմտեան Հայաստանը, երկրորդ՝ կը հաստատուի նաև, որ ցեղասպանութեան արարներուն մէկ մասը գործադրուած է նոյնինքն Սուրիոյ տարածքներուն վրայ, և որպէս այդպիսին՝ Սուրիան ականատես իսկ է գործուած ոճիրին:

«Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը» արդէն շուրջ 15 տարիէ ի վեր կը խօսի ցեղասպանութեան ճանաչումէն հատուցումներու խնդրին անցնելու անհրաժեշտութեան մասին, և այդ ուղղութեամբ առած ենք որոշ քայլեր: Արդէն, երբ յիսնամեակէն սկսաւ ցեղասպանութեան միջազգային ճանաչումի գործընթացը, նպատակը ի վերջոյ հատուցումներու հարցը բարձրացնելն էր, հատուցումներու հարցին բարձրացումին համար անհրաժեշտ քաղաքական մթնոլորտն ու ենթահողը պատրաստելն էր, յատկապէս՝ Պաղ պատերազմի միջազգային քաղաքական իրականութեան մէջ: Այժմ մէկ կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչումի փաստը աշխարհով մէկ, միւս կողմէն Հայաստանի անկախ հանրապետութեան գոյութիւնը ստեղծած են ցեղասպանութեան հատուցումներու հարցը բարձրացնելու թէ՛ քաղաքական ենթահողը և թէ՛ բազմաթիւ հնարաւորութիւններ հայ ազգին համար:

- Այս հարցազրույցը լույս կընծայվի այն ժամանակահատվածում, երբ, հաստատված ավանդույթի համաձայն, ԱՄՆ նախագահը հայտարարություն կանի Հայոց ցեղասպանության առիթով: Որո՞նք են մեր կանխատեսումները, և արդյոք այնքան ծանրակշի՞ռ են քաղաքական հակափաստարկները, որ չպետք է ակնկալիքներ փայփայենք, թե ամերիկյան բարձրագույն իշխանական համակարգն այս տարի և մոտակա ժամանակահատվածում կամբողջացնի իր հստակ դիրքորոշումը այս հարցում:

- Ամերիկեան բարձրագոյն իշխանութիւնը

միայն գործադիր իշխանությունը չէ. Միացեալ Նահանգներուն մէջ կայ իշխանության երեք՝ օրէնսդիր, գործադիր և դատական թեւերու փոխադարձ հակակշռումի սահմանադրական կարգ: Ճիշտ է, որ ԱՄՆ նախագահը, ով կը ղեկավարէ գործադիր իշխանությունը, նաև պետության գլուխն է, բայց Միացեալ Նահանգներու անունով խօսելու իրաւունքը միայն իրմով չէ սահմանափակուած: Հաշուի առնելով ԱՄՆ-ի օրէնսդիր իշխանության՝ Գոնկրէսի երկու պալատներուն վերջին բանաձևերը, որոնց քիչ առաջ անդրադարձանք, այլևս անառարկելի է, որ Ամերիկայի Միացեալ Նահանգները կը ճանչնա Հայոց ցեղասպանությունը, դեռ չեմ խօսիր 50-էն 49 նահանգներուն կողմէ տարբեր ձևի ճանաչումի քայլերը, որոնք անպայման դրական քաղաքական մթնոլորտ ստեղծած են:

Հարցն այն է, որ պէտք է ԱՄՆ-ի գործադիր իշխանության համար ևս այդ ճանաչումը միանգամընդմիշտ, անվերադարձ կերպով կատարուի, իսկ այդ ճանաչումը միայն նախագահին ուղերձով չի սահմանափակուիր. կարևոր է, որ այն այլևս մաս կազմէ գործադիր իշխանության հաստատագրուած քաղաքականության, որ բնականաբար կ'ազդուի մէկ նախագահի դիրքորոշումէն, բայց ատով չի վերջանար: Այս ուղղությամբ է, որ Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը աշխատանք կը տանի: Վստահ եմ, որ ի վերջոյ հասնելու ենք այդ թիրախին, և այդ ճամբուն վրայ ԱՄՆ-ի այսօրուան նախագահին դիրքորոշումը, որ անցեալ մի քանի տասնամեակներուն սովորաբար կ'արտայայտուի նախագահին տարեկան Ապրիլ 24-ի ուղերձով, բնականաբար ունի շատ կարևոր նշանակություն:

Այս ուղղությամբ աշխատանքը գլխաւորաբար ամերիկահայության գործն է, բայց քանի որ հարցը կը վերաբերի ամբողջ հայ ժողովուրդի պատմության և իրաւունքներուն, բոլորս ոչ միայն ակնկալիք, այլ նաև ընելիք ունինք: Բոլորս ըսելով՝ թէ՛ պետութիւն, թէ՛ հայրենաբնակ և սփիւռքաբնակ հայութիւն՝ իրենց բոլոր թեւերով:

Ձեր հարցումին պատասխանելով՝ ոչ միայն յուսահատելու պատճառ չունինք, ընդհակառակը՝ այս յաջողությունները նոր յաջողություններու դուռ կը բանան:

- Իսկ առհասարակ ո՞ւր ենք հասել ցեղասպանության ճանաչման, դատապարտման և կորուստների հատուցման ուղղությամբ: Արդեն մի քանի տարի է, որ համապատասխան թղթածրար է պատրաստվում: Այս թղթածրարի ճակատագիրն ի՞նչ է լինելու, գործնական ի՞նչ ընթացք է նախատեսվում մոտ ապագայի համար թղթածրարի հետապնդման առումով, եթե իհարկե կան համապատասխան ծրագրեր, և կարելի է այդ մասին խոսել:

- Թղթածրարը, որուն կ'ակնարկէք, կ'ենթադրեմ՝ կը վերաբերի Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին առիթով որդեգրուած համահայկական հռչակագրին մէջ նշուող թղթածրարին: Այդ հռչակագրին կէտերէն մէկը կ'ըսէ. «Կ'արտայայտէ Հայաստանի և հայ ժողովուրդի միասնական կամքը Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչման հասնելու և Ցեղասպանության հետևանքներու վերացումի հարցով, որուն համար կը մշակէ հատուցումներու համապարփակ թղթածրար՝ դիտելով զայն անհատական, համայնքային և համազգային իրաւունքներու և օրինական շահերու վերականգնման գործընթացի մեկնարկ»: Այս թղթածրարի ուրուագիծը կայ նոյնինքն համահայկական հռչակագրին մէջ. օրին յատուկ աշխատանքային խումբ մը պատրաստեց նաև թղթածրարի նախագիծ և յանձնեց Հայաստանի Հանրապետության օրուան նախագահին: Այնուհետև Երևանի մէջ տեղի ունեցան մի քանի հանդիպումներ՝ նախաձեռնությամբ և համակարգումով Հայոց ցեղասպանության իրաւական հարցերի գիտավերլուծական կենտրոնին, այդ նախագիծին և այլ ուսումնասիրութիւններու հիման վրայ մէկ ամբողջական տարբերակ յառաջացնելու նպատակով: 2018-ի իրադարձութիւններէն ետք աշխատանքները դանդաղեցան: Յոյս ունիմ՝ շուտով կը վերսկսին:

Այստեղ պէտք է յիշեմ նաև ՀՅԴ Բիւրոյի նախաձեռնությամբ և պատուէրով խումբ մը հայ և օտար մասնագէտներու մասնակցությամբ 2007-ին ձևաւորուած Հայոց ցեղասպանության հատուցումներու ուսումնասիրության խումբի աշխատանքը: Այդ խումբին վերջնական և ամբողջական զեկոյցի անգլերէն բնագիրը հրապարակուեցաւ 2014-ի սեպտեմբերին: Յարդ հրապարակուած են այդ զեկոյցին ամբողջական և կամ համառօտ տարբերակները հայերէն, թրքերէն, ֆրանսերէն, սպաներէն, լեհերէն. շուտով կը հրապարակուի նաև արաբերէնով: Այս ուսումնասիրութիւնը տարբեր ակադեմական և քաղաքական հանրային քննարկումներու հիմնական ատաղձը եղած է և պիտի շարունակի ըլլալ: Որոշ իմաստով այս խումբի աշխատանքը շարունակելու համար հիմնադրուեցաւ և ԱՄՆ-ի մայրաքաղաքին մէջ 2016-ին գրանցուեցաւ Արդարության և մարդկային իրաւանց հայկական իրաւական կեդրոնը, որուն հոգաբարձուներու խորհուրդին անդամ են տարբեր երկիրներէ մասնագէտներ և գործիչներ: Կարգ մը գործնական պատճառներով դանդաղած այս կեդրոնի աշխատանքն ալ նոր թափ ստանալու կարիք ունի:

Յաճախ, երբ հատուցումներու մասին կը խօսուի,

շատեր կը կարծեն, որ այդ միայն իրաւական-դատական գործողութիւններու միջոցով պիտի ըլլայ. այդպէս չէ, թէև նաեւ դատական գործեր յարուցելն ալ այդ ամբողջ զինանոցին մաս կը կազմէ: Այդպէս չէ, որովհետև միջազգային օրէնքները տակաւին ամբողջապէս պատասխան չունին հայ ժողովուրդին դէմ գործադրուած այս ոճիրին համար հատուցումներու խնդիրներուն: Մէկ կողմէ միջազգային օրէնքները անընդհատ կը զարգանան, միւս կողմէ նման յանցագործութիւններու հատուցումի հարցերը շատ արդիական դարձած են:

Հատուցումներու հարցով առնուած են շարք մը քաղաքական, իրաւական և ակադեմական քայլեր: Քաղաքականը կը վերաբերի յատկապէս Միացեալ Նահանգներու օրէնսդիր մարմնին՝ Գոնկրէսէն ներս կատարուող աշխատանքներուն, որոնցմէ գլխաւորը Ներկայացուցիչներու պալատին կողմէ 2011-ին որդեգրուած բանաձևն է՝ Թուրքիոյ կողմէ բռնագրաւուած եկեղեցապատկան կալուածներու վերադարձի մասին: Նման բանաձև որդեգրուեցաւ նաև 2017-ին Գալիֆորնիոյ Ծերակոյտին կողմէ: Հատուցումներու մասին քաղաքական հրապարակային քննարկումներ եղած են նաև Եւրոխորհրդարանին և Ֆրանսիայի Ազգային ժողովին անդամներու մասնակցութեամբ Պրիւքսէլի և Փարիզի մէջ: Հատուցումներու շուրջ ակադեմական տարբեր համաժողովները Հայաստանէն Լիբանան, Արժանթին, Հոլանտա, Գանատա ու այլուր, ըստ էութեան, քաղաքական քննարկումներ են, որովհետև կը ծառայեն հարցի քաղաքական արծարծումին հող պատրաստելուն:

30-35 տարի առաջ հատուցումներու մասին կարելի է ըսել՝ բաւական բացասական տրամադրութիւն կար քաղաքական շրջանակներու մօտ: Հիմա այդ փոխուած է, և եթէ տակաւին ամբողջական դրական տրամադրութիւն չկայ, բոլորին համար պարզ է, որ Հայոց ցեղասպանութեան՝ Թուրքիոյ կողմէ ճանաչումը հարցի կարգաւորման գործընթացի միայն սկիզբը կրնայ ըլլալ, որովհետև հիմնական հարցը հատուցումներն են: Պէտք է նաև շեշտել, որ, միջազգային օրէնքի համաձայն, պայման չէ, որ Թուրքիան նախ ճանչնայ ցեղասպանութիւնը, և ապա մենք հատուցումներու հարց բարձրացնենք, թէև, բնականաբար, Թուրքիոյ կողմէ իր գործած յանցագործութեան ճանաչումը կը դիւրացնէ հատուցումներու հարցը իր հետ բարձրացնելուն:

Տարբեր տեսակի ու չափի հատուցումներու հետ կապուած որոշ դատական գործեր յարուցուած են Միացեալ Նահանգներու և Թուրքիոյ մէջ. վերջինը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմէ՝ Սիսի կաթողիկոսարանի կալուածին վերադարձի հարցով: Դատական բնագաւառին մէջ ևս անհրաժեշտ է աշխատանքներու համադրումը:

2015թ. Յունուար 29, Ծիծեռնակաբերդի յուշահամալիր. Համահայկական հոչակագիրի հրապարակման արարողութիւնը

- **Տարածաշրջանը, որտեղ կերտվում է մեր ճակատագիրը, շատերի կանխատեսմամբ մեծ փոփոխությունների շեմին է, եթե չասենք, որ այդ փոփոխություններն արդեն իսկ ընթացքի մեջ են: Արդյոք մենք անելիքներ ունենք այդ մեծ փոփոխությունների շեմին:**

- Բնականաբար ընելիք ունինք, եթէ կ'ուզենք այդ փոփոխութիւններով ստեղծուելիք հնարաւորութիւններէն օգտուել: Ունինք մի քանի ուղղութեամբ կատարելիք աշխատանքներ. մէկը, եթէ ոչ գլխաւորը, Հայաստանի Հանրապետութեան (ներառեալ Արցախի) հզօրացումն է բոլոր առումներով, որպէսզի եթէ կամ երբ գայ այդ պահը, մենք՝ որպէս ազգ, կարենանք միջազգային օրէնքի համաձայն միջազգային ասպարէզի մէջ մեր գլխաւոր դերակատարին՝ պետութեան միջոցով մեր իրաւունքները պաշտպանել: Որպէսզի պետութիւնը այդ ժամանակ կարենայ այդ ընել, պետութիւնը պէտք է անընդհատ արձանագրէ, ամրագրէ և բարձրաձայնէ, որ ինք պահանջատէր է կամ ինչ այլ բառ, որ կ'ուզենք գործածել: Այդ ընելու համար անհրաժեշտ է հետևողական ձևով առնել քայլեր՝ օրէնսդրական թէ քաղաքական-դիւանագիտական: Մեր միւս ընելիքն է աւարտին հասցնել մեր հատուցումներու կամ պահանջներու ամբողջական թղթածրարը, որ կ'արժանանայ համահայկական համախոհութեան-համաձայնութեան, որպէսզի նաև կատարուի դերերու բաշխում տարբեր դերակատարներու միջև, և մենք պատրաստ ըլլանք այդ հնարաւորութիւններէն օգտուիլ:

- **Ժամանակի հակասականությունը և անկանխատեսելիությունը պայմանավորված են նաև այն հանգամանքով, որ ներքին ու**

արտաքին բազմաթիվ խնդիրների մեջ խրված Թուրքիան միաժամանակ դրսևորում է խիստ ագրեսիվ և հավակնոտ վարք: Այդ վարքը ակնառու է իր գրեթե բոլոր հարևանների և ոչ միայն հարևանների հետ լարված հարաբերություններում, մասնավորապես Թուրքիան փորձում է լուրջ ռազմական ներկայություն հաստատել Նախիջևանում, ջանքեր է գործադրում՝ ազդելու ղարաբաղյան բանակցային գործընթացի վրա: Այսօր կարծես ակնհայտ է դառնում նաև, որ նրա «մատը խառն է» հայ-ադրբեջանական հակամարտության գծում սադրանքներ հրահրելու գործում: Եվ միևնույն ժամանակ,կարծես Թուրքիան կարողանում է հաջողությամբ մանևրել ռուսական ու ամերիկյան շահերի ու փոխհարաբերությունների դաշտերում: Որքանո՞վ է այս քաղաքականությունը հեռանկարային Թուրքիայի համար, եթե դարձյալ այդ ամենին փորձենք նայել մեզ վրա ունենալիք ազդեցությունների դիտանկյունից:

- Անառարկելի փաստ է, որ Թուրքիան ինչ-ինչ նպատակներով և միջոցներով Հայկական հարցի և Հայաստանի հետ կապված քաղաքականության գծով Ադրբեջանի հետ կը գործէ շատ սերտ, չըսելու համար՝ նոյն բանը կ'ընեն: Նախիջևանը զինելը այդ վարքագիծին ամենացայտուն օրինակներէն է: Իր այդ պահուածքով Թուրքիան իրաւամբ Հայաստանի կողմէ կը նկատուի անվտանգութեան սպառնալիք:

Ինչ կը վերաբերի Թուրքիոյ արտաքին քաղաքականութեան, ապա պէտք է արձանագրել, որ իր աշխարհագրութեամբ և հնարաւորութիւններով Թուրքիան տարածաշրջանային կարևորագոյն ուժերէն մէկն է մեր տարածաշրջանին մէջ: Բայց այդ չի նշանակեր, որ Թուրքիան անպարտելի է: Թուրքիոյ Հանրապետութեան հռչակումէն ի վեր Թուրքիա կ'ապրի ոչ միայն պարտուելու, այլ նաև կործանուելու սպառնալիքի վախով, որովհետև այդ հաւանականութիւնը իրական է: Իր ռազմական թէ քաղաքական քայլերով Թուրքիան իր համար լաւագոյն պարագային ընդամէնը կրնայ քիչ մը յետաձգել այդ կործանումը: Մինչ այդ կրնան ըլլալ ելևէջներ, որոնք մեզ պէտք չէ առաջնորդեն սխալ եզրահանգումներու. եթէ միջազգային բեմին վրայ Խորհրդային Միութեան նման հզօր կայսրութիւնը փլուզուեցաւ, Թուրքիան հաստատ կը փլուզուի: Կարևորը մեր և ուրիշներու հետևողական աշխատանքն է:

- **Այսօրվա դրությամբ համավարակը խառնել է բոլորի ծրագրերը: Որքան տեղյակ ենք, Դաշնակցությունն ուներ առաջիկայում գործադրելիք մի շարք նախաձեռնություններ՝ Հայ դատի օրակարգով, մասնավորապես՝ Սևրի պայմանագրի և Վիլսոնի իրավարար վճռի 100-ամյակների առնչությամբ: Կարելի՞ է այսօր մի փոքր խոսել այդ ծրագրերից:**

- Մեր օրակարգին վրայ են նաև 1921-ի Մոսկուայի և Կարսի դաշնագիրներու 100-ամեակները և ատոնց հակահայ էութեան դէմ քայլեր առնելը: Ինչ կը վերաբերի Սևրի դաշնագրին և Հայաստան-Թուրքիա սահմանագիծի մասին ԱՄՆ նախագահ Ուիլսընի իրաւարար վճիռին, ճիշտ էք, ունինք ծրագրեր. նախատեսուած էր աշնան Սևրի, Հայաստանի և Միացեալ Նահանգներու մէջ համաժողովներ և քաղաքական այլ նախաձեռնութիւններ իրականացնել, որոնք, բնականաբար, այս պայմաններուն մէջ պիտի յետաձգուին: Բայց ծրագրերը կը մնան: Նպատակն է բարձրաձայնել, որ մեզի համար Հայ դատի, Թուրքիոյ և աշխարհի համար Հայկական հարցի միակ իրական լուծումը, թեկուզ ոչ անթերի տարողութեամբ, տուած է Սևրի դաշնագիրը, որ, վաւերացուած չըլլալով հանդերձ, ո՛չ օրինաւոր կերպով փոխարինուած է, և ոչ ալ զայն ստորագրողներէն որևէ մէկը դարձեալ օրինական կերպով չէ հրաժարած անկէ: Ընդհակառակը՝ այդ դաշնագիրը ստորագրող պետութիւններն ու իրաւաժառանգորդները ունին պարտաւորութիւն:

Ինչ կը վերաբերի Ուիլսընի իրաւարար վճիռին, ապա այն միակ իրաւական փաստաթուղթն է՝ Հայաստան-Թուրքիա սահմանը ճշտող, և որպէս այդպիսին մենք այս առիթով պէտք է բարձրաձայնենք:

Այս բոլորին մէջ ևս դեր ունի կատարելիք պետութիւնը՝ Հայաստանի Հանրապետութիւնը: Արդէն ժամանակն է, և պայմանները կան, որ պետութիւնը աւելի ուժեղ ձևով այս հարցերուն մասին իր դիրքորոշումը հրապարակէ՝ առանց Թուրքիոյ դէմ պատերազմ յայտարարած ըլլալու: Մենք 2018 մայիսէն առաջուան ու յաջորդած՝ ներկայի իշխանութիւններուն մօտ այս հարցերը բարձրացուցած ենք, կը բարձրացնենք և պիտի շարունակենք բարձրացնել:

Նման պատմական իրադարձութիւններու ամեակները առիթներ են, որոնք պէտք է օգտագործենք՝ յատուկ նախաձեռնութիւններով առաջ տանելու մեր ազգային-պետական շահերու, իրաւունքներու պաշտպանութիւնը, ինչ որ պէտք է, այլապէս հետևողական կերպով կատարենք: Այստեղ յաջողութեան գլխաւոր գրաւականը համազգային միասնականութիւնն ու համախոհութիւնն են: ■

Երիտասարդ սերունդները շարունակելու են պայքարը

«Դրօշակ»ի հարցերին պատասխանում է ակադեմիկոս, ՀՀ ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռուբեն Սաֆրաստյանը

- Հարգելի պարոն Սաֆրաստյան, Հայոց ցեղասպանության մասին խոսելիս ընդունված է ասել, որ այն հնարավոր դարձավ Առաջին համաշխարհային պատերազմի պայմաններում, բայց արդյոք, այսպես ասած, նպաստող հանգամանքներն էին, որ նաև մղիչ պատճառ հանդիսացան մեծ ոճրագործության համար: Մյուս կողմից՝ հատկապես թուրքական քարոզչության կողմից մեղադրանքներ են հնչում հայության դեմ՝ իբր ողբերգության դրդապատճառը ռուսների հետ գործակցությունն էր, կամավորական շարժումը և այլն:

- Ես համոզված եմ, որ այդ կարծիքները միանշանակորեն հիմնավորված չեն: Դրանց քննադատությունը և իմ մոտեցման հիմնավորումը ես տվել եմ մենագրության մեջ, որտեղ ես քննարկում եմ Օսմանյան կայսրությունում ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը և փաստերի հիման վրա ցույց եմ տալիս, որ ցեղասպանական առաջին ծրագիրը օսմանյան կառավարությունը ստեղծել էր դեռևս 1876 թվականի մայիսին, և այն ուղղված էր բուլղարների դեմ: Դրանից հետո էլի եղան ցեղասպանական ծրագրեր. մեկը՝ 1890-ական թվականներին՝ ուղղված հայ ժողովրդի դեմ, մյուսը՝ 1915 թվականին՝ Հայոց մեծ եղեռնը, ցեղասպանությունը, և մյուս ցեղասպանական ծրագիրն արդեն 1920 թվականին էր ստեղծվել՝ ուղղված Հայաստանի Հանրապետության դեմ: Այսինքն՝ ցեղասպանական ծրագրերն Օսմանյան կայսրությունում նրա գոյության վերջին տասնամյակներում բազմաթիվ են եղել: Սկզբից եղել է բուլղար ժողովրդի դեմ, հետո երեք ծրագիր ստեղծվել է հայ ժողովրդի դեմ: Սա վկայում է այն մասին, որ Օսմանյան կայսրությունն իր գոյության այդ վերջին փուլում դարձել էր ցեղասպան պետություն, որովհետև իշխող վերնախավը, իսկ դրանք տարբեր սերնդի վերնախավեր էին՝ 1870-ական, 1890-ական, 1910-ական թվականների, քեմալականները, ազգային հարցի լուծումը տեսնում էին ցեղասպանության մեջ, այսինքն՝ այդ ժողովրդի իսպառ բնաջնջման մեջ: Իսկ ինչ վերաբերում է 1915 թվականի Հայոց ցեղասպանությանը, ապա կարելի է ասել, որ առաջին անգամ, ըստ էության, ցեղասպանության նախապատրաստումն սկսվել էր 1910 թվականից: 1910 թվականին երիտթուրքական կուսակցության մի կարևոր խորհրդակցություն տեղի ունեցավ, որից հետո տեղի ունեցավ նրանց հերթական համագումարը: Այդ երկու կարևոր խորհրդակցությունների

Ռուբեն Սաֆրաստյան.

ընթացքում քայլեր կատարվեցին, որոնք տարան դեպի Հայոց ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը, գենեզիսը: Վերջնական ծրագիրը պատրաստ էր 1914 թվականի վերջին ամիսներին: Ցեղասպանությունը պետք է անպայման ունենա նպատակադրվածություն, կանխամտածվածություն, ինչը հաստատվում է ծրագրի գոյությամբ: Իսկ ցեղասպանության ծրագիրն ամենակարևոր հանգամանքն է, որը հնարավորություն է տալիս ցեղասպանությունը տարանջատելու, ասենք, սովորական կոտորածից կամ էթնիկ զտումից և այլն: Այնպես որ դա մի շարունակական գործընթաց էր, իսկ 1915 թվականի Հայոց ցեղասպանության ծրագիրը և բուն ցեղասպանությունն այդ ընդհանուր գործընթացի հանգրվանային երևույթներից մեկն էին: Կան վկայություններ, որ խորհրդակցությունները երիտթուրքական կուսակցության վերնախավի նեղ շրջանակներում, կապված Հայկական հարցի լուծման հետ, արդեն տեղի էին ունենում 1912, 1913, 1914 թվականներին՝ մինչև պատերազմը: Այստեղ շատ կարևոր հանգամանք է 1912-1914 թվականների հայկական ճգնաժամը, ինչի արդյունքում ընդունվեց համաձայնագիր, որն Օսմանյան կայսրությունն ստիպված էր ստորագրել եվրոպական հինգ ամենակարևոր երկրների հետ: Դրանով նա համաձայնեց, որ Արևմտյան Հայաստանը կամաց-կամաց դուրս է բերվում Օսմանյան կայսրության իշխանությունից: Դրա հետևանքով Արևմտյան Հայաստանի վիլայեթները բաժանվեցին երկու մասի, երկու արտասահմանցի

նշանակվեցին կառավարիչներ և այլն: Ցավոք, այդ ծրագիրը չիրականացվեց, քանի որ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Ես կարծում եմ, որ այդ բոլոր ծրագրերը, քննարկումները, որոնք սկսեցին ձեռք բերել ավելի կոնկրետ բնույթ, կապված էին ամենակարևոր հանգամանքի հետ: Երիտթուրքական կուսակցության և օսմանյան պետության վերնախավերը հասկացան, որ արդեն սկսվում էր Արևմտյան Հայաստանի ինքնորոշման հնարավորություններ ստեղծելու գործընթացը: Դրա համար նրանք ավանդույթը, այսպես ասած, շարունակեցին և հասցրին «կատարելության», որովհետև 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը մարդկության պատմության ամենադաժան իրադարձություններից է:

-Մուստաֆա Քեմալը արդյո՞ք հայությանն ու Հայաստանը վերջնականապես ոչնչացնելու երիտթուրքական ծրագրերի շարունակողը չէր:

- Այդ խմբավորման, որն անվանվում էր երիտթուրքական կուսակցություն, բացարձակ մեծամասնությունը հանցագործ էր, և նրանց ձեռքերը շաղախված էին հայ ժողովրդի արյամբ: Նրանց մի մասն իրեն հայտարարեց Քեմալի գործի շարունակող կամ քեմալական: Ինքը՝ Քեմալը, երիտթուրքական հայտնի ու կարևոր գործիչներից էր: Կան տվյալներ, որ ժամանակին Կենտկոմի անդամ էր եղել, բայց հետո գժտվել էր Էնվերի հետ և դուրս մնացել կառավարող շրջանակից: Նա իրեն շրջապատել էր այնպիսի մարդկանցով, որոնք ոչ միայն երիտթուրք էին, ինչպես ինքը, այլ նաև ուղղակի պատասխանատվություն էին կրում հայ ժողովրդի ջարդերի համար: Կան հաշվարկներ (իմ գրքում դրանք նշված են), թե քանի հոգի էին նրանք, թե ինչպես Էրզրումի, Կարինի իրենց խորհրդակցության մասնակիցների և ղեկավար կազմի բացարձակ մեծամասնությունը երիտթուրքեր էին և այլն: Մյուս հանգամանքն այն է, որ 1920 թվականի նոյեմբերի 6-ին Անկարայից (այդ ժամանակ քեմալականների ղեկավարությունը տեղափոխվել էր Անկարա և այնտեղ էր գտնվում) Կարաբեքիր փաշային գաղտնի հրաման է գալիս, որում գրված էր, որ Հայաստանը պետք է ոչնչացվեր նյութապես կամ իրապես և քաղաքականապես: Եվ ոչ միայն այդ հրամանն էր տրվում, այլև այդ տեքստում նշվում էին այն ճանապարհները, թե ինչպես պետք է դա իրականացվեր, ինչ պետք է արվեր, որ աշխարհը դրա մասին չիմանար, որ կոծկվեր այդ հանցագործությունը: Կարելի է շատ հստակ պնդել, որ քեմալականները նպատակ ունեին ավարտելու այն գործը, որը սկսել էին էլի իրենք երիտթուրքի անվան տակ, բայց դա ուղղակի քաղաքական զարգացումների բերումով իրականություն չդարձավ:

- Հայտնի է նաև, որ հայության մնացորդացի, ինչպես և Թուրքիայի մյուս փոքրամասնությունների նկատմամբ հալածանքներն ու ջարդերը, նրանց նյութական ու հոգևոր հետքերը վերացնելու քաղաքականությունը շարունակվեցին նաև Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած տասնամյակների ընթացքում: Մի՞թե թուրքական հաջորդական կառավարությունների օրոք չփոխվեցին այդ երկրի պետական գաղափարախոսությունն ու ռազմավարական ծրագրերը:

- Մինչև այդ հարցին պատասխանելը ես ուզում եմ անդրադառնալ Էսատուրասի անձին: Նա հայտնի է նրանով, որ 1951 թվականին հրատարակեց մի ստվար հատոր, որը թարգմանաբար կոչվում է «Հայերը պատմության մեջ և Հայկական հարցը»: Այդտեղ տրված է թուրքական պաշտոնական տեսակետը Հայոց ցեղասպանության ժխտման և կեղծման ուղղությամբ: Այդ մարդը, փաստորեն, վերցնելով Քեմալից, վերցնելով դեռևս երիտթուրքական շրջանից, ձևակերպել է ժխտման և կեղծիքների այն հայեցակարգը, որը հիմա թուրքերն ամեն կերպ արտահայտում են: Այդ մարդը եղել է թուրքական գաղտնի ծառայությունների աշխատակից, իմացել է հայերեն և զբաղվել է հայերենով: Այսինքն՝ մենք տեսնում ենք, որ գաղտնի ծառայությունների աշխատակիցը գիրք է գրել և այնտեղ ձևակերպել է պետական մոտեցումը Հայոց ցեղասպանության ժխտման ուղղությամբ: Նա գաղտնի ծառայություններում աշխատել է հենց հայերի և մյուս փոքրամասնությունների դեմ: Այդ մարդը մարմնավորում է թուրքական, այսպես ասած, պետականության էությունը, քաղաքականության էությունն ազգային փոքրամասնությունների նկատմամբ: Այդ քաղաքականությունը շարունակվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Ընդ որում, 1946 թվականին արդեն հրատարակվեցին Թալեաթի հուշերը, որոնք մինչ այդ չէին հրատարակվել և ձեռագիր էին պահվում: Այնտեղ հատուկ գլուխ կա Հայոց ցեղասպանության մասին: Այդ գլուխը ոչ միայն Թալեաթի անձնական կեղծիքների շարանն է, այլ նաև ընդհանուր թուրքական պետականության մոտեցումն է ցեղասպանության քաղաքականության մասին: Ակնհայտ է, որ այս քաղաքականությունը շարունակվեց և՛ հայերի, և՛ հույների նկատմամբ Թուրքիայի Հանրապետությունում: Մասնավորապես կարելի է հիշել Ստամբուլում 1955 թվականի սեպտեմբերի 6-7-ի իրադարձությունները, երբ տեղի ունեցան

ծանրագույն հանցագործություններ, տասնյակ մարդկանց սպանություններ միայն այն բանի համար, որ նրանք հույն կամ հայ էին: Սրանք նույնպես ցեղասպանական արարքներ էին, որոնք տեղի ունեցան այդ երկրի ամենակարևոր քաղաքում, պետության ուշադրության կենտրոնում: Սա վկայում է այն մասին, որ դա պետական քաղաքականության մասն է կազմում: Ազգային փոքրամասնությունների նկատմամբ Թուրքիայի պետական քաղաքականությունն ունի երկու բաղադրիչ. մի կողմից՝ ճնշումներն են իրավական հարթության վրա, որոնք արտահայտվում են նաև առօրյա կյանքում ազգային փոքրամասնությունների նկատմամբ, մյուս կողմից՝ ժամանակ առ ժամանակ կիրառվում են զանգվածային բռնարարքներ ազգային փոքրամասնությունների նկատմամբ, որ նրանք իրենց «խելոք պահեն»: Այդ քաղաքականության վերջին օրինակը Հրանտ Դինքի սպանությունն էր: Սա, թվում է, մի անհատի սպանություն էր, չնայած խոշոր անհատի, բայց, ըստ էության, այստեղ մի քանի կարևոր հանգամանք կա: Առաջինն այն էր, որ սպանվեց մի անհատ, որը իրադարձություններով հագեցած կենսագրություն էր ունեցել և դեր էր խաղացել նաև թուրքական հասարակական գործունեության մեջ՝ որպես ձախակողմյան գործիչ, և հեղինակություն ուներ Թուրքիայի մտավորականության շրջանում: Նա այն ճանապարհն անցավ, որը վերջիվերջո հանգեցրեց այն բանին, որ նա դատապարտեց Հայոց ցեղասպանությունը: Սկզբից նա այդ հարցերով չէր հետաքրքրվում: Այսինքն՝ դա թուրքական մտավորականության համար մի ճանապարհ էր, որ անցավ Հրանտ Դինքը: Ես կասեի, որ փրկության ճանապարհ էր, որ նրանք հասկանային, թե ինչ էր տեղի ունեցել, և դատապարտեին: Եվ տեղի ունեցավ այդ անհատի սպանությունը: Ես կարծում եմ, որ դա ուղղված էր ողջ թուրք մտավորականությանը: Մենք տեսնում էինք, որ առանձին մարդիկ, ներկայացուցիչներ կամաց-կամաց գալիս էին դեպի ճշմարտություն, ապաշխարում էին որոշ չափով: Եվ այդ սպանությունը կանգնեցրեց այդ գործընթացը: Սա շատ կարևոր է: Եվ դրա համար որպես թիրախ նա էր ընտրվել: Երկրորդ հանգամանքն այն էր, որ, ինչպես բացահայտեց դատական գործընթացը, այստեղ ներգրավված էին հիմնականում ոստիկանության աշխատակիցներ, գաղտնի ծառայության գործակալներ, «գորշ գայլեր», այսինքն՝ թուրքական հասարակության հենց այդ հատվածը: Տեսեք, թե ինչ ճանապարհ է: Էսատուրասի մասին ես պատահաբար չխոսեցի: Նա նույնպես այդ միջավայրից էր: Եվ վերջում հասանք նրան, որ այդ ոլորտի՝ ավելի ցածր աստիճանով աշխատակիցները սպանեցին Հրանտ Դինքին՝ այդպիսի դեմքին: Սա այն իրողությունն է, որ Թուրքիայում կա: Պատահական չէ, որ տասնամյակներ շարունակ քուրդ ժողովրդի նկատմամբ են տեղի ունենում զանգվածային կոտորածներ: Ե՛վ հույներն են զգում դա անընդհատ, և՛ հրեաները՝ ժամանակ առ ժամանակ:

- Կարո՞ղ ենք ասել, որ այսօր էլ կենսունակ են պանթուրքիզմի գաղափարները, և նեոօսմանիզմի կամ այլ տեսությունների ու ծրագրերի արդյունք է այսօրվա թուրքական ագրեսիվ ներքին ու արտաքին քաղաքականությունը: Այս պետությունը մի կողմից խեղդում է իր երկրի ազգային փոքրամասնությունների, մասնավորապես՝ քրդերի ազատասիրական, անկախական նկրտումները, մյուս կողմից ձգտում է գերիշխանություն հաստատելու շրջապատող երկրների վրա, յուրացնել նորանոր տարածքներ, բնական պաշարներ, թելադրել քաղաքականություն, վասալական կախման մեջ գցել և այլն:

- Ես ուզում եմ ընդգծել մի քանի փաստ: Առաջինն այն է, որ ներկայիս կառավարող «Արդարություն և զարգացում» կուսակցությունը (ԱԶԿ-ն) երկիրը կառավարում է՝ կոալիցիա կազմելով «Ազգայնական շարժում» կուսակցության հետ, որը Թուրքիայում պանթուրքիստական կուսակցություն է: ԱԶԿ-ն, որն սկզբից ներկայանում էր իբրև մեղմ, դեմոկրատական, իսլամիստական ուղղության ներկայացուցիչ, ոչ միայն հետագայում գնալով ավելի ուժեղ իսլամիստ դարձավ և համագործակցեց տարբեր տեսակի ջիհադիստական կազմակերպությունների, մասնավորապես՝ Իսլամիստական պետության հետ (դրա մասին կան բազմաթիվ փաստեր), այլ նաև ուղղակի քաղաքական դաշինք ստեղծեց Պանթուրքիստական կուսակցության հետ: Սա վկայում է այն մասին, որ պանթուրքիզմը հիմա Թուրքիայում, կարելի է ասել, պետական ոլորտում գաղափարախոսությունների մեջ ընդունելիներից մեկն է: Սա երկրի ներսում՝ գաղափարական առումով: Ինչ վերաբերում է արտաքին քաղաքականությանը, ապա մի փաստ էլ արձանագրենք, որը հետևյալն է: Ներկա պահին թուրքական զինված ուժերը գտնվում են Թուրքիայից դուրս մի քանի երկրում: Դրանք մասնավորապես տեղակայված են Սիրիայում, Լիբիայում: Քառասունհազարանոց թուրքական բանակ տեղակայված է Կիպրոսում: Թուրքական զինված ուժերը շատ հանգիստ մտնում և դուրս են գալիս Իրաքի տարածքից: Բացի դրանից՝ Թուրքիան իր զինված ուժերն օգտագործում է իր երկրի ներսում իր քաղաքացիների դեմ: Թուրքիան պատմական առումով եղել է ռազմականացված պետություն, և պատահական չէ, որ դեռևս Մարքսը

19-րդ դարում Թուրքիան անվանել է միջնադարի իրական միակ ռազմականացված պետությունը: Այդ ավանդույթը պահպանվել է, և այն շարունակել են Մուստաֆա Քեմալը և նրա խմբակը, որի մեծ մասը զինվորականներ էին: Նրանք հիմնադրեցին Թուրքիայի Հանրապետությունը: Հիմա արդեն մի փուլ է եկել, որ Թուրքիան իր զինված ուժերն օգտագործում է իր երկրի սահմաններից դուրս: Սրանք վերջին տարիների փաստեր են: Մինչ այդ հիմնականում խուսափում էին երկրից դուրս օգտագործել իրենց զինված ուժերը: Սա վկայում է այն մասին, որ Թուրքիայի քաղաքականությունն իր հարևանների և նույնիսկ ոչ հարևանների, օրինակ՝ Լիբիայի համար դարձել է վտանգավոր և նրանց գոյության համար վտանգ է ներկայացնում: Փորձեցին նրանք դա Սիրիայում իրականացնել, բայց տեսնում ենք, որ չի հաջողվում: Հիմա Լիբիա են տեղափոխել իրենց զինված ուժերը: Ենթադրվում է, որ այնտեղ մի քանի հազար թուրք զինյալ կա, հատուկ ուժերի ներկայացուցիչներ: Թուրքերը պատրաստում են ռազմական բազա Տրիպոլիի մերձակայքում: Երկրորդ փաստն այն է, որ կոնկրետ մեր տարածաշրջանում տեսնում ենք, որ Թուրքիան չափազանց մեծ ռազմական ակտիվություն է ցուցաբերում Նախիջևանի ուղղությամբ: Ես կարող եմ այստեղ մեջբերում անել թուրքական մամուլի մի հաղորդագրությունից, որը հետևյալն է: Անկարայի քաղաքական կուլիսներում քննարկվում է Նախիջևանում ռազմական բազա ստեղծելու խնդիրը: Ոչ միայն քննարկվում է, այլ նաև մենք քայլեր ենք արդեն տեսնում. այստեղ թուրք սպաներ են գտնվում, համատեղ զորավարժություններ են ադրբեջանցիների հետ և այլն: Այսինքն՝ Նախիջևանում սկսվել է թուրքական ռազմական բազայի հիմնադրման գործընթացը: Թուրքիան ունի իր երկրից դուրս նաև ռազմական բազաներ և՛ Աֆրիկայում, և՛ Մերձավոր Արևելքում, մասնավորապես Քաթարում ունի ռազմական բազա:

- Թուրքիան այսօր թշնամական հարաբերությունների մեջ է բոլոր հարևանների հետ՝բնականաբար բացառությամբ Ադրբեջանի: Թուրքիան փորձում է գերհզոր տերությունների հետ մրցակցության ասպարեզ խցկվելով իր կամքը թելադրել, շահաբաժիններ ստանալ: Ի վերջո Թուրքիան հիմնավորապես զզվեցրել է Եվրոպային և ոչ միայն Եվրոպային իր պահանջներով, շանտաժներով պայմանավորվածությունների խախտումներով: Ձեր կարծիքով՝ ինչ հետևություններ են արվում սրանից, ՆԱՏՕ-ի անդամ, Ամերիկայի դաշնակից լինելը կամ այլ հանգամանքներ մի՞թե կարող են մշտապես նպաստել սեփական հավակնություններն անպատիժ իրագործելուն:



Քարտեզը արտացոլում է պանթուրանիստների պատկերացումները: Այն հաճախակի կարելի է տեսնել համացանցում: Պանթուրանիստները՝ պանթուրքիստներից ավելի ծայրահեղական են, քանի որ ձգտում են Թուրքիայի ղեկավարության ներքո ստեղծել Թուրան պետությունը, որտեղ պետք է ապրեն միայն թյուրքերը՝ լայն հասկացողությամբ, իսկ մյուս ժողովուրդները տեղ չունեն: Քարտեզի վրա այդ ակնհայտ երևում է: Պանթյուրքիզմը հանդես է գալիս որպես պանթուրանիզմի առաջին փուլ, քանի որ նպատակ ունի ստեղծել միասնություն թյուրքալեզու ժողովուրդների միջև: Համաձայն Թուրքիայում գործող «Թուրան» գաղափարական միության, Թուրանի բնակիչները պետք է լինեն. Azeri, Avar, Başkurt, Bulgar, Balkar, Buryat, Çuvaş, Gagavuz, Kabardino, Karaçay, Karakalpak, Kazak, Kazakistanli Madyar, Kirgiz, Kimik, Moğol, Nogay, Özbek, Özbekistanli Madcar, Tatar, Türk, Tuva, Türkmen, Uygur, Yakut ve Macar türkleri, finliler, tatarlar, gürcüler-ը: Ուշագրավ է, որ նշվում են նաև վրացիները: «Գորշ գայլերի» պանթուրանական կազմակերպության անդամների երդման տեքստում կա հետևյալ նախադասությունը. «Մեր պայքարը կշարունակվի այնքան ժամանակ, մինչև ազգային Թուրքիան կստեղծի Մեծ Թուրանը»:

- Էրդողանի կառավարման շրջանում Թուրքիան Եվրոպայի նկատմամբ քաղաքականության մեկ այլ պարադիգմ է օգտագործում: Եթե իր մերձավորարևելյան հարևանների դեմ ուղղակի զինված ուժեր է կիրառում ժամանակ առ ժամանակ կամ մշտապես պահում է, ապա Եվրոպայի դեմ այս քաղաքականությունը մի քիչ ավելի «մեղմ» է և շանտաժի բնույթ ունի, ոչ թե զինված ուժերի կիրառման: Դա տեղի է ունենում փախստականների հոսքերը կառավարելով: Մենք դա ակնհայտորեն տեսանք վերջերս, երբ Թուրքիան սահմանները բացեց, և հարյուր հազարից ավելի փախստական

մտավ Եվրամիության սահմաններից ներս: Սա հարցի մի կողմն է: Թուրքիան օգտագործում է այս խնդիրը՝ շանտաժ անելու համար եվրոպացիներին՝ ոչ միայն փող կորզելու, այլև իր օգտին նրանց քաղաքական որոշումներն ապահովելու համար: Մի հանգամանք էլ կա: Վկայություններ և ուսումնասիրություններ կան, որոնք հիմնավոր ապացուցում են, որ Թուրքիայից Եվրամիության սահմաններ մտած փախստականների մեջ կան հատուկ պատրաստված ջիհադիստների խմբեր: Թուրքիան ոչ միայն բացահայտ ճնշում է իրականացնում, այլ նաև տեղադրում է Եվրոպայում քնեցրած այդ խմբավորումները, որոնք, եթե պետք լինի, կակտիվացվեն, կսկսեն իրենց ահաբեկչական գործողությունները եվրոպական տարբեր երկրներում: Սա էլ թուրքական վտանգի ավելի սուր արտահայտումն է Եվրոպայի նկատմամբ: Եվ պատահական չէ, որ Եվրոպան, ըստ էության, փակել է Թուրքիայի ճանապարհը դեպի Եվրամիություն, որովհետև շատ հեռու է Եվրամիության չափանիշներից: Վերջին շրջանում Թուրքիայի նկատմամբ հետաքրքիր փոփոխություն է տեղի ունենում եվրոպացիների աշխարհաքաղաքական գործողությունների մեջ: Պարզ է, որ եվրոպական մայրաքաղաքներում Էրդողանին չեն սիրում, քննադատում են, թեև Ֆրանսիան վերջին շրջանում սկսում է ցուցաբերել ակտիվություն Մերձավոր Արևելքում, ինչն ուղղված է Թուրքիայի դեմ: Այնտեղ տեղակայում է իր ռազմական նավերը, համապատասխան հայտարարություններ են հնչում Ֆրանսիայից: Այսինքն՝ եվրոպական երկրները փորձում են արդեն ոչ միայն խոսքերով քննադատել Թուրքիային և նրա ճանապարհը փակել դեպի Եվրամիություն, այլև իրենց գործողություններով ուղղակի սահմանափակել Թուրքիային: Ես կարծում են, որ Ֆրանսիայի այս նոր ռազմավարությունը, որն ամիսների խնդիր է, հետագայում իր շարունակությունը կունենա: Ինչ վերաբերում է Թուրքիայի «անպատժելիության» բարդ խնդրին, ապա դրա ամենապարզ բացատրությունը հավանակաբար այն է, որ Թուրքիան օգտագործում է իր աշխարհաքաղաքական դիրքը, ՆԱՏՕ-ի անդամ և ԱՄՆ-ի դաշնակիցը լինելու հանգամանքը և այլն: Բայց ես կարծում եմ, որ այստեղ մենք գործ ունենք նաև թուրքական դիվանագիտության հետ, որը դարեր շարունակ կարողացել է շատ նրբորեն և խորամանկորեն սողոսկել տարբեր պետությունների շահերի մեջ՝ լարելով մեկին մյուսի դեմ, օգտագործելով իր շահերի համար: Եվ սա էլ իր նշանակությունն ունի:

- **Ղարաբաղյան հարցում Թուրքիան ակնառու ձևով հանդես է գալիս որպես ադրբեջանական շահերի պաշտպան, Թուրքիան մեծացնում է իր ռազմական ներուժը Նախիջևանում: Հայաստանն ունի՞ անելիք այս սպառնալիքներին հակազդելու ուղղությամբ:**

Այս նկարը հաճախակի է հանդիպում համացանցում: Մասնավորապես, «Kirim'in Sesi Gazetesi: Dilde, Fikide, İşte Birlik» («Ղրիմի ձայնը լրագիր. լեզվի, մտքի և գործի միասնություն») լրագիրը տպագրել է այն 2020 թ. մարտի 8-ին՝ հետևյալ խորագրի ներքո «Orta Asya diye bir yer yok, orasi Ulu Türkistan! – Միջին Ասիա ասված տեղ չկա՝ այնտեղ Մեծ Թյուրքեստանն է»: Հոդվածի հեղինակը, ով Ադրբեջանից է, գրում է. «Տարածաշրջանի իրական անվանումը, որը մենք, հետևելով իմպերիալիզմի աշխարհագրական ընկալումներին, անվանում ենք Կենտրոնական Ասիա՝ Թյուրքեստան է»: Նա նշում է, որ ռուսական ու չինական իմպերիալիզմները «կոլ են տվել» նրա արևմուտքը և արևելքը համապատասխանաբար և այդ պատճառով նպատակադրվել են մոռացության տալ այդ անվանումը և փոխարինել այն «միկրո-ազգայնականության վրա հիմնված անվանումներով...» Նրանք ստիպել են, ըստ հոդվածագրի, մոռանալ Մեծ Թյուրքեստանը:

- Թուրքիան բոլոր դիվանագիտական հարթակներում իր բոլոր հնարավորություններն օգտագործում է Ադրբեջանին օգնություն ցույց տալու համար: Ցավոք սրտի, նրա այս մոտեցումը չի սահմանափակվում միայն դրանով, միայն Ադրբեջանին պարզորոշ, ակնհայտորեն օգնություն ցույց տալով, այլ նաև նա փորձում է սողոսկել միջնորդների, ԵԱՀԿ-ի, Մինսկի խմբի համանախագահողների շրջանակը, այսինքն՝ դառնալ նաև միջնորդ: Սա մի կողմից բացահայտ լկտիություն է, մյուս կողմից նույնպես խորամանկ քայլ է: Ես կարծում եմ, որ չնայած Թուրքիան ձեռնարկում է այնպիսի գործողություններ, որոնցից է այդ երկրում վերջերս տեղի ունեցած հանդիպումը համանախագահողների ներկայացուցիչների հետ, բայց շատ լավ հասկանում է, որ ինքը շանս չունի, որովհետև պարզ է, որ Հայաստանը երբեք չի

համաձայնի դրան: Բայց նա անընդհատ դա անում է: Սա առաջին դեպքը չէ: Այս տասնյակ տարիների ընթացքում բազմաթիվ փորձեր են եղել: Իր այդ գործողություններով փորձում է ցույց տալ, որ Թուրքիան ոչ միայն Ադրբեջանի դաշնակիցն է, այլև տարածաշրջանում կարևոր դեր ունի, և առանց իրեն ոչինչ չի լինի: Սա Թուրքիայի քաղաքականության մի հատվածն է կամ մի արտահայտումն է, որը ես Արևելյան եմ անվանում: Սիմվոլների վրա է Թուրքիան աշխատում: Փորձում է իր հզորության մասին միշտ ավելին ցույց տալ, քան իրականում է: Իր դերն է ուզում բարձրացնել: Հիշենք Էրդողանի հայտարարությունները Սիրիայում, երբ նա վերջնաժամկետ դրեց, վերջնագիր հայտարարեց: Այսինքն՝ Թուրքիան միշտ փորձում է ցույց տալ, որ հիմա էլ գոյություն ունի իր օսմանյան անցյալը: Ղարաբաղի հարցում է ինքը փորձում այդպես գործել: Ես կարծում եմ, որ մենք պետք է պատրաստ լինենք, բայց դա շատ լավ իմանալով, ուսումնասիրելով, հետազոտելով: Մենք մի այլ հանգամանքի նկատմամբ էլ միշտ պետք է աչալուրջ լինենք: Թուրքիան իր քաղաքականության մեջ, մասնավորապես՝ տարածաշրջանում, Ադրբեջանին կարող է օգտագործել իր նպատակների համար, սրել իրադրությունը սահմանի վրա, դրդել Ադրբեջանին ավելի ագրեսիվ գործողությունների Հայաստանի կամ Արցախի դեմ: Սա նաև թուրքական դիվանագիտության խաղի մի մասն է՝ Ադրբեջանին օգտագործել և ուղղորդել Հայաստանի կամ Արցախի դեմ: Այնպես որ սրան էլ մենք պետք է պատրաստ լինենք: Մասնավորապես ռուս-թուրքական հարաբերությունների վերջին սրացումը, Ադրբեջանի վերջին դիվերսիոն գործողությունների ակտիվացումը Հայաստանի հետ սահմանի վրա կապված են դրա հետ:

- **Այս համատեքստում որքանո՞վ են արդարացված և որպես թիրախներ ճիշտ ընտրված ցեղասպանության ճանաչման ու դատապարտման ինչպես և հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքները: Սրանք սոսկ բարոյական բավարարության խնդիրնե՞ր են մեզ համար, թե՞ ավելին:**

- Ուզում եմ կանգ առնել մի քանի հանգամանքի վրա: Առաջինը, որ, այո՛, ամբողջ աշխարհով մեկ պետք է շարունակել և ուժեղացնել պայքարը հանուն ցեղասպանության ճանաչման, դատապարտման և վնասների փոխհատուցման: Սա ինձ համար ակնհայտ է, և հայ համայնքները տարբեր երկրներում հետևողական այս ուղղությամբ աշխատում են: Այդ աշխատանքը պետք է շարունակել: Ես կարծում եմ, որ Հայաստանը՝ որպես հայոց պետականություն, այս քաղաքականությունը պետք է ավելի ակտիվ հետապնդի: Սա միայն բարոյական խնդիր չէ, որովհետև շատ կարևոր է, որ մենք կարողանանք պատժի առաջ կանգնեցնել ցեղասպան պետությանը և նրա ժառանգորդ Թուրքիայի Հանրապետությանը: Պատիժը պետք է լինի հատուցման ձևով, ընդ որում, հատուցման ձևերը կարող են տարբեր լինել՝ բարոյականից, քաղաքականից, նյութականից, ֆինանսականից սկսած մինչև տարածքային: Սրանք բոլորն իրավական դաշտի խնդիրներ են: Պետք է դրանք հետապնդել և աշխատել դրանց վրա էլ ավելի մեծ եռանդով: Անդրադառնամ նաև երկրորդ հանգամանքին: Ես կարծում եմ, որ, շարունակելով այդ բնագավառում աշխատանքը, չպետք է մոռանալ Հայկական հարցի բուն էության մասին, որը հետևյալն է՝ հայոց պետականության վերականգնումը հայոց բնօրրանում՝ Հայկական բարձրավանդակում: Սա այն մեծ խնդիրն է, որը մեր ժողովրդի առջև կանգնած է: Դա, իհարկե, ո՛չ այսօրվա, ո՛չ վաղվա խնդիր է, բայց պետք է ուղենիշ լինի մեր ժողովրդի, մանավանդ երիտասարդության համար: Այս տարի Սևրի պայմանագրի հարյուրամյակն է, և ես կարծում եմ, որ այս տարին մենք պետք է օգտագործենք: Պետք է ոչ միայն գիտական միջոցառումներ լինեն, որ գիտական արժևորում տան այդ կարևոր իրադարձությանը, այլ նաև պետք է քաղաքական գնահատականներ տալ և ձգտել, որ այդ խնդիրները՝ կապված Սևրի հետ, կապված Հայկական հարցի հետ, դառնան օրակարգային մեր երիտասարդության համար: Ես շատ եմ դասավանդել և այսօր էլ դասավանդում եմ Երևանի տարբեր բուհերում և զգում եմ, որ երիտասարդության մոտ գիտելիքների պակաս կա այդ խնդրի վերաբերյալ: Եվ ես տեսնում եմ մեր սերնդի հիմնական խնդիրն է, որ Հայկական հարց ասված երևույթն իր դասական ձևով կարողանանք փոխանցել մեր երիտասարդ սերունդներին, որովհետև նրանք շարունակելու են պայքարը: Ես հույս ունեմ և հավատում եմ, որ այդ պայքարն ունի և ձեռք է բերում հաջողության հասնելու նոր հնարավորություններ՝ կապված այն իրադարձությունների հետ, որոնք հիմա տեղի են ունենում Մերձավոր Արևելքում: Այնպես որ ես երկու ուղղությամբ եմ մեր պայքարը տեսնում. մեկը՝ ցեղասպանության ճանաչում, դատապարտում և հատուցում ստանալու, մյուսը՝ հետազոտություններ իրավական, քաղաքագիտական, պատմագիտական հարթությունների վրա՝ կապված Հայկական հարցի, հայկական պահանջատիրության դասական այդ ձևի հետ, որը 19-րդ դարի վերջից, 20-րդ դարի սկիզբ եղել է եվրոպական դիվանագիտության, մեր ժողովրդի, մեր քաղաքական կուսակցությունների կարևորագույն խնդիրը: ■

Հարցազրույցը պատրաստեց Մարիամ Հովսեփյանը:

Հայոց ցեղասպանություն. պատճառները, նախորդող իրադարձությունները եւ հետեւանքների վերացման ուղղությամբ անելիքները

Անի Մելքոնյան
Հոդվածի հեղինակն ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը, ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ է:

Այս տարի լրանում է Հայոց ցեղասպանության 105-րդ տարելիցը, և թվում է, որ մեր պատմության ամենացավոտ ու ամենաողբերգական էջի մասին թե՛ հայ և թե՛ օտար շատ հեղինակների կողմից ասվել է ամեն ինչ կամ գրեթե ամեն ինչ:

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր է հռչակված ապրիլի 24-ը, որովհետև 1915թ. հենց այդ օրը Կ. Պոլսում ձերբակալվեցին ավելի քան 800 հայ մտավորականներ: Բայց 1915 թ. ապրիլին նախորդել են մի շարք կարևոր իրադարձություններ և երիտթուրքական կառավարության կողմից այդ ոճրագործության կազմակերպման առնվազն հինգ տարվա ժամանակահատված, եթե համարենք, որ Հայոց ցեղասպանության ծրագիրը ներկայացվել է Թալեաթի կողմից 1910 թ. Սալոնիկի կոմիտեի նիստում: Հայոց ցեղասպանության պատճառները թե՛ ազգային էին, թե՛ քաղաքական, թե՛ կրոնական և թե՛ պատմական ու մշակութային: Ուստի պատահական չէ, որ 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանությունն էականորեն տարբերվում էր Աբդուլ Համիդ II-ի կողմից կազմակերպված ջարդերից թե՛ իր ծավալներով, թե՛ նպատակներով, թե՛ իրականացման եղանակով և թե՛ համակարգված բնույթով, և պատահական չէին 1915 թ. օգոստոսի 31-ին Հենրի Մորգենթաուին Թալեաթի ասած հեգնական խոսքերը «Հայկական հարցը լուծելու առումով ես երեք ամսում ավելի շատ գործ կատարեցի, քան Աբդուլ Համիդը՝ երեսուն տարում»[1]:

1908 թ. հուլիսի 10 (23)-ի պետական հեղաշրջման արդյունքում «ազատություն, հավասարություն, եղբայրություն» լոզունգներով իշխանության եկան երիտթուրքերը և «Իթթիհատ վե Թերաքքի» («Միություն և առաջադիմություն») կուսակցությունը:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ի տապալումը երկրի բոլոր ժողովուրդների շրջանում մեծ խանդավառություն առաջացրեց, մանավանդ երբ երիտթուրքական հեղաշրջումից հետո հայերը ևս հռչակվեցին Օսմանյան կայսրության «իրավահավասար» քաղաքացիներ: Երիտթուրք պարագլուխները սկզբում հմտորեն թաքցնում էին իրենց ազգայնամոլությունը՝ ներկայանալով որպես Օսմանյան կայսրությունում ապրող բոլոր ժողովուրդների իրավունքների պաշտպան, սակայն կարճ ժամանակ անց ցույց տվեցին իրենց իրական դեմքը և աստիճանաբար սաստկացրին ազգային հալածանքները, ազգայնամոլությունը բարձրացրին պետական քաղաքականության աստիճանի՝ այդ հարցում հետ չմնալով Աբդուլ Համիդ II-ից: Հայկական նահանգներում կամայականություններն ու բռնությունները հիշեցնում էին Աբդուլ Համիդի օրերը: «Հետզհետէ անտանելի կը դառնային մանաւանդ համաթուրանական գաղափարախօսութեամբ «թիւրքճի» շարժման ճնշումները՝ օսմանեան պետութեան ոչ թուրք փոքրամասնութիւններուն նկատմամբ»[2]: Երիտթուրքերի պանթուրքիստական ծրագրերը պաշտպանում և խրախուսում էր նրանց դաշնակից Գերմանիան, որը ևս իր շահերն էր հետապնդում տարածաշրջանում, ընդ որում՝ ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական. վերջինները սերտորեն առնչվում էին Բեռլին-Բաղդադ երկաթուղու կառուցման Գերմանիայի նպատակների հետ: 1910 թ. Գերմանիան Բաղդադի երկաթուղու կառուցման հարցը կապում էր նաև Արևմտյան Հայաստանում իր տնտեսական և ռազմաքաղաքական ծրագրերի հետ: Գերմանիայի քաղաքական շրջանակներում գտնում էին, որ Հյուսիսարևելյան Անատոլիայում թուրքական միատարրություն ստեղծելու համար անհրաժեշտ է հայերին զանգվածաբար վերաբնակեցնել Բաղդադի երկաթուղու շինարարության տեղամասերում, որով հնարավոր կլիներ լուծել երկու կարևոր հարց. մի կողմից՝ երկաթուղու կառուցումը կապահովվեր ձեռներեց ու որակյալ բանվորական ուժով, մյուս կողմից՝ կթուլանար ռուսական ազդեցությունը Արևմտյան Հայաստանում: Այսպես՝ հայտնի գերմանացի քաղաքագետ Պաուլ Ռորբախը գտնում էր, որ «...պետք է Արևմտյան Հայաստանից դուրս հանել բնիկ հայերին և այնտեղ վերաբնակեցնել Թրակիայից և Ռուսաստանից բերած մահմեդականների: Այդ դեպքում Հայաստանը մեկ հարվածով կանջատվի Ռուսաստանից»[3]: Ռորբախն առաջարկում էր արևմտահայերին գաղթեցնել Միջագետք, ինչը, նրա կարծիքով, կնպաստեր «ճանապարհի տնտեսական զարգացմանը»: Գերմանացիների այս տեսակետը հիմք դարձավ երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության համար[4]:

Նույն՝ 1910 թ. «Իթթիհատ»-ի Սալոնիկի կոմիտեի գաղտնի նիստում Թալեաթը ներկայացնում է հայերի և կայսրության մյուս քրիստոնյա ժողովուրդների ցեղասպանության ծրագիրը. «Դուք գիտեք, որ սահմանադրությամբ մահմեդականների և քրիստոնյաների հավասարություն է հաստատվել, բայց դուք բոլորդ միասին և ամեն մեկդ առանձին գիտեք և զգում եք նաև, որ դա անիրականանալի գաղափար է: Շարիաթը, մեր անցյալի ամբողջ պատմությունը, հարյուրավոր մահմեդականների զգացմունքները և նույնիսկ իրենց՝ քիստոնյաների զգացումը, որոնք համառորեն դիմադրում են օսմանականացման ամեն մի փորձի դեմ, անհաղթահարելի պատնեշ են իսկական հավասարության համար: Ուստի հավասարության մասին խոսք անգամ չի կարող լինել մինչև այն ժամանակ, քանի դեռ մենք հաջողությամբ չենք պսակել

Սև ծով
Միջերկրական ծով
ՌՈՒՍԱՍՏԱՆ
ԹՈՒՐՔԻԱ
ԻՐԱՆ
ՍԻՐԻԱ
ԻՍՐԱԵԼ
ԵԳԻՊՏՈՍ
ԼԻԲԻԱ
ՍՈՒԴԱՆ
ՀՈՒՆԱՍՏԱՆ
ՍԱՀԱՐԱ
ՍՈՄԱԼԻ
ԱԼՋԻՐ
ՄԱՐՈԿՈ
ԱՖՂԱՆԻՍՏԱՆ
ՊԱԿԻՍՏԱՆ
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ
ՕՄԱՆ
ԱՐԱԲԱԿԱՆ ԾՈՎԱՓԵՂԵՐ

Ազգային բյուրոն, որի անդամների հիմնական մասը դաշնակցականներ էին: Ազգային բյուրոն իր վրա է վերցնում կամավորական ջոկատների կազմակերպման աշխատանքները: 1914 թ. աշնանը կազմակերպվում են կամավորական չորս ջոկատներ: Առաջինի հրամանատարն էր Անդրանիկը, երկրորդինը՝ Դրոն, երրորդինը՝ Համազասպը, չորրորդինը՝ Քեռին: Հետագայում կազմավորվում է նաև հինգերորդ կամավորական ջոկատը՝ Վարդանի (Սարգիս Մեհրաբյան) հրամանատարությամբ: Ավելի ուշ կազմավորվում են ևս երեք ջոկատներ:

Արևմտահայերը՝ որպես օրինապահ քաղաքացիներ, փորձում էին հնարավորինս ենթարկվել կառավարության հրահանգներին. «Հայերի օրինապահությունը, սակայն, նրանց չփրկեց սպասվելիք աղետներից: Դա այդպես էլ պետք է լիներ, քանի որ հայերը ինչպես էլ իրենց պահեին, միևնույն է, իթթիհադականներն արդեն վերջնական որոշում էին կայացրել նրանց իսպառ բնաջնջելու մասին» [13]:

Իթթիհատականները, ինչպես արդեն ասացինք, հայերի բնաջնջման որոշումը կայացրել էին դեռևս Սալոնիկի 1910-1911 թթ. ժողովների ժամանակ. «Այսպիսով Պանթյուրքիզմը դառնում է Թուրքիայի քաղաքականություն: Սալոնիկի 1910 և 1911 թվականների համաժողովների որոշումները՝ կայսրությունը օսմանցիականացնելու և մահմեդականացնելու մասին, նշանակում էր հայ ժողովրդի ցեղասպանության ծրագրի ընդունում»[14]: Պանթուրքիզմի ծրագրի իրականացման ճանապարհին «սեպի պես խրված» էր Հայաստանը, և հայ ժողովուրդը պետք է դառնար այդ ծրագրի առաջին զոհը: Սա էր գլխավոր պատճառը, որ «Իթթիհատը» առանձնահատուկ թշնամությամբ էր լցված հայ ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ, որը համարում էր առավել վտանգավոր Օսմանյան կայսրության համար, իսկ հայ ժողովուրդը երիտթուրքերի ընկալմամբ խոչընդոտելու էր «թուրք ազգի և էթնիկ թուրքական պետության» ձևավորումը. «Կայսրության նկարագիրը պետք է լինի մահմեդական: Պետք է ապահովվի մահմեդական հաստատությունների և ավանդությունների հանդեպ հարգանքը: Պետք է մերժել այլացեղ ազգությունների իրենց մեջ կազմակերպվելու իրավունքը…»[15]:

Երիտթուրքական համագումարի որոշման այսպիսի ձևակերպումը նշանակում էր, որ արևմտահայության մահվան վճիռն արդեն կայացված էր: Եվ ինչպես Թուրքիայի ներքին գործերի նախարարության (Թալեաթի ստորագրությամբ) հետագայում արձակված հրամանագրերից մեկում ենք կարդում. «Հայերու համար Թուրքիոյ հողին մէջ ապրելու, աշխատելու պէս իրաւունքներ ամբողջովին ջնջուած են և այս մասին կառաւարութիւնը, բովանդակ պատասխանատուութիւնը ստանձնելով, հրամայած է նոյն իսկ օրօրոցի մանուկները չթողուլ…»[16]: Թալեաթի ասած «Թուրքիոյ հողը» Արևմտյան Հայաստանն էր, որը թուրքացնելու համար նրա բնիկ՝ հայ ժողովրդին բնաջնջելու որոշում էր կայացվել պանթուրքիզմը որդեգրած երիտթուրքերի կողմից, քանի որ «Ամբողջ թուրք պատմութեան ժառանգներն էին անոնք: Իթթիհատէն առաջ՝ երկրին մէջ գոյութիւն առած իշխանութեան բոլոր ձևերուն, ամենէն ազատականներուն, ինչպէս ամենէն բարբարոսներուն օրով միշտ տեղի ունեցեր էին անոնք» [17]:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին արդեն ձևավորվել և ավարտուն տեսք էր ստացել երիտթուրքերի պանթուրքիստական գաղափարախոսությունը. «1908-1914 թթ. երիտթուրքական պետական ու քաղաքական կառավարման մոտավորապես վեց տարիների ընթացքում որոշակի դարձավ նրանց թուրքիստական ու պանթուրքիստական գաղափարախոսությունը…

Բեռլինում դաստիարակված երիտասարդ թուրքերը Ալթայ գնալու կումիս խմելու երազներ էին հյուսում: Ըստ նրանց՝ Թուրքիայի տիրապետությունը պետք է տարածվեր մինչև թուրքերի նախահայր Էրթողրլուի ծննդավայրը, մինչև գորշ գայլի հայրենիքը՝ Սինցզյանի անապատները»[18]: 1908-1914 թթ. հայ ազգի պատմության բարդ ու հակասական մի ժամանակաշրջան էր, երբ անգամ ազգային քաղաքական կուսակցությունները մի քանի անգամ փոփոխեցին իրենց մարտավարությունն ու օրակարգային խնդիրները՝ փորձելով մե՛ր թթ խորհրդարանական լեգալ պայքարով, մե՛ր թթ Անտանտի դաշնակիցների օգնությամբ փրկել հայ ժողովրդին սպասվող արհավիրքից: Սակայն պետք է ասել, որ հայ քաղաքական կուսակցությունների ջանքերը, փաստորեն, ապարդյուն անցան, քանի որ նրանք թե՛ քաղաքական և թե՛ ռազմական առումով անհավասար պայքարի մեջ էին մտել իրենց ժողովրդի համար խիստ աննպաստ պայմաններում, բայց այլ ելք էլ չկար. պայքարի մեջ չմտնելը կնշանակեր հաշտվել հայ ժողովրդի մահվան դատավճռի հետ, և Կովկասյան ճակատում հայ կամավորների ներկայությունը պայմանավորված էր հենց արևմտահայությանը փրկելու ձգտումներով: Իսկ ինչո՞ւ պայքարը ծավալվեց Կովկասյան ճակատում և ոչ թե Օսմանյան կայսրության ներսում: Պատճառն այն էր, որ տղամարդկանց զորակոչել էին օսմանյան բանակ, զինաթափել և սպանել, իսկ Կովկասյան ճակատի փոքրաթիվ հայ կամավորներն առաջ էին շարժվում դաշնակից Ռուսաստանի զորքերի հետ:

Հարկ է նշել նաև, որ Ռուսաստանը, փաստորեն, կարողացավ հայերին ներքաշել պատերազմի մեջ, օգտվել հայկական ռազմական ուժից, սակայն վճռորոշ պահերին ռուսական զորքերը նահանջում էին՝ ռազմաճակատը թողնելով փոքրաթիվ հայ կամավորների պաշտպանությանը: Կովկասյան ճակատում հայ կամավորների ներկայությունն ավելի գրգռեց արդեն վաղուց Հայոց ցեղասպանության ծրագիրը մշակած երիտթուրքերին, որոնք հմտորեն օգտագործեցին այդ հանգամանքը և իրենց ցեղասպանական քաղաքականությունն արդարացնելու համար ստեղծեցին հայության իբրև թե խաղացած հինգերորդ շարասյան դերի մասին թեզը: Օգտագործելով Կովկասյան ճակատում հայ կամավորների ներկայությունը՝ թուրք ազգայնամոլները. «…ամենուրեք մեղադրանքներ

էին տեղում հայ քաղաքական կուսակցությունների, այդ թվում՝ դաշնակցության վրա...»[19]: Երիտթուրքերի նմանատիպ հայտարարություններն ու պնդումներն ընդամենը պատրվակ էին բացատրելու համար իրենց կառավարության հայահալած քաղաքականությունն ու մոտ ապագայում իրենց կողմից իրականացվելիք հայկական կոտորածների «դրդապատճառները»: «Արդեն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրության կառավարողներն իրենց տրամադրության տակ ունեին մարդատյաց գաղափարների մի հզոր զինանոց: Այդ զինանոցի բոլոր զենքերը, առավել ևս իսլամիզմն ու պանիսլամիզմը, թուրքիզմն ու պանթուրքիզմը դժբախտ ճակատագրի բերումով ամենից առաջ ուղղվել էին հայ ժողովրդի դեմ»[20]:

Առաջին համաշխարհային պատերազմը ոչ միայն երիտթուրքերի համար իրենց պանթուրքիստական ծրագրերն իրագործելու հնարավորություն ստեղծեց, այլև շեղեց գերտերությունների ուշադրությունը հայկական բարենորոգումների ծրագրից. «Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի ջանքերով ընդունված հունվարի 26-ի համաձայնագիրը՝ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու մասին, օրակարգից հանեց Առաջին համաշխարհային պատերազմը»[21]: Արդեն 1914 թ. վերջերից սկսած՝ իրադարձություններն ընթացան ի վնաս հայության. ՀՅ Դաշնակցության Արևելյան բյուրոն զրկվեց Կ. Պոլսի և «Երկրի» ղեկավարության հետ շփումներից, ցիրուցան եղավ Հայաստանի բյուրոն, որի անդամներից ոմանք՝ Ակնունի, Վռամյան, Սարգիս Բարսեղյան, Ռուբեն Զարդարյան, ղեկավար մի շարք գործիչների՝ Վանա Իշխանի, Հարություն Շահրիկյանի, Գարեգին Խաժակի, Հրաչի, Վարդգեսի, դոկտոր Կ. Փաշայանի հետ 1915 թ. Հայոց ցեղասպանության առաջին զոհերից էին:

1915 թ. ապրիլի 24-ին սկիզբ առած ձերբակալություններով (հիմնականում՝ Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսում) և դրանց հետևած հարյուրավոր հայ մտավորականների սպանություններով սկսվեց հայ բնակչության բնաջնջման առաջին փուլը:

1915 թ. ապրիլի 24-29-ը թուրքական իշխանությունները ձերբակալեցին 800-ից ավելի հայ մտավորականների, որոնց մեծ մասը դաժանորեն սպանդի ենթարկվեց: Իթթիհատականները չխնայեցին նույնիսկ

խորհրդարանի պատգամավորներ Գրիգոր Զոհրապին և Վարդգես Սերենկյուլյանին: Ավելին՝ Թալեաթի հրամանով Գրիգոր Զոհրապն սպանվեց առանձնակի դաժանությամբ:

Արևմտահայությանը զրկելով կազմակերպող ու պաշտպանող ուժերից, և մեկուսացնելով արտաքին աշխարհից՝ թուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ երրորդ քայլին՝ անպաշտպան ու անօգնական կանանց, ծերունիների, երեխաների զանգվածային ջարդերին ու բռնագաղթին: Սա իր դաժանությամբ մարդկության պատմության մեջ նախադեպը չունեցող ցեղասպանություն էր, որին զոհ գնաց 1,5 մլն մարդ: Ցեղասպանություն, որի նպատակը հայ ժողովրդի զանգվածային բնաջնջումն ու հայրենազրկումն էր:

Ցեղասպաններին, սակայն, Արևմտյան Հայաստանի մի շարք բնակավայրերում անակնկալ էր սպասվում. արևմտահայության մի հատվածը վճռել էր՝ եթե մեռնել, ապա զենքը ձեռքին, մարտիկի պես կռվելով: ՀՅԴ-ն ձերբակալությունից մի կերպ խույս տված իր մի խումբ գործիչների ջանքերով Հայոց ցեղասպանության այդ օրերին մի շարք հայաբնակ վայրերում՝ Վանում, Շապին-Գարահիսարում, Ուրֆայում (Եդեսիա), Տարոն-Սասունում և Մուսա լեռան վրա, կարողացավ կազմակերպել ինքնապաշտպանական ուժեր և դիմադրություն ցույց տալ ոճրագործներին, իսկ հայոց հինավուրց մայրաքաղաքներից Վանում Արամ Մանուկյանի գլխավորությամբ ստեղծել ազգային իշխանություն: Վանի անկախությունը, ցավոք սրտի, տևեց ընդամենը 70 օր. 1915թ. հուլիսին ռուսական զորքերը նահանջեցին Վանից՝ իրենց հետ տանելով նաև զենք-զինամթերքը, և վանեցիները ստիպված էին հետևել նրանց: Սակայն Վանի կարճատև անկախության ու իր նահանգապետության 70 օրերի ընթացքում Արամ Մանուկյանը մեծ փորձ ձեռք բերեց, որը նա կիրառեց արդեն Երևանի նահանգում իր պետականաստեղծ գործունեության ընթացքում: Եվ չնայած ինքնապաշտպանության դիմած բնակավայրերն ի վերջո հայաթափվեցին, իսկ փրկված բնակիչներն ապաստան գտան Արևելյան Հայաստանում, այնուամենայնիվ չենք կարող չարձանագրել այն փաստը, որ այդ ինքնապաշտպանական կռիվների շնորհիվ հարյուր հազարավոր հայեր փրկվեցին անխուսափելի թվացող բնաջնջումից, և արդեն 105 տարի անց ինքնապաշտպանական այդ մարտերը մեզ համար ոչ միայն պատմական իրողություն են ու ակնածանքի արժանի հերոսականություն, այլև մեծ դաս, որովհետև Վանում, Շապին-Գարահիսարում, Ուրֆայում (Եդեսիա), Տարոն-Սասունում և Մուսա լեռան վրա կռվող մեր նախնիներն իրենց օրինակով մեզ ցույց տվեցին, որ փրկության հույսը պետք է դնել միայն սեփական ուժերի վրա և ճակատագրական պահերին ապավինել միայն զինված դիմադրությանը...

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Հայոց ցեղասպանությունը թուրքական պետության կողմից ծրագրվել ու կազմակերպվել է ամենաուշը 1910 թ. Սալոնիկի ժողովում, որի նպատակը թուրքական նկարագիր ունեցող Թուրքիա պետության կազմավորումն

ու պանթուրքիզմի գաղափարախոսության իրականացումն էր: Այդ ճանապարհին որպես գլխավոր խոչընդոտ Թուրքիան տեսնում էր Հայաստանն ու հայ ժողովրդին, ընդ որում, պանթուրքիզմի ծրագրերում նաև Արևելյան Հայաստանի և արևելահայության բնաջնջումն էր, որին, սակայն Թուրքիան չհասավ. Մայիսյան հերոսամարտերը կտրեցին պանթուրքիզմի ճանապարհը:

Ճանաչում, դատապարտում և հատուցում

Թուրքիան փորձեց Հայկական հարցը լուծել արևմտահայության բնաջնջմամբ, սակայն փաստացի իր վերջնական նպատակին նա չհասավ, որովհետև աշխարհասփյուռ հայությունը Հայկական հարցը վերածեց Հայ դատի և պայքար սկսեց իր խախտված իրավունքների վերականգնման համար: Երկարատև ու անզիջում այդ պայքարի շնորհիվ այսօր երկու տասնյակից ավելի պետություններ և մի շարք միջազգային կազմակերպություններ ճանաչել ու դատապարտել են Հայոց ցեղասպանությունը, իսկ Հայ դատի հանձնախմբերը լծվել են պայքարի հաջորդ փուլին՝ հատուցման պահանջատիրությանը, ինչը շատ ավելի դժվար և աշխատատար գործընթաց է, և դա՝ նաև այն պատճառով, որ ներկայիս Թուրքիան հրաժարվում է Հայոց ցեղասպանությունը ճանաչելուց: Սակայն հայության և նրա շահերը ներկայացնող Հայ դատի հանձնախմբերի կողմից փոխհատուցման հասնելու պահանջի բավարարումն անհնար չէ, եթե իհարկե Հայաստանի Հանրապետությունը ևս հանդես գա պահանջատիրական դիրքերից և հստակ մշակված պետական քաղաքականությամբ հատուցման պահանջ դնի Թուրքիայի Հանրապետության առջև, նամանավանդ եթե հաշվի առնենք, որ Հայաստանի առաջին հանրապետության կառավարությունը մեկ անգամ արդեն դրել է նման պահանջ և հասել Սևրի պայմանագրի ու Վիլսոնյան իրավարար վճռի փաստին, ինչը նշանակում է, որ միջազգային կառույցները դեռևս 100 տարի առաջ են ճանաչել հայ ժողովրդի իրավունքներն Արևմտյան Հայաստանում: Եվ քանի որ Հայաստանի ներկայիս հանրապետությունը Առաջին հանրապետության իրավահաջորդն է, հետևաբար իրավունք ունի պահանջելու Թուրքիայի Հանրապետության կողմից օկուպացված իր տարածքների վերադարձը: Նման պահանջ ներկայացնելու համար, սակայն, Հայաստանի Հանրապետությունը պետք է մտածի թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական առումով, գերտերությունների հետ փոխհարաբերությունների մեջ, առավել մեծ կշիռ ներկայացնող գործոն դառնալու մասին, քանի որ քաղաքական տեսանկյունից մի բան է Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը որպես մարդկության դեմ կատարված հանցագործություն, մեկ այլ բան է դրա իրավական լուծման հեռանկարով շահագրգռված լինելը, քանի որ այդ իրավական լուծումը կարող է ուղղակիորեն իր անդրադարձն ունենալ մի շարք պետությունների քաղաքական շահերի վրա:



1915 թվականի ապրիլի 24-ին ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի արձակած հրամանը:

Օգտագործված Աղբյուրներ

1- Henry Morgenthau, American Ambassador at Constantinople from 1913 to 1916, Garden City New York doubleday, page & company, 1918, p. 342.
2- Տասնապետեան Հր., Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ. Ընդհ. Ժողով (1890-1924), Աթենք, 1988, էջ 103:
3- www.armeniangenocide100.org
4- www.armeniangenocide100.org.
5- Անումյան Մ., Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի, Եր., 2011, էջ 4:
6- Ներսիսյան Մ., Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Եր., 1991, էջ 9:
7- Նույն տեղում, էջ 267:
8- Անումյան Մ., նշվ. Աշխ., էջ 26-27:
9- Սիմոնյան Հր., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը., Եր., 1986, էջ 325:
10- Նույն տեղում, էջ 327:
11- www.armeniansgenocide.am.
12- Նույն տեղում:
13- Սիմոնյան Հր., նշվ. Աշխ., էջ 298:
14- Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, բովանդակությունը, ծագումը., Եր., 1995, էջ 38-39:
15- Նույն տեղում, էջ 38:
16- Աստոնյան Ա., Մեծ ոճիրը, Բոստոն, 1921, էջ 35:
17- Նույն տեղում, էջ 268:
18- Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հ. Ա, Եր., 1982, էջ 208:
19- Սիմոնյան Հր., նշվ. Աշխ., էջ 298:
20- Նույն տեղում, էջ 286:
21- Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 31:

Զինվորագրումից ոչնչացում. հայերի ծառայությունն օսմանյան բանակում

Անի Ոսկանյան

19-րդ դարում իրականացվող լուրջ փոփոխությունների համատեքստում բարեփոխումների է ենթարկվում նաև Օսմանյան կայսրության ռազմական համակարգը: 1843 թ. սեպտեմբերին ընդունվում է նոր օրենք, համաձայն որի՝ օսմանյան բանակը վերակազմավորվում է եվրոպական բանակների օրինակով[1]: 1864 թ. Կ. Պոլսում միայն մուսուլմանների համար սկսում է գործել Փանքալթի զինվորական վարժարանը (Հարբիե): Սուլթան Աբդուլ Ազիզ II-ի (1861-1876) հրամանով՝ որպես փորձ հինգ հայ երտասարդներ (Գաբրիել Էքնայան, Կարապետ Բարաղամյան, Սիմոն Տատյան, Հովյան և Սինարյան) ընդունվում են վարժարան: Նրանց մտադիր էին մինչև հազարապետի (բինբաշի) աստիճանի բարձրացնել, սակայն հետո հրաժարվում են այդ մտադրությունից, և նրանց հարյուրապետության (յուզբաշի) աստիճանից բարձր կարգավիճակ չի շնորհվում[2]:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին առաջանում է ոչ մուսուլմաններին զինվորագրելու հարցը: Հաջորդ տարիների ընթացքում ևս այն շարունակում է մնալ օրակարգում, սակայն որևէ լուծում չի ստանում գուցե այն պարզ պատճառով, որ Սուլթան Աբդուլ Համիդ II-ը (1876-1909) ոչ մուսուլման ժողովուրդների զինվորագրությունն ինքնասպանության հավասար բան էր համարում[3]:

1908 թ. օսմանյան սահմանադրության վերահաստատումից հետո կայսրության՝ իսլամ չդավանող ժողովուրդները պահանջում են զինվորագրվելու իրավունք, սակայն նրանց զինվորագրման հարցում օսմանյան կառավարությունը տատանվում էր: Զինվորագրության հարցը հայկական շրջանակներում ևս միանշանակ չի ընդունվում: Ըստ օսմանյան բանակի հայազգի ապա Գ. Սյուրմենյանի՝ «պահպանողական տարրը հակառակ էր զինուորագրութեան, իսկ երիտասարդութիւնը կողմնակից էր»[4]:

1910 թ. օսմանյան խորհրդարանը լուրջ քննարկումներից հետո օրենք է ընդունում իսլամ չդավանողներին զինվորագրելու մասին: 1910 թ. օգոստոսին և սեպտեմբերին հրատարակվում է զորակոչի հրամանը[5]:

Զինվորագրության իրավունքի կարևորությունը արևմտահայերի համար արծարծվում է ժամանակի տարբեր թերթերի բազմաթիվ հրապարակումներում: Այսպես՝ «Ազատամարտը» գրում էր, որ քրիստոնյաների զինվորագրությունը Սահմանադրության մեծագույն հաղթանակներից մեկն է, և հայ ժողովուրդը պարտավոր է գոհ լինել նորակոչ զավակների առաջին զինվորական համազգեստով և առաջին զենքով[6], իսկ «Բիւզանդիոն»-ը, քննարկելով հարցը, արձանագրում է. «Զինվորագրութեան իրավունք ոչ միայն զենքի

Սարգիս բեյ Թորոսյանի լուսանկարը

գործածություն է և մարզանք է, այլև սրանով է միայն, որ պիտի փրկուինք կեավուրի զգացումներեն և հետևաբար անոր խղճուկ կերպարանքեն»[7]: Թերթերից բացի՝ օրենքին անդրադարձել են նաև տարբեր մտավորականներ՝ հրատարակելով գրքեր ու բազմաթիվ գրքույկներ ոչ միայն Օսմանյան կայսրությունում, այլև նրա սահմաններից դուրս: «Զինուորագրութեան օրէնքն ընդունուեց: Ամբողջ Օսմանեան երկիրը պիտի ներկայացնէ այսուհետև մի ձոյլ բանակ, կազմած իր բոլոր կենսատու տարրերից, առանց խտրութեան ցեղի, կրօնի ու դաւանանքի»,- գրում էր Միքայել Վարանդյանը[8]:

Քաջ գիտակցելով զինվորագրության կարևորությունն ու դրա ընձեռած հնարավորությունները՝ մի շարք հայ երիտասարդներ դիմում են զինվորական բարձրագույն հաստատություններ: 1910 թվականից սկսած՝ նրանք Հարբիեի ուսանողներ էին, արդեն 1912 թ. Ամռանը՝ շուրջ 900 շրջանավարտների շարքերում՝ դառնալով օսմանյան բանակի առաջին հայ սպաները[9]:

Հայերի զինվորագրությանը հաջորդած պատերազմներն իսկական փորձություն էին նորակոչիկների համար, որը նրանք հաղթահարում են զինվորական պատվախնդրությամբ: Տրիպոլիական ու բալկանյան պատերազմների ժամանակ հայ զինվորները իրենց դրսևորում են որպես քաջարի ու անձնազոհ մարտիկներ և արժանանում բարձր հրամանատարական կազմի հիացմունքին ու գովեստին[10]:

Ծառայության առաջին տարիներին իրենց պարտականությունները կատարող հայ սպաներն ու զինվորները չէին էլ կասկածում, որ կարճ ժամանակ անց զինաթափվելու, ապա ոչնչացվելու են նույն պետության կողմից իրենց հետ նույն հրամանագրով զորակոչված

զինակիցների միջոցով:

1914 թ. օգոստոսի 2-ին՝ Գերմանիայի հետ քաղաքական և ռազմական գաղտնի համաձայնագրի ստորագրումից հետո, իթթիհատական վարչակարգը հայտարարում է համընդհանուր զորահավաք: Հայերը բանակ են զորակոչվում 3 փուլով: Սկզբում զորակոչի են ենթարկվում 20-45, այնուհետև՝ 15-20, և վերջում՝ 45-60 տարեկան տղամարդիկ:

1914 թ. Առաջին աշխարհամարտի նախօրեին Փանքալթի զինվորական վարժարանը ավարտում են ևս 8 հայ սպաներ՝ շատախցի Տիգրան Բաղդասարյանը, Արտաշես Ամիրյանը, վանեցի Մկրտիչ Շալճյանը, Մկրտիչ Խանճյանը, երզնկացի Գրիգոր Սարաֆյանը, Շահեն Թաթիկյանը, կարնեցի Վահան Փաստրմաճյանը, բաղեշցի Մեսրոպ Քաջբերունին[11]: Իսկ պատերազմի տարիներին բանակի կարիքները հոգալու համար վարժարանը ստիպված է լինում առավել արագ շրջանավարտներ տալ, որոնց մեջ կրկին կային բազմաթիվ հայ սպաներ ու ենթասպաներ[12]:

1915 թ. հունվարին Էնվեր փաշայի 120.000-անոց բանակը ջախջախվում է Սարիղամիշի ճակատամարտում: Թուրքական սպայակույտը գերությունից փրկվում է հայ զինվորների հերոսական դիմադրության շնորհիվ[13], իսկ Էնվեր փաշան փրկվում է սեբաստացի սպա Հովհաննես Ակինյանի շնորհիվ, որը, ծանր վիրավորվելով, ավելի ուշ մահանում է[14]: Ինչպես նշում է Գ. Սյուրմենյանը, պատերազմի սկզբին Կովկասյան ճակատում մոտ 100 հայ սպա, զինվորական բժիշկներ և դեղագործներ կային: Միայն Հարբիեն ավարտած 16 հայ սպաներից 12-ը գտնվում էին հենց Կովկասյան ճակատում, որոնցից 5-ը սպանվում են (վերոնշյալ Հովհաննես Ակինյանը, հեծելազորի սպա Հարությունը, որը սպանվում է չեթեների կողմից Դերջանի մոտ, Շահեն Թաթիկյանը, որը սպանվում է Երզնկայի ոստիկանատանը, Մեսրոպ Քաջբերունին, որը Սեբաստիայում կախաղան է բարձրացվում): 2 սպա (Գալուստ Սյուրմենյան և Տիգրան Բաղդասարյան՝ Սարիղամիշի ճակատամարտի ժամանակ) վիրավորվում է, 3-ը (Գառնիկ Նավասարդյան, Արտաշես Ամիրյան, Մկրտիչ Խանճյան)՝ գերի ընկնում[15]:

Սարիղամիշի պարտությանը հաջորդում է գլխավոր հրամանատար և պատերազմական նախարար Էնվեր փաշայի պաշտոնական հրամանը՝ կայսերական բանակում ծառայող բոլոր հայ զինվորականներին զինաթափելու և ոչնչացնելու, հայ սպաներին ձերբակալելու մասին, որը տրվում է 1915 թ. փետրվարի 23-ին[16]: Ռուսական կայսրության արտաքին գործերի նախարարությանն ուղղված 1915 թ. ապրիլի 3-ի դիվանագիտական թիվ 385 հեռագրում ևս ասվում է, որ հայ զինվորներին զինաթափելու մասին սուլթանական հրահանգ կա, իսկ մարտի 15-ի թիվ 164 հեռագրում արդեն հաղորդվում է, որ զորամասերում ծառայող բոլոր հայերը զինաթափված են[17]:

Օսմանյան բանակի հայ զինվորներին զինաթափելուց հետո ընդգրկում են բանվորական (amele taburlari), բեռնափոխադրող (hamal taburlari), շինարարական (in-

şaat taburlari) և երկրագործական գումարտակներում (ziraat taburlari): Միաժամանակ սկսվում է նաև հայ սպաների ձերբակալությունն ու մեկուսացումը:

Օսմանյան բանակի հայ զինվորների զինաթափման հրամանին գրեթե զուգահեռ՝ 1915 թ. մայիսի 18-ին, Էնվեր փաշայի կողմից բանակի սպա, Էրթողրուլի բերդամասի ծանրհրետանային վեցերորդ գումարտակի «Քափ Հիլ» հրետանային մարտկոցի հրամանատար Սարգիս բեյ Թորոսյան արժանանում է բանակի երախտագիտության՝ պարգևատրվելով օսմանյան կայսերական բանակի Պատերազմի շքանշանով: Կապիտան Թորոսյանը 1915 թ. փետրվարի 19-ին ու 25-ին Դարդանելի նեղուցի վրա կատարած հարձակման ժամանակ բացառիկ խիզախությամբ դիմակայել է թշնամու ռազմանավերին՝ խորտակելով մեկը և անդառնալի վնասներ հասցնելով մյուսին: Այնուհետև՝ մարտի 18-ի Դարդանելի նեղուցի հարձակման ժամանակ, խորտակել է ևս մեկ ռազմանավ[18]:

Իսկ Կոնյայի եպիսկոպոսին ուղղված նամակում դեռ 1915 թ. սկզբին Էնվեր փաշան նշում է, որ օսմանյան բանակի հայ զինվորները բարեխղճորեն կատարում են իրենց պարտականությունները ռազմական գործողությունների թատերաբեմում[19]:

Ս. Թորոսյանի պարգևատրումը, կարծում ենք, անխուսափելի էր, քանի որ նրա սխրանքը հատկապես Սարիղամիշի պարտությունից հետո կանխում է համաձայնականների մուտքը Կ. Պոլիս, Իսկ Կոնյայի եպիսկոպոսին ուղղված նամակը՝ ընդամենը անհրաժեշտ ձևականություն էր: Ինչպես նշում է պատմաբան Հ. Ղազարյանը, դեռևս «Իթթիհաթ»-ի Սալոնիկի համաժողովում որոշված, ապա խորհրդարանի կողմից վավերացված ոչիսլամդավանող ժողովուրդների զինվորագրության բուն նպատակը հայրենիքի սահմանների պաշտպանությունից ավելի ոչ թուրք զինվորներին բանակում վերահսկողության տակ վերցնելն էր՝ դյուրացնելու համար նրանց հետագա բնաջնջումը զինվորական միջոցներով[20]:

Զինաթափությանը զուգահեռ շրջանառվում էր նաև

հայերի դասալքության հարցը, և այն հաջողությամբ օգտագործվում էր ընդդեմ հայերի: Հաճախ լուրեր էին տարածում, որ հայ բնակչությունը դիմադրում է զորակոչին, կամ հայ զինվորները լքում են դիրքերն ու միանում հակառակորդի բանակին: Հայերի կողմից դասալքության դեպքեր իսկապես կային. հայ զինվորները փորձում էին փրկվել սպանվելու անխուսափելի հեռանկարից: Հատկանշական է նաև 1915 թ. ապրիլի 16-ին Վանի նահանգապետ Ջևդեթ բեյին դասալքության հարցի շուրջ ներկայացված փաստաթղթերից մեկում արված այն դիտողությունը, թե դասալիք չի կարող համարվել այն զինվորը, որը զենք չունի[21]:

Զորակոչ-զինաթափում-ոչնչացում՝ այս ձևաչափով էր հիմնականում իրականացվում հայ տղամարդկանց սպանդը Հայոց ցեղասպանության տարիներին: Հայ զինվորականների ոչնչացման մասին բազմաթիվ վկայություններ կան նաև տարբեր երկրների արխիվային փաստաթղթերում և դիվանագիտական հաղորդումներում ու հեռագրերում: Էնվեր փաշայի մտերիմ ընկեր, Թուրքիայում Գերմանիայի ծովային կցորդ, կապիտան-լեյտենանտ Հանս Հումանը Օսմանյան կայսրության՝ պատերազմի մեջ մտնելուց երկու շաբաթ առաջ 1914 թ. հոկտեմբերի 16-ի զեկուցման մեջ հաղորդում էր, որ հայերից և հույներից արդեն բանվորական գումարտակներ էին ձևավորվում[22]: 1915 թ. հունվարի 26-ին Ավստրո-Հունգարիայի դիվանագիտական հաղորդագրություններից մեկում մասնավորապես ասվում է. «Շատ հաճախ հայ զինվորներին ուղարկում են ռազմաճակատի առաջին գիծ, որպեսզի նրանք այնտեղ սպանվեն»[23]: Գերմանացի նշանավոր զինվորական ու դիվանագետ, 1915 թ. Էրզրումի փոխհյուպատոս Շոյբներ-Ռիխտերը 1915 թ. օգոստոսի 5-ին Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Հոհենլոհե-Լանգենբուրգին տեղեկացնում է, որ հայերի տեղահանումն ավարտված է, միաժամանակ նշելով, որ կառավարությունն ու զինվորական իշխանությունները վերջիններիս դեմ կիրառեցին անասելի դաժան միջոցներ: Բոլոր այն հայերը, որոնք դեռևս զենքը ձեռքներին ծառայում էին, դուրս հանվեցին բանակից և ընդգրկվեցին աշխատանքային գումարտակներում[24]:

Խարբերդում ամերիկյան հյուպատոս Լեյսլի Դեյվիսի 1915 թ. հուլիսի 11-ի հաղորդումը նույնպես ներկայացնում է հայ զինվորականների աքսորն ու բանտարկությունը[25], իսկ Օսմանյան կայսրությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպան Հենրի Մորգենթաուն գրում է. «Շատ հաճախ հայ զինվորականներին ոչնչացնում էին խմբերով, քանզի սառնասիրտ կերպով նրանց գնդակահարելը դարձել էր ամենօրյա գործ»[26]:

Ըստ պատմաբան Լ. Զորմիսյանի՝ Առաջին աշխարհամարտի չորս տարիների ընթացքում օսմանյան բանակում մոտ 250.000 հայ զինվոր է սպանվել. «....ոչ թե պատերազմական ճակատին վրայ, ուր հայ զինուորներ էին գտնուած, այլ թիկունքին ամէնէ թապուրներուն մէջ»[27]:

Օսմանյան բանակ զորակոչված հայ զինվորականները զանգվածաբար սպանվում են այն պետության կողմից, որը և զորակոչել էր նրանց: Պարզ ճշմարտություն է, որ պատերազմական իրավիճակում մարդկային ռեսուրսը հաղթանակի կարևոր գործոններից մեկն է, եթե ոչ՝ ամենակարևորը: Պատերազմի հենց սկզբին, ակնհայտորեն ունենալով այդ «գործոնի» կարիքը, օսմանյան իշխանությունները այլ որոշում են կայացնում՝ զինաթափում, ապա սպանում են սեփական բանակի զինվորին: Այս գործողությունը թերևս փաստում է, որ հայերի ոչնչացումը պատերազմում հաղթելու հեռանկարից էլ կարևոր էր: Առաջին աշխարհամարտը երկար սպասված առիթ էր կանխամտածված ծրագիրը կյանքի կոչելու համար, որը և իրականացնում է Օսմանյան կայսրությունը՝ հայ ժողովրդին ցեղասպանության ենթարկելով իր իսկ բնօրրանում:

Օգտագործված Աղբյուրներ

1- Տես Սիմոնյան Հր., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 11:

2- Տես Աճառյան Հր., Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1999, էջ 15:

3- Տես Եազըճեան Գ., Ապտիլ Համիտ Բ. Կարմիր սուլթանը, Յարակից Օսմանեան և հաստատութիւններ, Պէյրութ, 1980, էջ 832:

4- Սիւրմէնեան Գ., Տաճկահայ զինուոր և զինուորականութիւնը նախ տաճկական, ապա հայկական բանակներուն մէջ, Պէյրութ, 1967, էջ 12:

5- Տես Վահէ Հ., Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը, Նիւ Եորք, 1959, էջ 661-662:

6- Տես «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1910, փետրուար 24/9 մարտ, թիւ 218:

7- «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1908, դեկտեմբեր 26 - 8 հունվար, թիւ 3.727:

8- Վարանդեան Մ., Համաժողովրդական բանակ, ժընև, 1909, էջ 3, 6-7:

9- Սիւրմէնեան Գ., նշվ. աշխ., էջ 14:

10- Տես «Հայաստան», Սոֆիա, 1915, 14 մարտ, թիւ 2:

11- Տես Սիւրմէնեան Գ., նշվ. աշխ., էջ 120:

12- Տես նույն տեղում, էջ 15:

13- Տես Կարոյեան Գ. Մ., Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները, Պոսթոն, 1957, էջ 18:

14- Տես նույն տեղում, էջ 110-111:

15- Տես Սիւրմէնեան Գ., նշվ. աշխ., էջ 35-36:

16- Տես Սարաջեան Խ., Հայոց դերը Թուրքիոյ մէջ, Երևան, 2000, էջ 44:

17- Տես Ռուսաստանը և Հայոց ցեղասպանությունը 1915-1917 թթ. (փաստաթղթերի ժողովածու), կազմող, առաջաբանի և թարգմանության հեղինակ՝ Ա. Մարուքյան, Երևան, 2004, էջ 39, 38:

18- Տես Թորոսյան Ս., Դարդանելից մինչև Պաղեստին, Երևան, 2012, էջ 7:

19- Տես Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915-1918 թթ.), կազմ. և առաջաբանի հեղինակ՝ Վ. Ա. Միքայելյան, Երևան, 2004, էջ 199-200:

20- Տես Ղազարեան Հ., Յեղասպան թուրքը, Բեյրութ, տպարան Համազգային, 1968, էջ 21-22:

21- Տես Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914-1916 թթ.), Երևան, 1965, էջ 224-226:

22- Տես Дадрян В., История Армянского геноцида, Этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа, Ереван, 2007, էջ 331:

23- Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին (1915-1918), կազմող և առաջաբանի հեղինակ՝ Ա. Օհանջանյան, գերմաներենից թարգմանեց՝ Վ. Մարտիրոսյան, Երևան, 2004, էջ 12:

24- Տես Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում, էջ 5-6:

25- Տես Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները…., էջ 163:

26- Morgenthau N., Ambassador Morgenthau's Story, New York, 1918, pp. 302-303.

27- Զորմիսեան Լ., Համապատկեր արևմտահայոց մէկ դարու պատմութեան, Գ. հտր., Բեյրութ, 1976, էջ 360:

Դրվագներ 1915 թ. արևմտահայության ինքնապաշտպանական կռիվներից

Արարատ Հակոբյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կարելի է վստահաբար ասել, որ հայոց 4-5 հազարամյա պատմության ամենաողբերգական էջը 1915 թ. Հայոց մեծ եղեռնն է: «Մեծ» բառն ինքնին խոսում է այդ աղետի անսահման մասշտաբների մասին, և 100 տարի է (սկսած 1920 թ.), ինչ համայն հայությունը Ապրիլի 24-ը նշում է իբրև Հայոց մեծ եղեռնի հիշատակի ու ոգեկոչման օր:

Սակայն մեր այս հրապարակման մեջ հարկ ենք համարում խոսել ոչ թե կոտորածների, այլ այդ նույն ճակատագրական տարում արևմտահայերի հերոսական ինքնապաշտպանական, դիմադրական կռիվների մասին: Նախ արձանագրենք՝ այն, որ երիտթուրք կառավարության պարագլուխները նախօրոք ծրագրել ու պատերազմական խառնաշփոթի պայմաններում սկսել էին իրագործել արևմտահայերի տեղահանությունն ու զանգվածային ջարդերը[1] , դեռևս չէր նշանակում, թե ողջ հայությունը գլուխը կախ, լռումունջ ընդունել է իր մահը:

Մենք տեսնում ենք, որ ազատագրական պայքարի ոգի ու փորձ ունեցող առանձին շրջաններ ՀՅԴ-ի առաջ քաշած «Ազատություն կամ մահ» կարգախոսով դիմեցին հերոսական ինքնապաշտպանության: Ինքնապաշտպանական մարտերից ամենանշանավորը և ամենաարդյունավետը թերևս կարելի է համարել Վանի 1915 թ. ապրիլյան հերոսամարտը: Շուրջ մեկ ամիս (ապրիլի 7 - մայիսի 5) տևած Վանի ինքնապաշտպանական կռիվները ղեկավարել են կազմակերպչական-քաղաքացիական առումով դաշնակցական Արամ Մանուկյանը, իսկ զինվորական գործերով՝ արմենական-ռամկավար Արմենակ Եկարյանը: Վանը հայ ազատամարտի այն շրջաններից է, որտեղ սովորաբար հայ ավանդական երեք՝ ՀՅԴ, Արմենական և Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունները հանդես են եկել միասնաբար, համագործակցելով և ավելի հաճախ հաջողություններ են արձանագրել: Տվյալ դեպքում ՀՅԴ-Արմենական համագործակցության մի վառ օրինակ է ապրիլյան ինքնապաշտպանությունը: Ինքնապաշտպանության կենտրոն դարձավ Վան քաղաքը, հատկապես՝ նրա Այգեստան թաղամասը: Այդ ընթացքում հայկական թաղամասը բաժանվում է յոթ պաշտպանական շրջանների, փորվում են խրամատներ, կառուցվում պաշտպանական ամրություններ, հմուտ զինագործ վանեցիները անգամ պատրաստում էին ինքնաշեն զենք, զինամթերք, վառոդ, նույնիսկ թնդանոթ: Եվ այդպես շուրջ մեկ ամիս վան-վասպուրականցիները կարողանում են քաջաբար պաշտպանվել Վանի կուսակալ Ջևդեթ բեյի գլխավորած թուրք-քրդական 12 հազարանոց զորքից, մինչև որ ռուսական զորամասերից առաջ օգնության են հասնում և մայիսի 5-ին քաղաք են մտնում Խանասորի



Ձախից աջ՝ Տիգրան, Վանայ Իշխան, Արամ, Մալխաս, Սալման (Համազասպ Մանուկեան), պառկած՝ Վանայ Սարգիս-Բարսեղեան

Վարդանի (Սարգիս Մեհրաբյան) ու դաշնակցական Խեչոյի (Խաչատուր Ամիրյան) գլխավորած հայ կամավորական ջոկատները: Այս կապակցությամբ նշենք, որ իրականությանը չի համապատասխանում խորհրդային և սփյուռքյան որոշ շրջանների պատմահուշագրական գրականության մեջ տեղ գտած տեղեկությունը, թե Վանի ինքնապաշտպաններին առաջինը օգնության է հասել ու քաղաք է մտել Անդրանիկը: Վանի ազատագրումից հետո ռուսական բանակի հրամանատարության մայիսի 7-ի հրամանով Վան-Վասպուրականի ժամանակավոր նահանգապետ է նշանակվում (մինչև հուլիսի 17-ի հարկադիր մեծ գաղթը) Վանի ինքնապաշտպանության փաստական ղեկավար, իսկ մի քանի տարի անց (1918 թ.) Առաջին հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանը: Ա. Մանուկյանին հաջողվում է նահանգում ստեղծել կառավարման այնպիսի արդյունավետ մարմիններ, որոնց փորձը նա հետագայում խելամտորեն կիրառում է արդեն նորահնչակ ՀՀ-ում[2]:

Վան-Վասպուրականի ինքնապաշտպանության պատկերն ամբողջացնելու համար հարկ է նշել, որ այդ նույն օրերին հաջող ինքնապաշտպանական կռիվներ է մղել նաև հարևան Շատախ գավառի հայությունը: Եվ Վանի ազատագրումից հետո՝ մայիսի 14-ին, Շատախի կենտրոն Թաղի պաշտպաններին առաջինը օգնության է հասնում հայկական 2-րդ կամավորական ջոկատը՝ Դրոյի հրամանատարությամբ: Ինչ վերաբերում է Մոկսի

հայությանը, ապա այս դեպքում պետք է արժանին մատուցել քուրդ ցեղապետ Մուրթուլլա բեյին: Նրա շնորհիվ տեղի հայությունը մեծ մասամբ կարողանում է փրկվել կոտորածներից: Հարկ է նշել, որ սա այն եզակի դեպքերից է, երբ քուրդ ցեղապետը բարյացակամություն է ցուցաբերել ու պաշտպանության տակ առել տեղի հայ ազգաբնակչությանը. մնացած դեպքերում հայտնի է, որ հայերի կոտորածները, ալան-թալանը հիմնականում կատարվել են քուրդ հրոսակախմբերի կողմից, որոնք գործիք էին դարձել թուրք իշխանությունների ձեռքին՝ վերջիններիս ջարդարարական քաղաքականության իրականացման համար:

Խոսելով Առաջին աշխարհամարտի ծանր տարիների մասին՝ հարկ է հիշատակել նաև այն իրողությունը, որ ռուսական քաղաքական ու զինվորական իշխանությունները, առաջնորդվելով զուտ մեծապետական-գաղութարարական շահերով, մեղմ ասած առանձնապես բարյացակամ ու գթասիրտ վերաբերմունք չեն ցուցաբերել ինքնապաշտպանվող, տառապանքներ ու զրկանքներ կրող արևմտահայ ժողովրդի հանդեպ՝ չնայած այն բանին, որ այդ ողջ ընթացքում հայերն իրենց քաղաքական շրջանակներով ցուցաբերում էին անկեղծ համակրանք և համակողմանի օգնություն ռուսական զորքի ու զենքի հաղթանակի գործում: Այդ մասին կան աղաղակող փաստեր, երբ պատերազմի տարիներին ռուսական բանակը երեքից չորս անգամ կասկածելի, արհեստական ու միտումնավոր նահանջներ կատարեց ոչ այնքան ռազմական, որքան քաղաքական նկատառումներով: Պատմագիտական և հուշագրական գրականությունից հայտնի է ռուս գեներալ Պեշկովի ծրագիրը «Եփրատյան կոզակության» մասին[3]: Այդ նահանջների հետևանքով, փաստորեն, հարյուր հազարավոր արևմտահայեր դառնում էին թուրք-քրդական հարձակումների ու

Վան, Այգեստան թաղամաս, գլխաւոր փողոց: Լուսանկարված է 20-րդ դարասկզբին: Լուսանկարիչ՝ Նշան Թորոյան.

Վանի ինքնապաշտպանության դիրքերից մեկը

կոտորածների թիրախ: Այս կապակցությամբ, օրինակ, արևմտահայ գործիչ Ավետիս Թերզիպաշյանը նշում է, որ «1915-ին, երբ ռուսական բանակը Մուշի դաշտին մոտիկացած էր, տեսնելով, որ իւր յառաջխաղացումով 100000 հայեր կ'ազատուին, կեղծ նահանջ մը սարքեց և թոյլ տուաւ՝ ամբողջ Մուշի գավառը կոտորուի: Միևնոյն կեղծ նահանջը ըրաւ Վասպուրականի մեծ գաղթին, որմէ, ինչպէս գիտենք, 90000 հոգի ճանապարհին և Կովկասի մէջ մեռան հիւանդութենէն»[4]:

Այդուհանդերձ, Վան-վասպուրականցիների ինքնապաշտպանության շնորհիվ 120 հազարից ավելի, իսկ որոշ տվյալներով՝ 200 հազար վան-վասպուրականցիներ (հուլիսյան նահանջի ընթացքում հատկապես Բերկրիի կիրճում քրդերի ավազակային հարձակման հետևանքով զգալի կորուստներ կրելով հանդերձ) կարողացան փրկվել թուրք-քրդական հետագա կոտորածներից ու ներգաղթել Արևելյան Հայաստան:

Ի տարբերություն Վան-Վասպուրականի՝ անհաջող ելք ունեցավ Մուշի և Սասունի (Դուրան-Բարձրավանդակի) ինքնապաշտպանությունը: Այստեղ գոյամարտը ղեկավարում էին Ռուբեն Տեր-Մինասյանը և Վահան Փափազյանը (Կոմս): Չորս կողմից պաշարված մշեցիները և սասունցիները 6-7 ամիս (1915 թ. գարնան և ամռան ամիսներին) դիմադրեցին: Հայ ինքնապաշտպանները, դիմադրություն ցույց տալով, այս անգամ ևս ակնկալում էին ռուսական զորքի և հայ կամավորների օգնությունը: Սակայն ոչ այնքան ռազմական, որքան քաղաքական նկատառումով այդ օգնությունը չցուցաբերվեց: Մի կողմից Մանազկերտ հասած ռուսական զորքերի՝ ժամանակին (իբրև ազդանշան Նեմրութ սարին կրակ պետք է վառվեր) օգնության չհասնելու, իսկ մյուս կողմից՝ տեղում զենքի ու զինուժի պակասի, ինչպես նաև ինքնապաշտպանության ղեկավարների թույլ տված մարտավարական սխալների պատճառով ամիսներ

տևած դիմադրությունը պարտությամբ ավարտվեց: Տարոն-Սասունի ինքնապաշտպանությունը խեղդվեց արյան մեջ և փաստորեն վերածվեց տեղի հայության սպանդի: Փրկվեցին Սասունի քաջարի ժողովրդի միայն բեկորները:

1915 թ. հունիսին անկուսակցական Ղուկաս Տեռվլեթյանի ղեկավարությամբ ինքնապաշտպանական կոմիտեներ մղվեցին ժողովրդական հերոս Անդրանիկի (Օզանյան) ծննդավայր Շապին-Գարահիսարում, իսկ սեպտեմբեր-հոկտեմբերին դաշնակցական Մկրտիչ Յոթնեղբայրյանի գլխավորությամբ՝ Ուրֆայում: Սակայն երկու դեպքում էլ ամսից ավելի մղված գոյամարտը ճնշվեց թուրք-մահմեդական գերազանց ուժերի կողմից:

Ըստ ամենայնի, ուշադրության ու գովասանքի է արժանի 1915 թ. ինքնապաշտպանական մեկ այլ դրվագ: Խոսքը պատմության մեջ հայտնի Մուսա դաղի (լեռան) դյուցազնամարտի մասին է, որն ի վերջո անհամեմատ բարեհաջող ավարտ ունեցավ: Այդ պայքարը գլխավորել են ռազմական և վարչական մասերի ղեկավարներ Եսայի Յաղուբյանը և Տիգրան Անդրեասյանը: Միջերկրական ծովի ափամերձ հայկական 6 գյուղերի ավելի քան 4000 սուետիահայեր, 1915 թ. հուլիսի վերջերին չենթարկվելով բռնագաղթի թուրքական հրամանին, բարձրացան մոտակա Մուսա լեռը և 40 օր ու գիշեր հերոսաբար պաշտպանվեցին, մինչև որ հայերի խնդրանքով ծովից ֆրանսիական «Գիշեն» և ապա «Ժաննա դը Արկ» շոգենավերն օգնության հասան և սեպտեմբերին շրջապատվածներին բարեհաջող փոխադրեցին Եգիպտոսի Պորտ Սաիդ քաղաք-նավահանգիստ: Ամենքին է հայտնի այս հերոսապատումին նվիրված ավստրիացի հրեա լրագրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» խորագրով վեպը[5]:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ միանգամայն բնական ու արդարացված պետք է համարել Մեծ եղեռնի տարում արևմտահայերի ինքնապաշտպանական կոմիտեները: Այնտեղ, որտեղ հայերը դիմել են ինքնապաշտպանության, համեմատաբար ավելի քիչ կորուստներ են ունեցել, իսկ այն վայրերում, որտեղ, միամտություն հանդես բերելով, դիմադրություն ցույց չեն տվել, հույսը դրել են թուրքերի գթասրտության վրա, ըստ էության, գլխովին կոտորվել են կամ էլ քշվել Միջագետքի անապատները և ճանապարհին կոտորվել՝ զոհ դառնալով ավազակային հարձակումներին, բռնություններին, սովին, ծարավին ու համաճարակներին: Միանգամայն կեղծ ու մերժելի պետք է համարել գրականության մեջ տարածում գտած այն վարկածը, թե իբր հայկական կամավորական շարժումն ու ինքնապաշտպանական կոմիտեներն են եղել Հայոց ցեղասպանության պատճառ: Իրականում նման տեսակետի տարածողները փորձում են դրանով արդարացնել կամ մեղմել երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը: Եթե իբրև առարկություն ներկայացվում են հայերի ինքնապաշտպանական կոմիտեները կամ կամավորական խմբերի գործունեությունը, ապա դրանք կարելի է համարել ընդամենը պատրվակ թուրքական հայակուլ ծրագրերի

Մուսա Լեռան պաշտպանները

իրականացման ճանապարհին: 1919 թ. աշնանը Երևանում գումարված ՀՅԴ 9-րդ (Թ) Ընդհանուր ժողովը, տալով կամավորական շարժման գնահատականը, կայացրել է հետևյալ որոշումը. «Վճռապէս մերժել բոլոր այն կարծիքները, թէ հայկական աղետները ուղղակի հետևանք էին կամավորական շարժումին, ընդհակառակը այդ շարժումը նկատել հայ ժողովուրդի ինքնապաշտպանական մէկ պատմական փաստ և մեր քաղաքական ազատագրութեան ազդակ»[6]: Իբրև նոր որակ և 1915 թ. ինքնապաշտպանական կոմիտեների բովանդակության շարունակություն պետք է հատուկ ընդգծել 1918 թ. Մայիսյան հաղթական հերոսամարտերը, որոնք դարավոր ընդմիջումից հետո հիմք հանդիսացան Հայաստանի անկախության վերականգնման համար: Դրա կողքին չպետք է մոռանալ նաև 1921 թ. Փետրվարյան ապստամբությունը, որը մեկուկես ամսով վերականգնեց ազատ և անկախ Հայաստանը: Ըստ ամենայնի, եթե այն ժամանակ չլինեին այդ կոմիտեներն ու պայքարը, այսօր հավանաբար դժվար կլիներ խոսել մեր ժամանակների Արցախյան ազատամարտի ու հայոց երկու ազատ և անկախ հանրապետությունների մասին: ■

Օգտագործված Աղբյուրներ

1- Այդ մասին տեղեկություններ է հաղորդում ՀՅԴ ճանաչված գործիչ Ռ. Տեր-Մինասյանը՝ նշելով, թե աշխարհամարտի հենց սկզբից գերմանական և բուլղարական ստույգ աղբյուրներից տեղեկություն է ստացվում, որ պատերազմում ինչպիսի դիրք էլ բռնեին հայերը, միևնույն է, ծրագրված էր բնաջնջել նրանց (տե՛ս Ռուբէն, Հայ-թրքական կնճիռը, Գահիրէ, 1924, էջ 89):

2- Տե՛ս Ասլյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը, Եր., 2005, էջ 211-215:

3- Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., էջ 83, տե՛ս նաև Լէոն, Անցեալից, Թիֆլիս, 1925, էջ 323, Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Պէյրութ, 1958, էջ 14:

4- «Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, պատ. խմբագիր՝ Վիրաբյան Ա., Եր., 2004, էջ 489:

5- Տե՛ս Հակոբյան Ա., Հայոց պատմություն, Եր., 2018, էջ 259:

6- «Քաղուածներ Հ. Յ. Դ. 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումներից», Եր., 1920, էջ 16:

Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունները թուրքերի կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչում

Մելինե Անումյան
Թուրքագետ, պատմական գիտությունների թեկնածու

Հայոց ցեղասպանությունը հավաստող բազմաթիվ փաստաթղթերի շարքում առանձնահատուկ հիշատակման են արժանի հատկապես Ստամբուլի ռազմական դատարաններում 1919-1921 թթ. տեղի ունեցած երիտթուրքերի դատավարությունների և հայերի տեղահանության ու կոտորածների մեղադրանքով հարուցված այն (շուրջ 63) դատական գործերի վավերագրերը, որոնք, հայտնի ցեղասպանագետ Վահագն Տատրյանի դիպուկ խոսքով, «ամենաազդեցիկ հակաթույնն են թուրքական ժխտողականության դեմ»[1]:

Որոշ պատմաբաններ համարում են, որ այս դատավարությունների շնորհիվ Թուրքիան, ի դեմս Օսմանյան պետության իշխանությունների, արդեն իսկ պաշտոնապես ճանաչել ու դատապարտել է Հայոց ցեղասպանությունը[2]: Քանզի այս դատավարություններն ապացուցում են, որ հայերի զանգվածային կոտորածները կանխամտածված և ծրագրված են եղել երիտթուրքերի կուսակցության և կառավարության կողմից, իսկ դիտավորությունը (intent) խիստ կարևոր փաստ է ցեղասպանություններն ապացուցելու առումով:

Մուդրոսի զինադադարի կնքումից հետո օսմանյան կառավարության կողմից Հայոց ցեղասպանության պատասխանատուներին բացահայտելու և դատապարտելու կարևոր դրդապատճառներից մեկը հաշտության պայմանագրի դրույթները և հաղթանակած տերությունների դիրքորոշումը մեղմելու ցանկությունն էր, քանի որ կայսրությանը վերջնական կործանում էր սպառնում: Բացի այդ՝ Թուրքիայի նոր իշխանությունները մտադիր էին պատասխանատվության ենթարկել առանց հիմնավոր պատճառի երկիրը պատերազմի մեջ ներքաշած և Առաջին աշխարհամարտի տարիներին բազմաթիվ տնտեսական չարաշահումներ կատարած երիտթուրքերին: Միաժամանակ թուրքերը գիտակցում էին, որ եթե Հայոց ցեղասպանության հանցագործները դատվեին միջազգային դատարանում, ապա կարող էին ի հայտ գալ ռազմական ոճրագործությունների վերաբերյալ այնպիսի փաստեր, որոնք բացարձակապես ձեռնտու չէին լինի Օսմանյան պետությանը, իսկ եթե երիտթուրքերը դատվեին թուրքական դատարանում, ապա հնարավոր կլիներ որոշ հանցանքներ կոծկել մեծ տերություններից ու միջազգային հանրությունից:

Արդ, պատերազմից հետո օսմանյան նոր կառավարությունը փութաց պատժել Առաջին աշխարհամարտի տարիներին Թուրքիայում կատարված ոճրագործությունների, մասնավորապես՝



«Միություն» և առաջադիմություն կուսակցության զինանշանը

հայերի տեղահանության ու կոտորածների հանցագործներին: Այս հարցում կարևոր դեր խաղաց նաև այն, որ 1918 թ. դեկտեմբերից այստեղ իշխանության եկած կառավարությունները հիմնականում կազմվում էին երիտթուրքերի հակառակորդ՝ «Ազատություն և համաձայնություն» (Hürriyet ve İtilaf) կուսակցության անդամներից:

1919-1921 թթ. Ստամբուլի ռազմական արտակարգ ատյանում 63 դատական գործ հարուցվեց հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով, որոնցից գլխավորը երիտթուրքերի կուսակցության և կառավարության անդամների դատերն էին:

Գլխավոր դատավարությունն սկսվեց 1919 թ. ապրիլի 28-ին և շարունակվեց մինչև նույն տարվա մայիսի 17-ը: Այս դատավարության ժամանակ հեռակա կարգով մեղադրվել են 11, իսկ ներկա կարգով՝ 20 կուսակցական գործիչներ ու բարձրաստիճան պաշտոնյաներ:

Հարկ է առանձնահատուկ կերպով անդրադառնալ երիտթուրքերի կուսակցության անդամների դատավարության մեղադրական ակտին, քանի որ այն բաղկացած էր այնպիսի խիստ կարևոր վավերագրերից, ինչպիսիք են ծածկագիր հեռագրերն ու բարձրաստիճան պաշտոնյաների և զինվորականների վկայությունները: Այս դատական վավերագրերը բացառիկ արժեք են ձեռք բերում նաև, երբ նկատի ենք առնում, որ դրանցից

յուրաքանչյուրն ուսումնասիրվել է Օսմանյան կայսրության արդարադատության և ներքին գործերի նախարարություններին ենթակա իրավասու պաշտոնյաների կողմից, որոնք հաստատել են դրանց վավերականությունը: Բացի այդ՝ շատ դեպքերում մեղադրյալներին ցույց են տրվել փաստաթղթերում սեփական ստորագրությունները, և նրանք ընդունել են, որ դրանք իրենց են պատկանում:

Մեղադրական ակտն ընդգծում էր, որ հայերի բնաջնջումը նախապես որոշվել էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի մանրամասն քննարկումների արդյունքում: Ամբաստանագրում շեշտվում էր, որ երիտթուրքական կուսակցության ղեկավարների կողմից բանտերից ազատված հանցագործներից ստեղծված Հատուկ կազմակերպության բուն նպատակը ոճրագործություններ կատարելն էր, և նշվում, որ տվյալ կազմակերպությունը սերտ կապերի մեջ է եղել «Միություն և առաջադիմություն» կուսակցության հետ, և սույն կազմակերպության գլխավոր պաշտոնյաները կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներն էին: Նաև ընդգծվում էր, որ Հատուկ կազմակերպության ավազակները հետագայում օգտագործվել են հայերի բնաջնջումը կազմակերպելու նպատակով: Ամբաստանագրում շեշտվում էր, որ հայերի տեղահանության ընթացքում տարբեր ժամանակներում և վայրերում տեղի ունեցած հանցագործությունների հետաքննությունը բացահայտել է, որ այդ ոճիրները ոչ թե կրել են տեղական բնույթ, այլ կանխամտածվել և իրականացվել են մեղադրյալներից կազմված «հատուկ կենտրոնի» բանավոր հրահանգներով ու գաղտնի հրամաններով, և լիովին ապացուցվել է, որ հայերի կոտորածները կատարվել են Թալեաթի, Էնվերի և Ջեմալի անմիջական հրամաններով ու գիտությամբ: Ամբաստանագրում հերքվում էր նաև Մեծ եղեռնի հեղինակների և ցեղասպանությունը

1918 թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին օսմանյան խորհրդարանում թեժ քննարկումներ եղան հայերի և մյուս քրիստոնյաների կոտորածների վերաբերյալ:

«Ազատություն և համաձայնություն» կուսակցության զինանշանը

ժխտող թուրք պատմաբանների այն «փաստարկը», թե իբր տեղահանությունն իրականացվել է որպես ռազմական միջոցառում. նման գործողությունները չէին բխում ռազմական անհրաժեշտությունից: Դրանք ո՛չ պատժիչ գործողություններ էին, ո՛չ էլ կարգապահական: Նաև նշվում էր, որ կուսակցությունն ու կառավարությունը բացահայտ հրաման էին արձակել հայերի կոտորածների համար: Որպես ապացույց բերվում էր այն ծածկագիր հեռագիրը, որում հրահանգվում էր ոչնչացնել տեղահանված հայերին: Փաստաթղթում ընդգծվում էր, որ ջարդերն ուղղորդվել ու վերահսկվել էին Ներքին գործերի նախարարության և անձամբ նախարար Թալեաթի կողմից, իսկ հայերին պաշտպանել համարձակված պաշտոնյաներին ու հասարակ մարդկանց սպառնացել էին պաշտոնազրկմամբ և անգամ մահապատժով[3]:

Թեև առաջինն անդրադարձանք գլխավոր համարվող՝ երիտթուրքերի կուսակցության և կառավարության անդամների դատավարությանը, սակայն հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով հարուցված առաջին դատական գործն իրականում Յոզղատ գավառի դատավարությունն էր, որը մեկնարկել էր 1919 թ. փետրվարի 5-ին: Յոզղատի գործով 3 մեղադրյալներից մեկը՝ Բողազլյան գավառի կառավարիչ Մեհմեդ Քեմալը, 1919 թ. ապրիլի 8-ին կայացված դատավճռի համաձայն, դատապարտվել էր մահվան: Այս դատավճիռն իրագործվել էր 1919 թ. ապրիլի 10-ին, որից հետո Ստամբուլում զանգվածային ցույցեր էին կազմակերպվել երիտթուրքերի դատավարությունների դեմ: Քաղաքում անգամ լուրեր էին տարածվել, թե այն բանտը, որտեղ պահվում էին բարձր պաշտոններ զբաղեցրած մեղադրյալները, զինված հարձակման էր ենթարկվելու ճիշտ այնպես, ինչպես Բաստիլը՝ ժամանակին[4]: 1919 թ. մայիսին այս բանտում արդեն կալանավորված էին առնվազն 250 մարդ[5]: 1919 թ. մայիսի 23-ին Ստամբուլում տեղի է ունենում դատավարության և հույների կողմից Իզմիրի գրավման դեմ ուղղված ամենազանգվածային ցույցը: Այս ցույցերը վկայում էին, որ երիտթուրքերը դեռ շարունակում էին մեծ ուժ ներկայացնել Թուրքիայում: Վարչապետ Դամադ Ֆերիդը լարվածությունը մեղմելու

նպատակով ազատ է արձակում 41 կալանավորների, որոնք կասկածվում էին հատկապես հայերի կոտորածների հետ առնչություն ունենալու մեջ[6]: Դամադ Ֆերիդը որոշում է նաև ժամանակավորապես դադարեցնել կուսակցության անդամների դատաքննությունը: Այս բոլոր իրադարձությունների ազդեցության տակ Մեծ Բրիտանիայի գերագույն կոմիսարի տեղակալ, ծովակալ Վերը որոշում է մյուս կալանավորներին տեղափոխել ավելի ապահով մի վայր, քանի որ Անգլիան սկսել էր չվստահել օսմանյան դատարաններին, բացի այդ՝ մտադիր էր սեփական դատարանի միջոցով դատապարտել պատերազմական հանցագործներին: 1919 թ. մայիսի 28-ին անգլիացիները որոշ կալանավորների տեղափոխում են Մալթա կղզի: Թեև Մեծ Բրիտանիան սկզբում իրոք մտադրված էր դատապարտել Մալթայի աքսորյալներին, սակայն հետագայում նրա վճռականությունը հետզհետե թուլացել է, և ի վերջո նա Հայոց ցեղասպանության ոճրագործներին փոխանակել է անգլիացի ռազմագերիների հետ: Մալթայի աքսորյալները վերադարձել են Թուրքիա, մասնակցել ազգայնական պայքարին և հանրապետության հռչակումից հետո զբաղեցրել կարևոր քաղաքական պաշտոններ:Այսպես Հայոց ցեղասպանության պատասխանատուները դարձել են Թուրքիայի Հանրապետության հիմնադիր կադրերը:

Ռազմական արտակարգ ատյանը գլխավոր դատավարությունը վերսկսել է 1919 թ. հունիսի 3-ին: Այս դատավարության ժամանակ նորից դատվել են վարչապետ Թալեաթ փաշան, ռազմական նախարար Էնվեր փաշան, ռազմածովային նախարար Ջեմալ փաշան ու հանրային կրթության նախարար դոկտոր Նազիմը, ովքեր 1919 թ. հուլիսի 5-ին կայացված դատավճռով հեռակա կարգով դատապարտվել էին մահվան[7]:

Հայոց ցեղասպանության իրականացման գործում առանցքային դեր են կատարել նաև երիտթուրքական կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարները, որոնք մասնավորապես տեղում կազմակերպել և վերահսկել են Օսմանյան կայսրության տարբեր նահանգների հայության տեղահանումն ու կոտորածները: «Միություն և առաջադիմություն» կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների դատաքննությունը Ստամբուլի ռազմական դատարանում սկսվել է 1919 թ. հունիսի 21-ին ու տևել մոտ 7 ամիս: Դատավարության սկզբում մեղադրյալները 7 անձիք էին: Հետագա նիստերում ամբաստանյալների թիվը հասել է 12-ի, և 12-ի նկատմամբ էլ դատավճիռ է կայացվել[8]:

Հայերի կոտորածների կազմակերպիչների պատասխանատվության խնդիրը Ստամբուլի ռազմական դատարանների կողմից քննվել է նաև ըստ Օսմանյան կայսրության տարբեր շրջանների: Շրջանների դատավարությունների մեջ առավելապես կարևորվում են առաջինը տեղի ունեցած Յոզղատի և Տրապիզոնի դատական գործերը, քանի որ ամենից

Երիտթուրքերի դատավարությունը Ստամբուլում

շատ այս դատաքննությունների ընթացքում են ներկայացվել վկայություններ ու ապացույցներ, որ տեղական իշխանությունները հայերին ոչնչացրել են՝ հիմնվելով կենտրոնական կառավարությունից ստացած հրահանգների վրա: Բացի այդ՝ տվյալ դատավարությունների ժամանակ հանդես եկած վկաները հիմնականում եղել են թուրքեր և այլ ազգությունների պատկանող մահմեդականներ և ոչ թե «միայն հայեր», ինչպես փորձում են ներկայացնել որոշ թուրք կեղծարարներ: Ավելին՝ Տրապիզոնի դատավարության ընթացքում մեղադրյալների դեմ վկայություններ են տվել նաև բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ[9]: Տարբեր նահանգների և գավառների դատավարությունների շարքում առանձնապես կարևորվում են նաև Դեր-Զորում հայության բնաջնջմանը վերաբերող դատական գործերը:

Այսպիսով, երիտթուրքերի դատավարությունների փաստը խիստ նշանակալի է, քանի որ Թուրքիան, ի դեմս այն ժամանակվա իշխանությունների, այդ կերպ ընդունել է, որ հայերը զանգվածաբար կոտորվել են համաձայն նախապես որոշված պետական ծրագրի:

Օգտագործված Աղբյուրներ

1- Dadrian V., Akçam T., "Tehcir ve Taktil", Divan-i Harb-i Örfi Zabitlari, İttihad ve Terakki'nin Yargilanmasi 1919-1922, İstanbul, 2008, s. 6.

2- Տես Փափազեան Ա. Հ., Հայերի ցեղասպանութիւնը ըստ երիտթուրքերի դատավարութեան փաստաթղթերի, Լոս Անճելես, 2005, էջ 2-3:

3- Տես "Takvîm-i Vekayi", No 3540, 5 Mayis 1335 (1919):

4- Տես Dadrian V., Ulusal ve Uluslararasi Hukuk Sorunu Olarak Jenosit, Belge Yayinlari, İstanbul, 1995, էջ 67:

5- Տես Şimir B., Malta Sürgünleri, Bilgi Yayinevi, İstanbul, 1985, էջ 96:

6- Տես Dadrian V., Ulusal ve Uluslararasi Hukuk Sorunu Olarak Jenosit, էջ 170:

7- Տես "Takvîm-i Vekayi", No 3604, 22 Temmuz 1335 (1919), էջ 218:

8- Տես "Takvîm-i Vekayi", No 3772, 10 Şubat, 1920:

9- Այդ մասին ավելի մանրամասն տես Անումյան Մ., Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունները՝ ըստ օսմանյան մամուլի, Երևան, 2011, Անումյան Մ., Ճանաչում և դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.), Երևան, 2013:

Սուրիոյ կողմէ Հայոց ցեղասպանութեան միաձայնութեամբ ճանաչումը պատմական խորապատկերի վրայ

Նորա Արիսեան
Սուրիոյ Արաբական Հանրապետութեան խորհրդարանի անդամ

Հինգշաբթի՝ 13 փետրուար 2020ին, Սուրիոյ խորհրդարանը միաձայնութեամբ բանաձև ընդունեց՝ ճանչնալով և դատապարտելով 20րդ դարու սկիզբին Օսմանեան կայսրութեան կողմէ հայերու դէմ գործադրուած ցեղասպանութիւնը:

Օրէնսդիր իշխանութեան կողմէ սա առաջին քայլը չէր Հայոց ցեղասպանութիւնը դատապարտելու ուղղութեամբ:

Անպայման պէտք է յիշել, որ 2015ին Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակի առթիւ Սուրիոյ խորհրդարանը հատուկ նիստ գումարեց քննարկելու համար ցեղասպանութեան դատապարտման հարցը, և խորհրդարանի նախագահը իր յայտարարութեան մէջ դատապարտեց Հայոց ցեղասպանութիւնը, ապա երեսփոխանները մէկ վայրկեան յոտնկայս յարգեցին Հայոց ցեղասպանութեան նահատակներու յիշատակը:

Իսկ ներկայ նստաշրջանին՝ 2016էն ի վեր, տարբեր առիթներով քանի մը անգամ կարգ մը երեսփոխաններ Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը արծարծած են, ինչպէս՝ դոկտ. Նորա Արիսեան, Նիտալ Հմեդի, Սամիր Հաժժար, Ալան Պաքըր և Օմար Արուպ:

Եղելութեան սկիզբը մեկնարկեց 20 յունուար 2020ին, երբ Սուրիա-Հայաստան բարեկամական խորհրդարանական յանձնաժողովը գումարեց իր արտակարգ նիստը, ուր Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը լայն քննարկման առարկայ դարձաւ, և, դառնալով Ցեղասպանութեան ճանաչման ընդունուած բանաձևի նախագիծի հեղինակ, նիստին տեղեկագիրը ներկայացուց խորհրդարանի նախագահութեան, որպէսզի խորհրդարանի նիստին օրակարգի կէտ դառնայ:

Արդարև, Սուրիոյ խորհրդարանի հինգշաբթի՝ 13 փետրուար 2020ի տասներորդ նիստին օրակարգի վրայ տեղ գտաւ Հայոց ցեղասպանութեան մասին բանաձևը:

Քննարկման սկիզբը խորհրդարանի նախագահ Համուտա Սապաղ հատուկ ելոյթ ունեցաւ՝ շեշտելով թրքական նոր յարձակապաշտութեան մասին, որ հիմնուած է գարշելի ցեղապաշտական օսմանական մտածողութեան վրայ, և յիշեցուց Էրտողանի նախնիներուն կողմէ կատարուած գարշելի ոճրագործութիւնը: Ան իր ցաւն ու վիշտը արտայայտեց ցեղասպանութեան ենթարկուած բարեկամ հայ ժողովուրդին նկատմամբ:

Ան նշեց, որ Սուրիոյ ժողովուրդը ընդունեց Օսմանեան կայսրութեան դաժանութենէն մազապուրծ փրկուածները, որոնք Սուրիոյ մէջ գտան ապաստան և մասնակցեցան Սուրիոյ կեանքին:

Խորհրդարանի նախագահը շեշտեց, որ ժողովուրդներու նկատմամբ ցեղասպանութեան դաժան յանցագործութիւնները վաղեմութիւն չունին, նշելով, որ մարդկութիւնը պարտաւոր է բարոյապէս, քաղաքականապէս և մարդկայինօրէն ճանչնալ այդ ոճրագործութիւնը և չհերքել զայն, յայտնելով, որ աւելի քան մէկուկէս միլիոն հայերու ցեղասպանութիւնը ոչ միայն պատմական իրողութիւն է, այլև մարդկութեան պատմութեան վրայ սև հետք, որ կը յիշեցնէ այսօրուան սիոնական ոճրագործութիւնները: Հետևաբար անոր դատապարտումը, չնայած ան հայ ժողովուրդին համար կարեկցանքի արտայայտութիւն է, բայց միաժամանակ ան մարդկութեան խղճի մաքրում է յանցագործութենէ, և զայն չդատապարտողը մեղսակից կը համարուի:

Նախագահը նշեց, որ դատապարտումը և ճանաչումը ևս մէկ կարևոր նշանակութիւն ունի՝ կանխել որևէ դաժան ուժ, ներառեալ Էրտողանի ռեժիմը, որ կը համարձակի իրականացնել նման սարսափելի յանցագործութիւն:

Ապա, աւելի քան մէկուկէս ժամ տևած

Նորա Արիսեան

ելոյթներուն ընդմէջէն, Սուրիոյ խորհրդարանի պատգամաւորները արտայայտեցին իրենց թեզերը և զօրակցութիւն յայտնեցին բանաձևին:

Նշենք, որ բանաձևին մէջ յստակօրէն կ'օգտագործուին «Հայոց ցեղասպանութիւն» եզրը և զայն դատապարտելու ու ճանչնալու հանգամանքը:

Երբ նախագահը քուէարկութեան դրաւ բանաձևը, խորհրդարանի պատգամաւորները միաձայնութեամբ քուէարկեցին և բուռն ծափերով ողջունեցին անոր ընդունումը:

Բանաձևին մէջ մասնաւորապէս կը նշուի. «Սուրիոյ խորհրդարանը կը դատապարտէ և կը ճանչնայ 20րդ դարու սկիզբը Օսմանեան կայսրութեան կողմէ գործադրուած հայերու ցեղասպանութիւնը: Ան նաև կը դատապարտէ պատմական իրողութիւնը ժխտող և խեղաթիւրող որևէ փորձ՝ զայն համարելով մարդկութեան դէմ ամենածանր ոճիրներէն մէկը:

Խորհրդարանը իր խոր զօրակցութիւնը կը յայտնէ բարեկամ հայ ժողովուրդին: Խորհրդարանը նաև կը հաստատէ, որ հայերը, ասորիները և սուրիացի ժողովուրդի այլ մասնիկները զոհ դարձան այդ ժամանակաշրջանին թուրք-օսմանցիներու ձեռքով գործադրուած ջարդերուն և ցեղային զտումին, և կոչ կ'ուղղէ աշխարհի խորհրդարաններուն և միջազգային հանրութեան՝ զայն ճանչնալու և դատապարտելու»:

Այստեղ պէտք է արձանագրել, թէ Սուրիոյ կողմէ Հայոց ցեղասպանութեան բանաձևի ճանաչումը կ'ընդգրկէ թրքական գործօն՝ Սուրիոյ մէջ մղուած հակաահաբեկչական պատերազմի շրջագիծին մէջ, ուր ակնյայտ դարձաւ Թուրքիոյ յարձակողական իսկական դիմագիծը:

Միւս կողմէ միաձայնութեամբ դատապարտումը հարկ է նաև դիտարկել պատմական խորապատկէրի վրայ, որ դրսևորուեցաւ երեսփոխաններու ելոյթներուն ընդմէջէն, ուր անոնք շեշտեցին, որ Հայոց ցեղասպանութեան ճանաչումը մեծ նշանակութիւն ունի, քանի որ սուրիացի ժողովուրդը առաջինն էր, որ հիւրընկալեց հայ մազապուրծ ժողովուրդը այն ժամանակաշրջանին, երբ ինք նաև կը տառապէր թրքացման քաղաքականութենէն:

Նման բանաձև ընդունիլը կարևոր հանգամանք կը կրէ իբրև Հայոց ցեղասպանութեան վկաներու կողմէ ընդունուած որոշում, ինչպէս նաև արդարութեան և իրաւունքի վերադարձի արտայայտութիւն:

Վերջապէս, բանաձևին ընդունումը կարելի է դիտարկել իբրև Սուրիոյ օրէնսդիր մարմինի ներկայացուցիչներու զօրակցութիւն Հայ դատի և Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցով, ինչպէս նաև հայ ժողովուրդի իրաւունքներու հատուցման պահանջ:

ԽՄԲ. - Յօդուածագիրը Սուրիոյ խորհրդարանի անդամ է և Սուրիա-Հայաստան բարեկամական խորհրդարանական յանձնաժողովի Նախագահ:

Հայ դատի յանձնախումբն ու իր գործը եգիպտոսի մէջ

Զավեն Լիյլոզեան
Եգիպտոսի «Հուսաբեր» թերթի խմբագիր

Նախորդ համարով առաւել կամ նուազ չափով ընկալելի պատմական ակնարկ մը նետեցինք եգիպտ-հայկական առնչութիւններուն, ներկայացուցինք մեր առաւելութիւնները և թուլութիւնները մրցակցութեան մէջ: Ընթացիկ համարով պիտի փորձենք խօսիլ Եգիպտոսի մէջ Հայ դատի աշխատանքներուն մասին, որոնք ձևակերպուած են համասփիւռքեան տասնամեակներու ճամբայ կտրածի օրինակով:

Բարոյապէս դժուարութիւն ունիմ գնահատական տալու այդ աշխատանքներուն՝ անձնապէս մասնակից եղած ըլլալով անոնց մինչև հնգամեակ մը առաջ, այդուհանդերձ պիտի փորձեմ կարելի եղածին չափ առարկայական ներկայացնել զայն:

Այսպէս ուրեմն, Հայ դատ հասկացողութեան ներքոյ առաւելաբար արտաքին-յարաբերական աշխատանքը կը պատկերացուի. կապ հաստատել ինչպէս մամուլին, զանգուածային լրատուամիջոցներուն, մտաւորականութեան և քաղաքական կուսակցութիւններուն, այնպէս ալ պետական կառոյցներուն հետ, երկխօսութիւն հաստատել, քաղաքական մեր նախաձեռնութիւններուն հիւրընկալ պետութեան աջակցութիւնը ապահովել միջազգային հարթակներու վրայ և այլն:

Մեկնելով եգիպտահայ իրականութենէն, հաւաքական ներամփոփ կենցաղէն և վարքէն՝ ՀՅԴ տարբեր շրջաններու ցուցական նախաձեռնութիւնները՝ ցոյցեր և այլն, երկար ժամանակ անպատեհ կը նկատուէր կրկնօրինակել եգիպտական հողի վրայ: Արտաքին-յարաբերական աշխատանքի պահանջն ալ նոյն ջուրով կը լուացուէր: Եթէ աւելի յառաջ երթամ, կրնամ հաստատապէս ըսել, որ արտաքին-յարաբերական աշխատանքին յարմար և յանձնառու անձնակազմ այդ շրջանին կը բացակայէր: Ընկերներ թէ համակիրներ իրենց աշխատանքի բերումով ունէին ծանօթութիւններ, մտերմութիւն պետական թէ քաղաքական, տնտեսական ուժերու, դէմքերու հետ, բայց զանոնք քաղաքականապէս յարատև գործի լծելու պատրաստակամութիւնը չկար: Լաւագոյն օրինակը Եղեռնի վաթսունամեակի ոգեկոչումը կրնանք առնել, որուն ներկայ գտնուեցաւ նաև Կիպրոսի Հանրապետութեան դեսպանը և, եթէ յիշողութիւնս չի դաւաճաներ, նաև խօսք առաւ այս առթիւ: Աննախընթաց ու, դժբախտաբար, անվաղորդայն մնաց վաթսունամեակն այս իմաստով:

Նման գործակցութիւններ ոչ միայն օտար՝ եւրոպացի, այլև տեղացի անձնաւորութիւններու թէ շրջանակներու հետ հետևողական աշխատանք կը պահանջեն, միանգամայ չեն կրնար ըլլալ արդիւնքի հասնելու համար: Ասիկա չի նշանակեր, որ անոնք՝ անձնաւորութիւններն ու շրջանակները, իրենց ներկայացուցած մակարդակները անփոփոխ կը պահուին, այլ ժամանակահատուածի մը կ'արդիւնաւորուին և հարթակ կը պատրաստեն յաջորդ մակարդակին անցնելու համար:

Ինչ խօսք, ՀՅԴ Եգիպտոսի կազմակերպութիւնը, անցած դարու քսանականներէն սկսեալ, երբ հարկադրուած է, կամ առիթ ներկայացած է, լաւ ալ հանդէս եկած է եգիպտական մամուլի էջերէն կամ պետական դէմքեր հիւրընկալած իր յարկին տակ: Այսպիսի օրինակ է 1926 թուականին «Ալ Ահրամ»ի էջերով թրքական գրգռութիւնը հայ գաղթականութեան՝ Եգիպտոս հիւրընկալման առթիւ, որուն հակադարձած էր «Յուսաբեր» խմբագրականով մը ու զայն արաբերէնի թարգմանած ու առաքած եգիպտական թերթի խմբագրութեան: Նոյնպիսի օրինակ մըն է «Յուսաբեր»ի նորաբաց տան մէջ կազմակերպուած ցուցահանդէսի մը առթիւ հիւրընկալութիւնը յեղափոխական Եգիպտոսի առաջին նախագահ Մոհամմէտ Նակիպին և այլ պետական գործիչներու, ներառեալ ապագայ նախագահ Անուար էլ Սատաթը: Հետևողական չեն եղած այս յարաբերութիւնները և քաղաքական աւանդոյթի չեն վերածուած:

Նոյնը կրնանք ըսել եօթանասունականներէն մինչև երկրորդ հազարամեակի առաջին տասնամեակ երկարած ճիգերուն համար: Հետևողականութեան և աստիճանական

ընդլայնման ու բարձրացման համար գործին նուիրուած վարիչը անխուսափելի և անփոխարինելի է:

Այս վիճակը վերջ գտաւ 2006 թուականին, երբ յանձնարարուեցաւ բժ. Արմէն Մազլումեանին Հայ դատի աշխատանքը կազմակերպել Եգիպտոսի մէջ: Եւ ինչ խօսք, անիկա արդիւնաւորուեցաւ հետևողական՝ յանձնառու աշխատանքով, որ լիաժամ բանող գրասենեակի մը արդիւնք տուաւ Մեծ եղեռնի հարիւրամեակին և այնուհետև:

Չեմ գիտեր՝ ինչ կ'աւելցնէ, եթէ այստեղ տեղեկագրեմ ամբողջ աշխատանքը: Սակայն պէտք է ըսեմ, որ անիկա հիմնուեցաւ եգիպտացի մտաւորականներու, ակադեմականներու, լրագրողներու և գործիչներու խարիսխ ստեղծելու և աստիճանաբար զայն լայնցնելու, ապա անոր մակարդակը բարձրացնելու մարտավարութեան վրայ: Չեմ կրնար նաև չյիշել եգիպտացի բազմարդիւն պատմաբան Մոհամմէտ Ռէֆիաթ էլ Իմամի մասնագիտական գործակցութիւնն առաջին օրէն, որ անգնահատելի նպաստ բերաւ գործին:

Այս առթիւ տեղին է յիշատակել, որ աւելի կանուխ տեղական ՀԲԸՄ-ը նախաձեռնած էր ՌԱԿ-ի «Արև» պաշտօնաթերթին առընթեր նոյնանուն արաբերէն յաւելուածի հրապարակման՝ ապահոված ըլլալով նոյն անձնաւորութեան՝ դր. Մոհամմէտ Ռեֆիաթի աշխատակցութիւնը: Եւ այս հիման վրայ ալ յառաջացուցած էր եգիպտացի թէ հայ աշխատակիցներու և հետազօտողներու մնայուն խարիսխ մը: Այս աշխատանքը արդիւնաւորուեցաւ 1878-էն (Ս. Սթեֆանոյի և Պերլինի դաշնագիրներ) 1893 նախապատմութեամբ և 1896-էն (Համիտեան ջարդեր) մինչև 1923 օրուան եգիպտական մամուլին մէջ Հայկական հարցին ու ցեղասպանութեան տեղեկատուութեան և արձագանգին բազմահատոր շարքի հրապարակումով՝ բացառաբար վարձատրուած աշխատակցութեամբ եգիպտացի ուսումնասիրողներու:

Այդ աշխատանքի նախատիպը ՀՅԴ երիտասարդականի տղոց կողմէ «Ալ Ահրամ» թերթի էջերով 1878-1925 ժամանակահատուածին հրապարակուած և հայոց անդրադարձող նիւթերու հաւաքագրումն եղած էր անցած դարու ութսունականներու առաջին կիսուն, որ ցարդ անտիպ կը մնայ:

Ասիկա պատմութեան համար կ'արձանագրեմ, նաև ընդգծելու, որ առանց պայմանաւորուածութեան, հակառակ հին քէներու գլուխ բարձրացնելու փորձերուն ու վարկանիշ կորզելու ջանքին, փաստօրէն, մէկզմէկու ամբողջացուցինք: Ինչ արդիւնք, որ եղաւ, եթէ առողջ էր, ազգին ու Հայաստանին նպաստ էր: Խոտանը, որ անշուշտ կար այս ընթացքին, ժամանակի ընթացքին պիտի չքանայ, մոռցուի:



Նաև նկատողութիւն մը. երկու տարբեր կազմակերպութիւններու գործելակերպին կը վերաբերի անիկա: ՀԲԸՄ իր նիւթական լայն հնարաւորութիւնները օգտագործեց կայուն, անշարժ (static) արդիւնք ձեռք բերելու համար, որ կրնայ ներգործել իրմէ անկախ, մինչդեռ ՀՅԴ Հայ դատի յանձնախումբը իր անձուկ նիւթական հնարաւորութիւններու սահմանափակումները յաղթահարեց ուժական, շարժուն (dynamic) արդիւնքի հասնելու համար և հասաւ, անոր համադրեց նաև իրմէ դուրս եղած ճիգը: Ասիկա չեմ արձանագրեր կողմնապաշտական դիրքերէ:

Մեր ազգային պայքարին մէջ բնական է՝ գիրն ալ, գրականութիւնն ալ, արտաքին-յարաբերական աշխատանքն ալ ուրոյն տեղ ունին: Սակայն անոնք վերջակէտ չեն, պէտք չէ ըլլան, մանաւանդ երբ հնարաւորութիւններ կան: Բայց, ինչպէս աւելի վեր նշեցի, նուիրուած, յանձնառու, լիաժամ գործող անձնակազմի դերը կատարող անհատը անխուսափելի անհրաժեշտութիւն է:

Անցնինք առաջ: Մեծ եղեռնի հարիւրամեակին Եգիպտոսի հայ համայնքը պատկառելի մասնակցութիւն ունեցաւ երևանեան միջոցառումներուն. եգիպտացի մեծ թիւով

Եգիպտահայերը Ծիծեռնակաբերդում

լրագրողներ, թերթերու խմբագրապետեր, եգիպտական հեռուստալիքներ ուղղակի սփռում կատարեցին Ծիծեռնակաբերդ հարիւր հազարաւոր հայորդիներու երթին, սրբադասման արարողութեան և այլն, քաղաքական թէ ակադեմական գործիչներ ժողովուրդին հետ բարձրացան յուշահամալիր: Այս բոլորը հեշտ է անցողակի թուարկել, սակայն ամէն քայլափոխի համար համակարգման լուրջ աշխատանք կայ տարուած, դեռ չեմ խօսիր այս տարողութեամբ մասնակցութեան նիւթական աջակցութեան ապահովման սպառիչ բանակցութիւններուն մասին: Չեմ կարծեր, որ օրին նախագիծերուն հակադրուողները դժգոհ մնացին իրագործումէն, որ նաև օրուան ՀՀ նախագահին գնահատանքին արժանացաւ:

Սակայն այս աշխատանքը շարունակութիւն պէտք է ունենար ուսումնասիրութիւններու, գեղարուեստական գրականութեան, տեսաժապաւէններու, ցուցահանդէսներու տեսքով և մամլոյ անհամար հրատարակումներով ու անդրադարձներով, յատուկ թիւերու կամ բաժիններու լոյսընծայումով: Աւելին՝ Հայաստան թէ Եգիպտոս գիտաժողովներ, սեմինարներ և այլ միջոցառումներ կազմակերպուեցան, ոչ միշտ՝ ՀՅԴ Հայ դատի անունով, սակայն անպայման անոր համակարգումով ու ջանքով: Նոյնը՝ զանգուածային հաղորդակցութեան միջոցներով: Այս առումով նշանակալի էր հարիւրամեակէն առաջ Հայոց ցեղասպանութեան մասին վաւերագրական տեսաժապաւէնի մը պատրաստութիւնը՝ «Ո՞վ կոտորեց հայերը» վերնագրով, որ վկայութիւններու ամբողջութիւն մըն է: Դժբախտաբար, նիւթական միջոցներու սղութեան պատճառով հնարաւոր չեղաւ անոր երկրորդ բաժինի նկարահանումը, որ հարիւրամեակին համաշխարհային հեղինակութիւնները պիտի ամփոփէր: Վերջապէս՝ իրագործելի մեծաթիւ ծրագիրներ կան ոչ միայն ցեղասպանութեան նիւթին շուրջ, այլև Արցախեան հիմնահարցին նուիրուած, որ այժմէական կարևորութիւն ունի: Նկատենք, որ այս ամբողջ աշխատանքը նիւթական նուազագոյն ներդրումով կատարուեցաւ ու կը կատարուի, որ Եգիպտոսի ու եգիպտացի մարդուն որակին մասին կը խօսի:

Արդ, այսօր կարող ենք ըսել, որ Հայ դատի զանգուածային ծանօթացումը Եգիպտոսի մէջ ու անկէ դուրս հսկայաքայլ յառաջ դիմած է և օրէ օր նոր նուաճումներ արձանագրելու ուժականութիւնն ունի՝ նկատի առնելով արաբական աշխարհին մէջ Եգիպտոսի գրաւած առանցքային դիրքն ու դերակատարութիւնը:

Եւ ինչպէս նախորդ յօդուածով նկատած էի, Հայոց ցեղասպանութեան ճանաչումը Եգիպտոսի կողմէ ժամանակի հարց է, որ կը նախապատրաստուի ու կը հիմնաւորուի շարունակ:

Առանցքային կը մնայ յետճանաչման հարցը. ինչպէ՞ս պիտի օգտագործենք նման ճանաչումը և արդիւնք ստանանք անկէ, մանաւանդ եթէ հաշուի առնենք, որ Եգիպտոսի համախոհ և հաւատակից պետութիւններու շղթայական ճանաչումներ կրնան յաջորդել:

Այս մասին ճիշդ կ'ըլլայ այսօրուընէ հոգալ՝ պէտք եղած ժամանակ պատրաստ գտնուելու: Եւ ասիկա միայն տեղական համայնքին և իր կազմակերպութիւններուն ուսերուն չի կրնար ծանրանալ, հաւանաբար պետական մակարդակ ենթադրէ: Հիմնական դերակատարները պետութիւններն են, իսկ տեղական կազմակերպութիւնները՝ օժանդակ: Այս հարցերն ալ նախօրօք պէտք է ճշդուին և յստակ դերաբաշխումի նախագիծ մշակուի: Վատ չ'ըլլար այլընտրանքն ալ աչքի առաջ ունենալ: Փոխադարձ ծանօթացումը չի կրնար անվերջ շարունակուիլ:

Եգիպտահայերը «Մայր Հայաստան» արձանի մոտ

Անցնող երեք տասնամեակներուն մենք պայքարի առաջնագիծին վրայ էինք

«Դրօշակի»ի հարցազրույցը Ամերիկայի Հայ դատի յանձնախումբի ատենապետ Ռաֆֆի Համբարյանի հետ

«ԴՐՕՇԱԿ».- Ինչպէ՞ս կը գործէ Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը, ի՞նչ կառոյցով:

ՌԱՖՖԻ ՀԱՄԲԱՐԵԱՆ.- Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը (ԱՀԴՅ) հպարտօրէն կը գործէ իբրև ամերիկահայ համայնքին և մեր գործընկերներուն ձայնը, միաժամանակ աշխուժ կերպով կը փորձէ, մեր համայնքին ուժերը լծակի վերածելով, հայանպաստ վարքագիծ ապահովելու համար երկրի արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւններուն մէջ:

Յանձնախումբը կը ղեկավարուի Ամերիկայի արևելեան և արևմտեան գօտիներէն ականաւոր ամերիկահայերու կողմէ, որոնցմէ իւրաքանչիւրը երկար տարիներու փորձառութիւն ունի կազմակերպչական բնագաւառէն ներս, ինչպէս նաև խոր արմատներով կապուած է համայնքին հետ՝ երկրի ամբողջ տարածքին:

Աշխարհագրական այլազանութիւնը և անդամներուն՝ համայնքին հետ սերտ կապուածութիւնը մեզի կարելիութիւն կու տան համախմբելու երկրի ամբողջ տարածքին սփռուած ամերիկահայութեան ուժը: Այս մէկը կենսական է, որովհետև մեր աշխատանքին մեծ մասը կը կատարուի տասնեակ հազարաւոր կամաւոր նուիրեալներու կողմէ, որոնք կը գործեն իբրև տեղական գործիչներ, ղեկավարներ և նիւթապէս կը զօրակցին Հայ դատի շահերը կորովի կերպով առաջ մղելու համար:

«Դ.».- Աւանդաբար ԱՀԴՅն գործած կամ շփուած է առաւելաբար ԱՄՆի օրէնսդիր իշխանութեան հետ, քան գործադիրին: Ինչո՞ւ այսպէս եղած է:

ՐՀ.- Մեր կեդրոնացումը եղած է արդիւնք ձեռք բերելը: Ամերիկայի քաղաքական համայնապատկերին մէջ մենք կը փորձենք մեր կարելիութիւնները լծակի վերածել, որպէսզի մեր նպատակները իրագործենք:

Իբրև երկրի սահմանադրական ազատութիւնները վայելող համայնք, աչքի առջև ունենալով դաշնակցային համակարգին մէջ փոխադարձ հակակշիռները, ինչպէս նաև երկրի արտաքին քաղաքականութեան ռազմավարական առաջնահերթութիւնները ձևաւորող տուեալները, մենք շատ յաճախ կրցած ենք շինիչ փոփոխութիւններ մտցնել գործադիրի քաղաքականութեան մէջ զանազան միջոցներով: Այս միջոցներէն են Սպիտակ տան և դաշնակցային զանազան օղակներուն հետ

Ամերիկայի Հայ դատի յանձնախումբի ատենապետ Ռաֆֆի Համբարեան

մեր ուղիղ կապերը: Թէև աւելի յաճախ կը նկատենք, որ Քոնկրէսին հետ մեր գործը կ'արդիւնաւորուի օրէնսդրական մարզէն ներս, որ իր դրսևորումը կ'ունենայ վարչակազմի քաղաքականութեան մէջ: Տամ երկու աչքառու օրինակներ. մէկը՝ Հայաստանի և Արցախին օժանդակութիւնը, միւսը՝ Ատրպէյճանի դէմ սեղմումներ հաստատող 907րդ պարբերութիւնը:

Թէև պէտք է նշենք, որ ամերիկեան սահմանադրութիւնը լայն իրաւասութիւններ կու տայ Քոնկրէսի զոյգ պալատներուն (Ներկայացուցիչներու տուն և Ծերակոյտ) ոչ միայն օրէնքներ մշակելու իմաստով, այլ նաև դաշնակցային մակարդակի յատկացումներ ընելու համար. մեր պարագային՝ Հայաստանին և Արցախին: Ծերակոյտը կենսական դեր ունի մեր աշխատանքներուն համար, որովհետև սահմանադրութիւնը անոր տուած է դաշնագրեր և նախագահական նշանակումները վաւերացնելու լիազօրութիւն, օրինակ՝ թէ ով պիտի գրաւէ Թուրքիոյ կամ Ատրպէյճանի մէջ ԱՄՆ դեսպանի պաշտօնը:

Գալով գործադիրին՝ մենք աշխուժ կապի մէջ ենք պետական բաժանմունքին

(այսպէս կը կոչուի ԱՄՆի արտաքին գործոց նախարարութիւնը - «Դ.») և կառավարական այլ օղակներուն հետ:

Կը խորհիմ, որ օրէնսդիր իշխանութեան հետ մեր

աշխատանքը (Քոնկրէսի զոյգ պալատներու 535 անդամներով) շուքի տակ կը ձգէ Սպիտակ տան և գործադիրի այլ օղակներուն հետ մեր գործը: Իրականութեան մէջ զոյգ ուղղութիւններով մենք շատ գործունեայ ենք:

Մեր համայնքին դրուածքը յատկապէս շատ կը պատշաճի քոնկրէսական խաղի կանոններուն: Մեր մղումները բարձր են. մենք շատ լաւ կազմակերպուած ենք, տարածուած գրեթէ բոլոր՝ 50 նահանգներուն մէջ, մենք աշխուժօրէն կը գործենք քոնկրէսական հարիւրաւոր ընտրաշրջաններէ ներս: Մեր այս ընդարձակ ներկայութիւնը կենսական է, որպէսզի օրէնսդրական գործընթացին մէջ կարենանք գործի լծել մեր ընտրազանգուածը: Իրականութեան մէջ մենք Ուաշինկթընի մէջ ճանչցուած ենք իբրև ազդեցիկ խմբաւորում, որ ընտրազանգուածէն հազարաւորներ կրնայ գործի լծել արագօրէն:

Մեր աշխարհագրական տեղաբաշխումը (մեր համայնքի այլազանութիւններէն մին) մեծ ուժ է: Այն փաստը, որ մեր համայնքները (օրինակ՝ Ֆրեզնոն Քալիֆորնիոյ, Ռոթըրթաունը Մէսէչուսեցի, Շիքակոն Իլլինոյի մէջ) Քոնկրէսէն ներս ներկայացուած են ուժեղ դէմքերով, կը նշանակէ, որ ԱՀԴՅՆ աւելի ազդեցութիւն և կարելիութիւններ ունի մեր վարքագծային թիրախներուն հասնելու համար:

Նոյնն է պարագան Ծերակոյտին հայախիտ նահանգներու մէջ: Միակ տարբերութեամբ, որ կան քիչ թիւով հայերով բնակեցուած նահանգներ (ինչպէս՝ Այտահոն), սակայն նոյնիսկ այդ տեսակ վայրերու մէջ, երբ ունինք թէև փոքրաթիւ, բայց կազմակերպուած համայնքներ, կրցած ենք քաղաքական յաջողութիւն արձանագրել:

«Դ.».- Օտար, ինչպէս նաև հայաստանեան մամուլին մէջ ԱՀԴՅՆ կը բնութագրեն իբրև «հայկական լոպպի», մինչ յանձնախումբը ինքզինք կը համարէ «ժողովրդային արմատներով» կազմակերպութիւն: Կրնա՞ք լուսաբանել:

ՐՀ.- ԱՀԴՅՆ ամերիկեան լոպպիինկ է: Երբ տիրութիւն կ'ընենք մեր իրաւունքներուն (հաւաքներու, տեսակէտներու արտայայտման, մեր դժգոհութիւնները կառավարութեան հասցնելու իմաստով), մենք կը գործենք իբրև ամերիկացիներ:

Մեր թշնամիները (Թուրքիոյ և Ատրպէյճանի կառավարութիւնները)՝ իբրև օտար կողմեր, կը փորձեն ազդեցութիւն ձեռք ձգել Ամերիկայի վրայ: Հետևաբար կ'ուզեն մեզ ներքաշել իրենց մակարդակին, որպէսզի մենք երևանք իբրև «նուազ ամերիկացի», թերևս ալ որպէսզի իրե՛նք երևին իբրև նուազ օտար: Այս պատճառով է, որ իրենք միշտ կը ձգտին ԱՀԴՅՆ ցոյց տալու իբրև օտար լոպպի մը: Իրականութիւնը անշուշտ այն է, որ մենք կը գործենք ԱՄՆի մէջ 1890ականներէն ի վեր, երբ կան ընտանիքներ, որոնց արդէն չորրորդ, հինգերորդ և նոյնիսկ վեցերորդ սերունդն է, որ մասնակից է քաղաքացիական գործունէութեան:

Անգարայի և Պաքուի համար «դժբախտութիւնը» այն է, որ մենք ամերիկահայեր ենք, որոնք գործունեայ են երկրի ժողովրդավար գործընթացներուն մէջ: Դժբախտաբար, սակայն (և անակնկալ մը չէ), որ Ատրպէյճանը և Թուրքիան կառավարող ուժերը շատ բան չեն գիտեր, թէ ճիշդ ի՛նչ է ժողովրդավարութիւնը: Սակայն բոլոր անոնք, որոնք մեզ լաւ կը ճանչնան և կը գործակցին մեզի հետ մայրաքաղաք Ուաշինկթընի մէջ, գիտեն, թէ ընտրուած պաշտօնատարներու հետ մեր աշխատանքը հարազատօրէն ամերիկեան է:

«Դ.».- Նկատուած է, որ ԱՀԴՅՆ կ'աշխատի թէ՛ դեմոկրատ և թէ՛ հանրապետական պաշտօնատարներու հետ: Միւս կողմէ ուրիշներ յանձնախումբը «մօտիկ» կը համարեն մէկ կամ միւս կուսակցութեան: Յանձնախումբին համար ո՞րն է չափանիշը:

ՐՀ.- ԱՀԴՅՆ Հայկական դատը առաջ մղելու աշխատանքին լծուած է, դատ մը, որ մօտաւորապէս երկու միլիոն ամերիկահայերուն սրտամօտ է: Մինչ մենք սերտօրէն կը գործակցինք հիմնական երկու կուսակցութիւններուն (Դեմոկրատ և Հանրապետական), ինչպէս նաև Անկախ կուսակցութեան հետ, մենք ջատագովը չենք այս կամ կողմին: Մեր համայնքներուն մէջ բազմաթիւ գործիչներ ունինք, որոնք ջերմ դեմոկրատ կամ հանրապետական են, և մենք կը յարգենք զիրենք: Հետևաբար յանձնախումբը կը հաւատայ, որ, երկկուսակցական ուղղութեամբ մեր շահերը առաջ մղելով, սերտօրէն գործակցելով թէ՛ Հանրապետական և թէ՛ Դեմոկրատ կուսակցութեան հետ, մենք արդիւնքի կը հասնինք Հայաստանի ու

Քննարկում Ծերակոյտի արտաքին յարաբերութեանց յանձնաժողովի բանալի անդամներէն, Նիւ Ճըրզի նահանգէն ծերակուտական Ռապըրթ Մենենտեզի հետ: Նկարին մէջ աջին կ'երևին նաև թեմի առաջնորդ Անուշաւան արք. Դանիէլեան և Տ. Սարգիս քհնյ. Ագթաւուքեան:

Արցախի համար: Հայկական ցեղասպանութեան ճանաչման բանաձևի՝ Ներկայացուցիչներու տան գրեթէ միաձայնութեամբ (405 թեր, 11 դէմ), իսկ Ծերակոյտի բոլոր 100 քուէներով քուէարկուիլը վկայութիւնն է մեր մօտեցումին իմաստութեան:

«Դ.».- Հայոց ցեղասպանութեան, Արցախի անկախութեան ճանաչման, ինչպէս նաև Հայաստանի օժանդակութեան հարցերով ԱՀԴՅՆ ի՞նչ կրցած է իրագործել անցնող քանի մը տարիներուն:

ՐՀ.- Քոնկրէսէն ներս ցեղասպանութեան ճանաչման՝ գրեթէ միաձայնութեամբ քուէարկուիլը հրաշք չէր: Ատիկա ուղղակի արդիւնքն էր ժողովուրդի մակարդակով այն աշխատանքին, որ յանձնախումբը կազմակերպած էր տասնամեակներէ ի վեր: Երբ կը նայիք ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ տարուող այս աշխատանքին, իւրաքանչիւր գլխաւոր ճիգի ետին կանգնած էր ԱՀԴՅՆ իր հազարաւոր զօրակցողներով և կամաւորներով, ամբողջ երկրի տարածքին:

Գալով Արցախին՝ ԱՀԴՅՆ կուռ օրակարգ մը ձևաւորած է՝ զօրակցելու համար Արցախի Հանրապետութեան ազատ և անկախ գոյութեան: Մեր շրջանային և տեղական յանձնախումբերը միշտ պատնէշի վրայ գտնուած են, որպէսզի ապահովեն Արցախի ճանաչումը ամբողջ Ամերիկայի տարածքին: Ասի փոքր աշխատանք չէ և ցոյց կու տայ յանձնախումբին անկոտրում նուիրումը Արցախի ժողովուրդին, որուն զաւակները նոյնիսկ զոհեցին իրենց կեանքը, որպէսզի ազատագրուին Ատրպէյճանի լուծէն:

Արցախի կապակցութեամբ անցնող քանի մը տարիներուն մենք գործած ենք հետևեալ ուղղութիւններով.

Առաջին՝ մղած ենք ամերիկեան իշխանութիւնները, որպէսզի Արցախի ականազերծման համար աշխատող «HALO Trust» կազմակերպութեան համար ուղիղ օժանդակութիւն ցուցաբերեն:

Երկրորդ՝ դիմած ենք խաղաղութեան կիզակէտով մշակուած նախաձեռնութիւններու (Ռոյս-Էնկել ծրագիրը), որ լուսաբձակի տակ կ'առնէ Ատրպէյճանի ռազմամոլ նկարագիրը:

Երրորդ՝ ԱՀԴՅՆ գործակցած է Քոնկրէսէն ներս շահագրգիռ և մեզի մօտիկ կողմերու հետ, որպէսզի առաջ մղէ Արցախ ճամբորդելու և հաղորդակցութեան օրինագիծը: Այս մէկը կը միտի բնականոնացնելու դաշնակցային օրէնսդիր և գործադիր պաշտօնատարներու ճամբորդութիւնը դէպի Արցախ և հաղորդակցիլը այնտեղի իրենց պաշտօնակիցներուն հետ:

Չորրորդ՝ ԱՀԴՅՆ հիւրընկալեց Արցախի բազմաթիւ պաշտօնատարներ Քափիթոլ Հիլի մէջ այդպէս կը կոչուի Քոնկրէսի շէնքը - «Դ.»), որպէսզի

Ռաֆֆի Համբարեան Արցախի օժանդակութեան հարցը կը քննէ Ներկայացուցիչներու տան յատկացումներու յանձնաժողովի անդամ Ճեֆ Ֆորթընպերիի հետ

Արցախը մասնակից դառնայ վարքագծային քննարկումներուն Ուաշինկթընի մէջ:

Հինգերորդ՝ ԱՀԴՅՆ քաջալերեց Քոնկրէսի անդամներու՝ Արցախ այցելութիւնը, բան մը, որ դժբախտաբար չի քաջալերուիր ամերիկեան Պետական բաժանմունքին կողմէ:

Վեցերորդ՝ յանձնախումբը առաջնորդեց Իսրայէլի կողմէ Ատրպէյճանին հակաօդային «Iron Dome» համակարգերու վաճառքին խափանումին ճիգերը:

Եօթերորդ՝ Ծերակոյտէն ներս մեր բարեկամներուն հետ գործակցաբար խափանեցինք Մէթիու Պրայզայի՝ Պաքուի մէջ դեսպան նշանակումը:

Վերջին օրինակը, որ կրնամ տալ, յանձնախումբը ճիգեր թափեց, որպէսզի ամերիկեան 45 միլիոն տոլարի ուղղակի օժանդակութիւն տրուի Արցախին: Այժմ մենք կրկնապատկած ենք մեր ճիգերը, որպէսզի Ամերիկան զօրակցի Արցախի մէջ տարուող մարդասիրական աշխատանքներուն:

Գալով Հայաստանին տրուող օժանդակութեան՝ անցնող երեք տասնամեակներուն ընթացքին մենք պայքարի առաջնագիծին վրայ էինք՝ 2.5 միլիառ տոլարի ամերիկեան օժանդակութիւն ապահովելով Հայաստանին:

Ամերիկեան այս օժանդակութիւնը գործածուած է բազմաթիւ բնագաւառներէ ներս՝ Արարատի մարզէն ներս ոռոգման համակարգերէն և գիւղական ճամբաներու նորոգութենէն մինչև կանանց առողջապահական կեդրոններ: Անցեալ տարի մենք բուռն թափով զօրակցեցանք Քալիֆորնիայէն քոնկրէսական տիկ. Ճէքի Սփիրի օրինագիծին, որ կ'առաջադրէր աւելցնել Հայաստանին տրուող օժանդակութիւնը: Այս ճիգերուն շնորհիւ օրինագիծը որդեգրուեցաւ, և ներկայ ելևմտական տարուան ընթացքին Հայաստան պիտի ստանայ ամերիկեան յաւելեալ օժանդակութիւն: Ասիկա հարիւրաւոր օրինակներէն մէկն է, ուր Ամերիկայի Հայ դատի

յանձնախումբը կը կանգնի Հայաստանի ժողովուրդին կողքին Ուաշինկթընի մէջ։

«Դ.».- Թրամփի ներկայ վարչակազմին հետ ԱՀԴՅն յարաբերութեանց ի՞նչ խողովակներ ունի, յատկապէս՝ Սպիտակ տան կողմէ Հայկական ցեղասպանութեան ճանաչման ճիգերու իմաստով։

ՐՀ.- Ինչպէս նախորդ տասնամեակներուն, այժմ ևս մենք կը մնանք յանձնառու, ինչ կը վերաբերի նախագահի Ազգային ապահովութեան խորհուրդին և Պետական բաժանմունքին հետ՝ վարքագծային բոլոր հարցերուն կապակցաբար։ Միաժամանակ կը գիտակցինք, որ ներկայիս վարքագիծ-քաղաքականութիւն ճշդելու գործընթացը կը տարբերի նախորդ վարչակազմերու մեթոտէն։ Այս ոչ ուղղափառ դրուածքին մէջ մենք ուղղակի և անուղղակի միջոցներով կը փորձենք ազդել որդեգրուելիք քաղաքականութեան վրայ՝ երբեմն վստահելով մեզի բարեկամ հանրապետական քոնկրէսականներու և այլ շահագրգիռ կողմերու, որպէսզի մեզի նպաստաւոր թիրախներու հասնինք և խափանենք վնասակարները։

«Դ.».- Ինչպէ՞ս կը բնութագրէք յանձնախումբին և Ուաշինկթընի մէջ ՀՀ դեսպանատան յարաբերութիւնները։

ՐՀ.- ՀՀ դեսպանատան հետ մեր կապերը շինիչ են։ Ներկայիս դեսպանը ազդեցիկ դիւանագէտ մըն է՝ իր առաքելութեան յստակ գիտակցութեամբ։ Անցեալին Հայաստանէն կատարուած դեսպանական նշանակումները եղած են կուսակցական նկատառումներով, կամ նշանակուած են այնպիսի դէմքեր, որոնք յաւակնած են համայնքային ղեկավարումի։ Սա սխալ էր։ Հայաստանի դեսպանատունը ամէն իրաւունք ունի խօսելու Հայաստանի կողմէ, սակայն չի կրնար խօսիլ ամերիկահայերու անունով, չի կրնար համայնքի ղեկավարի դերին յաւակնիլ կամ քաղաքական գործունէութիւն ունենալ Ամերիկայի տարածքին։

Վստահ եմ, որ հետագային պիտի շարունակուի ներկայիս ընթացքը՝ լուրջ աշխատանք լուրջ դեսպանի մը հետ Ուաշինկթընի մէջ։

Արցախի նախագահ Բակո Սահակեանի հետ

ԱՀԴՅի՝ ամերիկահայ ուսանողներու համար անցեալ տարի կազմակերպած խորհրդաժողովին

«Դ.».- Ինչպէ՞ս կը բնութագրէք ԱՀԴՅի ներկայիս օրակարգը, յատկապէս ինչ կը վերաբերի ճանաչման և հատուցման։

ՐՀ.- Մեր ռազմավարական թիրախն է ԱՄՆն արդարութեան խափանումի դիրքերէն մղել հոն, ուր հայութիւնը յաջողի հասնելու արդարութեան՝ կատարուած ոճիրին համապատասխան։ Քոնկրէսական ճանաչումը կարևոր քայլ մըն էր այս ուղղութեամբ։ Թուրքիոյ կողմէ Սպիտակ տան պարտադրուած «բերան փակելու» մերժումը յաջորդ քայլն է։ Այդ կէտէն մենք ջատագովը պիտի ըլլանք ամերիկեան աւելի ներգործօն քաղաքականութեան մը, որ սուղ գին վճարել տայ Թուրքիոյ՝ իր ուրացման համար, միաժամանակ՝ մեկուսացնել Անգարան, որպէսզի չկարենայ խափանել արդարութեան երթը։

Ասոր զուգահեռ՝ պիտի շարունակենք քանդել այն արգելքները, որոնք կը ցցուին այն ամերիկահայերուն դիմաց, որոնք կփորձեն իրաւական հատուցում ստանալ ցեղասպանութեան օրերու արդար պահանջներու իմաստով։ Իսկ աւելի լայն իմաստով՝ պիտի շարունակենք իրաւական լուծումներու հետապնդումը Հայկական իրաւական կեդրոնին (Armenian Legal Center) կողքին, անհատական, համայնքային և ի վերջոյ համազգային մակարդակներու վրայ։

«Դ.».- Ներկայիս ի՞նչ են ԱՀԴՅին առաջնահերթութիւնները:

ՐՀ.- Մեր յանձնախումբին ճշդած 2020ի առաջնահերթութիւնները կը ներառեն ռազմավարական նախաձեռնութիւններ, որոնք բոլորն ալ ի վերջոյ թիրախ ունին ստեղծելու Միացեալ, Ազատ և Անկախ Հայաստան մը, պետութիւն մը, որ խաղաղօրէն ապրի տարածաշրջանէն ներս, զինակցի Մ. Նահանգներու հետ և համարկուի ազգերու համաշխարհային ընտանիքին:

Հայաստանի տնտեսական զարգացումին զօրակցելու նպատակով ԱՀԴՅն կ'աշխատի ԱՄՆ-Հայաստան կրկնակի հարկերը զանց առնող համաձայնագրի մը մշակումին: Ներկայիս Հայաստան նման համաձայնագիր չունի ԱՄՆի հետ:

Հայաստանի կրթական համակարգը ուժեղացնելու համար ԱՀԴՅն աշխատած է՝ իրականացնելու համար 145 միլիոն տոլարի յատկացում մը, որ ուղղուած ըլլայ Հայաստանի հանրային դպրոցներուն մէջ գիտութեան, արհեստագիտութեան, ճարտարագիտութեան, արուեստներու և ուսողութեան զարգացումի, հազարամեակի մարտահրաւէրներու ծրագրի ծիրէն ներս: Մենք կ'ուզենք, որ Հայաստանի հանրային դպրոցներու աշակերտներուն հասանելի ըլլան այսպիսի յատկացումները, որոնք նաև աւելի քան 100 դպրոցներ վերանորոգելու առաջադրանքը ունին:

Քաջալերելու համար այն անհատները, որոնք կ'ուզեն իրենց հանգստեան թոշակները Հայաստանի մէջ ստանալ, ԱՀԴՅն նախաձեռնած է օրինագիծի մը մշակման (US-Armenia Social Security Totalization Agreement): Նման համաձայնագիր մը պիտի ներդաշնակէ ծերութեան թոշակի հարցը Հայաստանի և Մ. Նահանգներու միջև՝ մեծապէս դիւրացնելով պարագան այն ամերիկահայերուն, որոնք կ'ուզեն իրենց պատմական հայրենիքը հաստատուիլ ու հոն ստանալ իրենց թոշակները: Այս մէկը հրաշալի պատեհութիւն մը պիտի հանդիսանայ:

Յանձնախումբը նաև աշխատած է կորովի կերպով հետազօտելու Երևան-Լոս Անճելըս ուղիղ թռիչքներու կարելիութիւնները՝ ցարդ կատարուած ամէնէն խոր հետազօտութիւնը այս նիւթով: Նման ուղիղ թռիչքները տնտեսական մեծ օգուտներ կրնան տալ Հայաստանին՝ յաւելեալ զբօսաշրջութիւն և պիզնես:

Բազմաթիւ այլ նախապատուութիւններ ևս կան, սակայն վերջապէս կ'ուզեմ նշել ԱՀԴՅին յատուկ ծրագիր մը՝ երիտասարդ ամերիկահայերը ունենալով իբրև նպատակ: Մենք ամէն տարի աւելի ու աւելի զարկ կու տանք մեր ամառնային վարժողական ծրագիրներուն, օրինակ՝ ԱՀԴՅի «Լէօ Սարգիսեան» ամառնային ծրագիրը, ուր տաղանդաւոր ամերիկահայ համալսարանականներ աշխատանքային փորձառութիւն կը շահին Հայ դատի աշխատանքներուն մէջ, Ուաշինկթընի մէջ: Մենք զարկ տուած ենք նաև «Յովիկ Աբօ Սաղտրճեան» ծրագրին, որուն շնորհիւ ամերիկահայ համալսարանաւարտներ աշխատանքի կը տեղաւորուին հանրային քաղաքականութեան հարիւրաւոր բնագաւառներէ ներս՝ քաղաքական, կառավարական, մինչև միտիա և այլն:

«Դ.».- Շնորհակալութիւն Ձեզի՝ այս սպառիչ տեղեկութիւններուն համար:

Լոս Անճելըս, ապրիլ 2020

«Լէօ Սարգիսեան» վարժողական ծրագրի մասնակիցները ԱՀԴՅի «Արամեան տան» շէնքին մուտքին, Ուաշինկթըն: Նկարին մէջ կ'երևին Յանձնաժողովի՝ կառավարական հարցերու վարիչ Թերեզա Երիմեան և նշեալ ծրագրի վարիչ Սիփան Օհաննէսեան:

Լոս Անճելըսի Ազգ. «Ալեքս Փիլիպոս» վարժարանի 8րդ դասարանի աշակերտները Յանձնախումբի շէնքին մուտքին, գրասենեակի վարիչ-տնօրէն Արամ Համբարեանի հետ

Դիարբեքիրի հայկական եկեղեցիները եւ հայերը

Կարոտ Սասունյան

Կարոտ Սասունյանը ծնվել է Սասուն գավառի Ղալի գյուղում: Համալսարանական կրթությունը ստացել է Դիարբեքիր քաղաքում, որտեղ և բնակություն է հաստատել ուսումն ավարտելուց հետո: Մասնագիտությամբ լուսանկարիչ է, լուսանկարում է հայրենի Սասունի և հարակից շրջանների հայկական պատմական հուշարձանները կամ այն, ինչ մնացել է դրանցից: Առաջիկայում լույս կտեսնի նրա լուսանկարների ալբոմը: Հետաքրքրված է հայոց գավառների հատկապես վերջին 100 տարիների պատմությամբ, լուսանկարում և գրի է առնում այն ամենը, ինչը կարող է վրիպել հետազոտողների աչքից: Գրում է հայրենի եզերքի, այնտեղ բնակվող հայոց բեկորների մասին:

Տիգրան Բ Մեծի կառուցած 7 և նրա անունով կոչված խոշոր քաղաքներից ամենամեծ ու ամենաշքեղ Տիգրանակերտը. . . Տիգրիս գետի ափին՝ ապառաժների մեջ կառուցված, ամեն ինչի հսկայականը մեկտեղած մի խոշոր քաղաք, որը շրջապատված է աշխարհի ամենաերկար պարսպով: Թեև Չինական պատն է հայտնի որպես աշխարհի ամենաերկար կառույց, սակայն Չինաստանինն ընդամենը պատ է, իսկ Դիարբեքիրինը՝ պարիսպ: 5 կմ ընդհանուր երկարություն ունեցող սույն պարիսպն ունի 92 աշտարակ (ներառյալ միջնաբերդի աշտարակները), 4 հիմնական դարպաս՝ Դաղ Քափըն կամ Խարբերդի դարպասը, Ռում Քափըն կամ Ուրֆայի դարպասը, Թելլ Քափըն կամ Մարդինի դարպասը և Յենի Քափըն կամ Նոր դարպասը: Քաղաքի գլխավոր՝ Խարբերդի դարպասին փորագրված են Վահագն աստծո, Անահիտ աստվածուհու և Տիգրան Մեծի պատկերները: Բացի այդ՝ պարսպի վրա կան հռոմեացիների, բյուզանդացիների և արաբների թողած արձանագրություններ:

Պատմական աղբյուրների համաձայն՝ Տիգրանակերտն ուներ 33 եկեղեցի: Հնագույններից մեկը Մար Թոմա եկեղեցին էր, որը սկզբում հայկական հեթանոսական տաճար էր եղել, ասորական արշավանքներից հետո դարձել էր Մար Թոմա եկեղեցի, իսկ արաբական արշավանքներից հետո՝ վերածվել մզկիթի: Այս կառույցը պահպանում է հեթանոսական ժամանակաշրջանի մոտիվներ և պատկերներ: Արևմտյան հատվածի սյուներից մեկի վրա փորագրված է հավերժության նշանը, իսկ դռան վերևում գտնվող քարի վրա նկատելի են Վահագն աստծո և Անահիտ աստվածուհու պատկերները:Այստեղ է գտնվում նաև Մերձավոր Արևելքի ամենամեծ եկեղեցին՝ Սուրբ Կիրակոսը: 1516-1517 թթ. օսմանյան թագաժառանգի պահանջով Սուրբ Թեոդորոս եկեղեցին վերածվեց Ֆաթիհ փաշա անվամբ մզկիթի, որը հայտնի է նաև որպես Քուրշունլու մզկիթ: Ծխականների մի մասն իսլամացվեց: Համայնքի այն անդամները, որոնք իսլամ չէին ընդունել, Սուրբ Թեոդորոս եկեղեցու գերեզմանոցի տարածքում կառուցեցին յոթ խորանով Սուրբ Կիրակոս եկեղեցին, որին սպասարկած հոգևորականների անունները հիշվում են առ այսօր՝ Հակոբ, Կարապետ, Ստեփան, Արթին, Հեզաքիլ, Արսեն. . .

Դիարբեքիրի բերդը

Սուրբ Կիրակոս եկեղեցու զանգակատունը 1913 թ. փլվեց կայծակի հարվածից: 1914 թ. համայնքը հավաքեց 2000 ոսկի և վերակառուցեց այն առավել բարձր ու շքեղ, ձեռք բերեց նաև նոր և ավելի մեծ զանգ: Զանգակատունը տեսանելի էր քաղաքի ամեն անկյունից, իսկ զանգի ղողանջը լսվում էր անգամ Տիգրանակերտից շատ հեռու գտնվող բնակավայրերում: Եվ քանի որ նոր զանգակատունը բարձր էր քաղաքի բոլոր մզկիթների մինարեթներից, իշխանությունները 1916 թ. թնդանոթի համազարկերով քանդեցին այն:

Հեթանոսական շրջանում կառուցված, իսկ հետագայում եկեղեցու վերածված կառույցներից է նաև Մարիամ Աստվածածին ասորական եկեղեցին, որն այսօր միակ եկեղեցին է, որում պատարագ է մատուցվում: Եկեղեցին ունի քահանա և փոքր համայնք: Արարողությունների համար նրա ծառայություններից օգտվում են նաև փոքրաթիվ քաղդեացիներն ու հայերը: Ժամանակ առ ժամանակ տեղի մուսուլմանները ևս, հատկապես՝ մահմեդական կանայք, այցելում են այդ եկեղեցի՝ իրենց հոգևոր պահանջմունքները բավարարելու համար:

Քաղաքի հնագույն եկեղեցիներից է 5 խորան ունեցող Սուրբ Սարգիսը (Հըզըր Էլյաս): Այն

մեծությամբ զիջում է միայն Սուրբ Կիրակոսին, կառուցվել է 1515 թ.: 1850 թվականից ծառայել է կաթոլիկ հայերին: Մինչև 1915 թ. եկեղեցու համայնքն ունեցել է 7 դպրոց, 1915 թվականից հետո վերածվել է զինամթերքի պահեստի, ապա՝ բրնձի գործարանի: Ներկայումս այն ավերակ է. պահպանվել են կիսաքանդ պատերը:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայկական կաթոլիկ եկեղեցին (Խոջա Հովսեփը) կառուցվել է 1800-ական թվականներից հետո, երբ սուլթանի թույլտվությամբ հայկական քաղաքներ են եկել եվրոպացի և ամերիկացի միսիոներներ: 3 խորան ունեցող այս եկեղեցին պատկանում էր հայ կաթոլիկ համայնքին և ենթակա էր Կ. Պոլսո հայ կաթոլիկ եկեղեցուն: Այստեղ սպասարկել են հոգևորականներ Հակոբ Բահթիարը, Մեսրոպը, Ալեքսիրը, Հովսեփը, Ֆերահյանը և վարդապետ Անդրեասը: Եկեղեցին մեծապես վնասվեց 2015 թ. թուրք զինվորների և քրդերի միջև ընդհարումների պատճառով: Զանգակատունն ամբողջությամբ քանդվել էր, սակայն 2019 թ. վերականգնվեց և վերստացավ նախկին տեսքը:

Սուրբ Փրկիչ եկեղեցին կառուցվել է 1850-ական թվականներից հետո, երբ սուլթանի թույլտվությամբ այս անգամ էլ հայկական քաղաքներ ժամանեցին եվրոպացի և ամերիկացի բողոքական միսիոներներ: Սույն եկեղեցին իր ճարտարապետական տեսքով տարբերվում է մյուս հայկական եկեղեցիներից: 1871 թ. եկեղեցին ուներ 650 հայ հետևորդ և 3 դպրոց:

Մինչ վերջերս գործում էր քաղդեացիների Մոր Փեթյուն եկեղեցին, որը նույնպես մեծ վնաս կրեց 2015 թ. վերոնշյալ դեպքերի պատճառով: Այժմ վերականգնվում է:

Այստեղ կա նաև եվրոպացի միսիոներների կողմից կառուցված լատինական եկեղեցի, որը մինչև 2015 թ. օգտագործվում էր որպես նախակրթարան և կրում էր Սյուլեյման Նազիֆի անունը:

Երկար տարիներ որպես բանտ օգտագործված

Առաջին պատարագը Սուրբ Կիրակոսում

Սուրբ Կիրակոս եկեղեցու զանգակատունը

միջնաբերդում, որտեղ կային նաև պալատական կառույցներ, գտնվում է բյուզանդական ժամանակաշրջանում կառուցված Սենթ Ժորժ եկեղեցին, որն այսօր վերականգնված է և պալատի մյուս շինությունների հետ կատարում է թանգարանի գործառույթ:

Դիարբեքիրում մինչև 1915 թ. մոտավորապես 60 հազար հայ էր ապրում: Ցեղասպանությունից հետո նրանցից ընդամենը 1800 հոգի էր մնացել, որոնց մի մասն իսլամացվել էր, մի մասն էլ ստիպված էր եղել Ստամբուլ գաղթել, մի խումբ էլ՝ Քամիշլի: Դիարբեքիրում մնացած սակավաթիվ հայկական ընտանիքները մինչև 1980-ական թվականներն ապրում էին որպես Սուրբ Կիրակոս եկեղեցու համայնքի անդամներ: 1980 թ. ռազմական հեղաշրջումից հետո նրանք ստիպված էին Ստամբուլ տեղափոխվել, ինչից հետո եկեղեցին դադարեց գործել: Լքված եկեղեցուց գողացան 830-ամյա մագաղաթե Ավետարանը: Մի քանի տարի անց այն գտան Ստամբուլում, երբ ինչ-որ մարդիկ ցանկանում էին գանձագողերին վաճառել, և հանձնեցին Դիարբեքիրի թանգարանին: Ավետարանը ներկայումս պահվում է այս թանգարանում:

1990-ականներին Դիարբեքիրի նահանգի գյուղերից այստեղ եկած մի քանի հայեր, ինչպես, օրինակ, Քազանչը Անդրանիկ Ջորը և Լուսյեն Բաջոն, բնակվում էին լքված ու ավերված Սուրբ Կիրակոս եկեղեցուն կից կառույցում: Բացի այդ՝ եկեղեցու բակում կառուցված տներում էին բնակվում նաև

Դիարբեքիրի պարսպի Ուրֆայի դռան

Սասունից և Լիջեից եկած 2 հայկական ընտանիքներ:

Սուրբ Կիրակոս եկեղեցին 2011 թ. վերանորոգվեց արտասահմանաբնակ բարեգործ հայերի հատկացրած գումարով: 1915 թ. քանդված զանգակատունը ևս վերականգնվեց ըստ բնօրինակի, իսկ զանգը պատրաստվեց Ռուսաստանի Դաշնությունում:

Սուրբ Կիրակոս եկեղեցու հայկական համայնքը վերստին սկսեց մեկտեղվել: 5-10 հոգանոց համայնքի թիվը եկեղեցու վերականգնումից հետո սկսեց օրեցօր աճել: Համայնքն ամսվա մեջ մեկ օր նախաճաշի արարողություն էր կազմակերպում, որին սկզբում շուրջ 30-40 հոգի էր մասնակցում, իսկ հետագայում այդ թիվը հասավ 150-ի: Առաջին պատարագը մատուցվեց 2011 թ. հոկտեմբերի 23-ին եկեղեցու վերաբացման առթիվ՝ պատրիարքի փոխանորդի գլխավորությամբ: Արարողությանը մասնակցեցին բազմաթիվ մարդիկ:

Չորս տարում Սուրբ Ջատկի տոնի մասնակիցների թիվը 2-3 տասնյակից հասավ 1200-ի: 2015 թ. եկեղեցու համայնքի անդամները 1200 փաթեթ էին պատրաստել, որոնցում կային ներկած ձվեր և Սուրբ Հարության տոնին պատրաստվող հատուկ քաղցրավենիք՝ չյորեք: Բոլոր փաթեթներն սպառվեցին: Անգամ եղան հյուրեր, որոնց փաթեթ չհասավ: Այսինքն՝ Սուրբ Ջատկի տոնին եկեղեցում կազմակերպված արարողությանը 1200 հոգուց ավել մարդ էր մասնակցել: Նրանցից շուրջ 400-ը Սփյուռքից ու Հայաստանից եկած հայեր էին: Մոտավորապես 400-ն էլ քրդեր էին և իսլամացված հայ ընտանիքներ: Իսկ մնացած 400 հոգին Սասունից, Մուշից, Վանից, Խարբերդից ու Մարդինից եկած հայերն էին: Եկեղեցու բակը կարծես տոնահանդեսի էր վերածվել:

Դիարբեքիրում ապրող հայերն անթեղի պես սկսել էին վերստին բոցավառվել: Նրանք դիմեցին պատրիարքարան, որպեսզի, տարեկան մեկանգամյա պատարագից բացի, կատարվեն նաև մյուս արարողությունները: Հարկավոր էր ունենալ մշտապես գործող քահանա: Գործը գլուխ բերելու համար համայնքն սկսեց ուղիներ որոնել՝ եկեղեցում հոգևոր սպասավոր նշանակել տալու համար: Եկեղեցու համայնքի ղեկավարության նախաձեռնությամբ և Դիարբեքիրի քաղաքապետարանի աջակցությամբ Սուրբ Կիրակոսում հայերենի դասընթաց կազմակերպվեց: Ստամբուլից հրավիրված մի հայ ուսուցչի շուրջ համախմբվեց 40 մարդ: Կազմակերպվում էին նաև զանազան մշակութային միջոցառումներ, որոնց շրջանակներում համերգային ծրագրերով հանդես եկան արվեստի այնպիսի գործիչներ, ինչպիսիք էին Օնիկ և Արա Դինքչյանները, դաշնակահար Ռաֆֆի Պետրոսյանը: Եկեղեցում համերգներ տվեցին նաև Հայաստանից ժամանած ժողովրդական համույթները: Սուրբ Կիրակոս եկեղեցին վերածվել էր հայերի հավաքատեղիի:

2015 թ. սեպտեմբերին հայկական թաղամասում, որը հայտնի է Գյավուր թաղ անունով, քրդերի և թուրքական անվտանգության ուժերի միջև մեծ ընդհարում տեղի ունեցավ, ինչի հետևանքով թաղամասն ավերակի վերածվեց: Սա հայկական համայնքը մեկ անգամ ևս մասնատելու և ոչնչացնելու փորձ էր: Տանկերի և թնդանոթների համազարկերով հայկական եկեղեցիներն ու տներն ավերվեցին: Լրջորեն վնասվեցին Սուրբ Կիրակոս և Սուրբ Թեոդորոս եկեղեցիները: Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայ կաթոլիկ եկեղեցու զանգակատունը ևս ավերվեց: 2015 թ. առ այսօր այս թաղամաս ելումուտն արգելված է:

Պետությունը հանրայնացրեց Գյավուր թաղում գտնվող բոլոր կառույցները: Սակայն Սուրբ Կիրակոս եկեղեցու համայնքն իր առարկությունը հայտնեց և վերականգնեց իրավունքներն այդ եկեղեցու նկատմամբ: Պետությունը կրկին նորոգեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ և Սուրբ Թեոդորոս եկեղեցիները (Քուրշունլու մզկիթը): Սուրբ Գրիգոր և Մոր Փեթյուն եկեղեցիների նորոգման և վերակառուցման աշխատանքները շարունակվում են: Ներկայումս այդ եկեղեցիներ ելումուտն արգելված է: Նրանք, ովքեր ցանկանում են կրկին տեսնել Դիարբեքիրի հայության խորհրդանիշը դարձած Սուրբ Կիրակոսը, կարող են իրենց կարոտն առնել բարձր շենքերի կտուրներից այս եկեղեցու զանգակատանը նայելով:

Այս ամենով հանդերձ՝ Դիարբեքիրի հայկական համայնքը դարձյալ կարողանում է հավաքներ կազմակերպել, և քանի որ եկեղեցիներ մուտքն արգելված է, վերջին տարիներին հայերը Սուրբ Ջատկի տոնը նշում են սրճարանում կամ ռեստորանում:

Ներկայումս Դիարբեքիրի 10 բնակչից գոնե մեկը կամ իսլամացված հայ է, կամ կիսով չափ հայ: Ենթադրվում է, որ Դիարբեքիրում այսօր բնակվում են 30 քրիստոնյա և 200 հազարի չափ իսլամացված և ծպտյալ հայեր: Մերձավոր Արևելքի ամենամեծ եկեղեցու տեր Դիարբեքիրում այսօր եկեղեցի կա՝ քահանա չկա, դպրոց կա՝ ուսուցիչ չկա, հայ կա՝ հայերեն չկա. . .

Հայաստան – ՀՅԴ – Սփիւռք (4) (Ժամանակակից շրջան - 3)

Մկրտիչ Մկրտիչեան

ՀՀ երրորդ նախագահ ընտրուած Սերժ Սարգսեան առարկայական պատճառներով ամէն նախապայման կը լրացնէր երկրին համար լաւ ղեկավար մը դառնալու: Ան արդէն կուտակած էր պետական աշխատանքի լայն փորձառութիւն. առանց հաշուելու Ստեփանակերտի մէջ ազատամարտի շրջանին և ատկէ առաջ կատարած իր աշխատանքը՝ ան երկու անգամ եղած էր ՀՀ պաշտպանութեան նախարար, Ազգային անվտանգութեան ծառայութեան ղեկավար, Ազգային անվտանգութեան խորհուրդի քարտուղար, Անվտանգութեան նախարար, ՀՀ ներքին գործոց և յետոյ ներքին գործոց ու անվտանգութեան նախարար, նոյնիսկ նախագահական անձնակազմի ղեկավար: Նախագահ դառնալէ առաջ իր ստանձնած վերջին պաշտօնը՝ ՀՀ վարչապետ: Այսինքն՝ ան ունէր ամէն ինչ, որ անհրաժեշտ էր իր նոր պաշտօնը դիւրութեամբ ու լաւագոյն ձևով կատարելու համար:

Միւս կողմէ, սակայն, իր պաշտօնավարութիւնը կը սկսէր Մարտ 1ի դէպքերու յետնաբեմին վրայ: Նաև իր օրով սկիզբ առաւ համաշխարհայնացած միջազգային համակարգի առաջին մեծ տնտեսական տագնապը, որ փաստօրէն կասեցուց իր նախորդի ձեռնարկած տնտեսական քաջալերական յառաջխաղացքը:

Դաշնակցութիւնը պատճառ մը չունէր համակրանք տածելու նոր նախագահին հանդէպ. վերջիվերջոյ, ինք ատենին կուսակցութիւնը հալածած վարչակարգի հիմնական գործիչներէն մէկն էր: Այս առիթով պէտք է նշել, որ մեր նորագոյն պետականութեան ամբողջ ժամանակաշրջանին և առ այսօր Դաշնակցութիւնը երբեք ռխակալական բնազդներով չշարժեցաւ: Երբ երրորդ նախագահի պաշտօնավարութեան ընթացքին Լևոն Տէր-Պետրոսեան որոշեց վերադառնալ քաղաքական բեմ, իր դիմումին վրայ զինք Դաշնակցութեան գրասենեակին մէջ ընդունեց անոր ղեկավար մարմիններէն կազմուած ընկերներու խումբ մը: Հանդիպման ընթացքին նախկին նախագահը հիւրընկալներուն պարզեց իր մտադրութիւնը:

Նախագահական ընտրութենէն ետք Դաշնակցութեան ներկայացուցիչները յայտարարած էին արդէն, թէ Հանրապետական կուսակցութիւնը, որուն նախագահն էր Սերժ Սարգսեան, Ազգային ժողովէն ներս պատգամաւորներու բաւարար թիւ ունի մէկ գործընկերով գործելու ատակ կառավարութիւն մը կազմելու համար: Սակայն Ս. Սարգսեան յայտարարեց, թէ կը փափաքի կազմել աւելի լայն հիմքերով կառավարութիւն մը, և սկսաւ խորհրդակցութիւնները խորհրդարանին մէջ ներկայացուած քաղաքական ուժերուն հետ: Բացի «Ժառանգութիւն» կուսակցութենէն Ազգային ժողովին մէջ ներկայացուած մնացեալ չորս ուժերը, որոնց կարգին Հ.Յ.Դ.ն, մաս կազմեցին նոր կառավարութեան:

Այս կառավարութեան որոշումով հիմը դրուեցաւ Սփիւռքի նախարարութեան, որուն գործունէութիւնը սկիզբ առաւ 2008ի հոկտեմբերին: Այս ձևով իրականութիւն կը դառնար շուրջ տասնամեակ մը առաջ Դաշնակցութեան դրած մէկ պահանջը:

Իր հիմնադրութենէն կարճ ատեն ետք Սփիւռքի նախարարութիւնը դարձաւ համահայկական կարևոր մէկ օղակ՝ ժամանակի ընթացքին կապ հաստատելով աշխարհասփիւռ բոլոր համայնքներուն հետ: Անոր կազմակերպած Հայաստան-Սփիւռք խորհրդաժողովները, շարունակելով հանդերձ նախորդներուն ոճը, աւելի լաւ կազմակերպուած էին: Այսպէս, «Արի տուն» նախաձեռնութիւնը ամառնային արձակուրդներուն կը հաւաքէր սփիւռքահայ պատանիներ և զանոնք տուներու մէջ տեղաւորելով՝ կը զինէր հայրենագիտութեամբ: Անշուշտ, ձեռնարկներէն բացակայ չէր իշխանամէտ քարոզչութիւնը, բայց և այնպէս կը ստեղծուէր մեծ խանդավառութիւն: Նախարարութեան կողմէ Երևանի պետական համալսարանէն ներս կազմակերպուած արևմտահայերէնի և արևելահայերէնի դասընթացքներէն շատեր օգտուեցան՝ հակառակ անոնց կազմակերպական որոշ թերիներուն: Խորքային գործ եղաւ համալսարանէն ներս սփիւռքագիտութեան ամպիոնի հաստատումը, որ կոչուած է կարևոր դեր խաղալու համահայկական հասարակութեան մը կերտումի գործընթացներուն մէջ:

Սփիւռքի նախարարութիւնը անհրաժեշտութիւն էր. ան հայութեան աշխարհացրիւ անօթները իրարու կապող լայն խողովակն էր, որուն դարերու ընթացքին թանձրացած աւիշը ժրաջան աշխատանքով կոչուած էր հոսելու և հասարակաց մակարդակի բերելու հայութեան բեկորները:

Դժբախտաբար, այսօր գոյութիւն չունի Սփիւռքի նախարարութիւնը. անոր տեղ կը գործէ Սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատարի գրասենեակը, որ ուղղակիօրէն կապուած է վարչապետարանին՝ վարչապետին: Անկասկած, յանձնակատարը, ինչքան կ'երևի դուրսէն, նոյնպէս ժրաջան աշխատանք կը տանի. անոր արդիւնքը օր մը տեսանելի պիտի ըլլայ հարկաւ: Առայժմ կարելի է ըսել, որ իր կողմէ

թիրախը ճիշդ ընտրուած է: Գլխաւոր յանձնակատարը թիրախ ընտրած է Արևելեան սփիւռքը՝ Ռուսաստան, Վրաստան. հաւանաբար կարգը պիտի հասնի նաև մնացեալին: Խորհրդային Միութեան փլուզումէն երեսուն տարիներ ետք լաւ անակնկալ պիտի ըլլար երբեմնի Լազարեան ճեմարանին նման կառոյցներու տարածումը արևելեան անծայրածիր դաշտավայրերուն վրայ ուծացող հայութեան բնակավայրերէն ներս:

Նախագահ Ս. Սարգսեանին կողմէ համարեա համազգային կառավարութեան մը մէջ համախմբուած տարրերը հազիւ իրարու հետ աշխատելու վարժողական շրջանը աւարտած էին, երբ «ձայն մը հնչեց» Մոսկուայէն: Արդարև, 2008ի յունիսի վերջաւորութեան պաշտօնական այցելութեամբ Մոսկուա մեկնած նախագահը քաղաքի հայկական համայնքի ներկայացուցիչներուն հետ հանդիպման ընթացքին ի միջի այլոց յայտարարեց. «Երկրորդ խնդիրը, որի մասին կ'ուզէի խօսել, հայ-թուրքական յարաբերութիւններն են: Այս հարցում մեր դիրքորոշումը յստակ է. հարևան պետությունների միջև 21րդ դարում չպէտք է լինեն փակ սահմաններ: Տարածաշրջանային համագործակցութիւնը կարող է լինել կայունութեան հաստատման լաւագոյն միջոցը:

Թուրքական կողմն առաջարկում է ձևաւորել մի յանձնաժողով, որը պէտք է ուսումնասիրի պատմական փաստերը: Մենք դէմ չենք այդպիսի յանձնաժողովի ստեղծմանը, բայց այն ժամանակ, երբ կը բացուի սահմանը մեր պետութիւնների միջև: Այլապէս այն կարող է դառնալ հարցը տարիներով երկարաձգելու և շահարկելու միջոց:

Առաջիկայում ես մտադիր եմ նոր քայլեր ձեռնարկել հայ-թուրքական յարաբերութիւնները խթանելու ուղղութեամբ: Ամենայն հաւանականութեամբ, ես կը հրաւիրեմ Թուրքիայի նախագահ Ապտիւլլա Կիւլին Երևան՝ միասին դիտելու Հայաստանի և Թուրքիայի ֆութպոլի հաւաքականների խաղը»:

Առաջին անգամը չէր, որ Հայաստանի իշխանութիւնները բոլորովին անակնկալ կերպով յանձն կ'առնէին նման նախաձեռնութիւն. Ապտիւլլա Կիւլն ալ հաւանաբար Միտհաթ փաշայէն ետք առաջին «համակրելի» թուրք ղեկավարը ըլլար: Բայց այս հրաւէրը տարօրինակ կացութեան առջև կը դնէր հայկական հասարակութիւնը ընդհանրապէս, հայկական քաղաքական բեմը՝ մասնաւորապէս: Ս. Սարգսեան կը սկսէր ֆութպոլով, երբ ատենին Ռ. Քոչարեան համաձայնած էր հայ-թրքական հաշտութեան յանձնախումբի մը կազմութեան: Ատենին խօսակցութիւնները սկսած ու աւարտած էին ձախողութեամբ. այդ ձախողութեան մէջ իր դերակատարութիւնը ունեցած էր ՀՀ նախագահի քաղաքական թիկունք հանդիսացող Դաշնակցութիւնը:

Ռ. Քոչարեանի ժամանակ նախաձեռնութիւնը կը թուէր պատկանիլ քաղաքական Արևմուտքին, ինչ որ հասկնալի էր: Ս. Սարգսեանի ազդանշանը կը տրուէր... Մոսկուայէն: Ճիշդ է, որ Մոսկուայի հայկական համայնքը բազմամարդ է՝ իր քաղաքական ու պատմական լուրջ աւանդ ունեցող վերնախաւով, սակայն այդտեղ Հայոց ցեղասպանութեան հարցով տասնամեակներ շարունակ լռութիւն տիրած էր. վայրն ալ հայկական իրաւունքները ոտնախոխող, հայութեան բացակայութեան հայկական պետականութեան վերածնունդի շրջանին ստորագրուած տխրահռչակ ռուս-թրքական դաշինքի մը ծանր բեռը կը կրէր: Ատկէ կը ծնէր նաև նոյն ձևի ռուս և թուրք նոր ճնշումի մը հաւանականութեան կասկածը: Սակայն ՀՀ նախագահը կը պնդէր, թէ առնուած քայլը իր անհատական նախաձեռնութիւնն էր. սահմանը պէտք է բացուէր:

Դաշնակցութիւնը դէմ չէր սահմանի բացուելուն, բայց սահման պէտք է դրուէր ատոր դիմաց վճարուելիք գինին: Հանրածանօթ էին Արցախի խնդիրով թրքական դիրքորոշումները: Նուազագոյն սխալ արտայայտութեան մը հետևանքով կրնար իրողապէս կանգ առնել Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը, թրքական պետութեան հետ հայութեան հաշիներու կարգաւորումը կրնար կրկին յաւիտեան մոռացութեան գիրկը նետուիլ, այս բոլորը՝ բանի մը համար, որուն գործադրութիւնը ինքնին հասկնալի էր. սահմաններու բացումը միջազգային ժամանակակից յարաբերութիւններու օրէնսգիրքին մէջ առաջին պահանջն էր, որուն պէտք է ենթարկուէր Թուրքիան այսպէս թէ այնպէս:

Հայ-թրքական «փրոթոքոլ»ներու շուրջ բանակցութիւնները տևեցին ամիսներ. երբ արդիւնքի մանրամասնութիւնները սկսան յստակօրէն երևնալու, Դաշնակցութիւնը բողոքելով դուրս եկաւ կառավարութենէն՝ միաժամանակ ներկայացնելով արձանագրութիւններուն մէջ հայկական շահերուն հակասող ակնբախ կէտերը: Ապահարզանը եղաւ բարեկամական. Դաշնակցութիւնը կը դառնար ընդդիմութիւն, բայց պիտի չվերածուէր թշնամի: Կոշտ ընդդիմադիր դարձած ՀԱԿը, որ կը շարունակէր նախագահական նախորդ ընտրութիւններէն ետք սկսած հերթական ցոյցերը, իր նախագահ Լևոն Տէր-Պետրոսեանի բերանով համաձայնութիւն տուաւ այս մարզէն ներս տարուող քաղաքականութեան: Իսկ Դաշնակցութիւնը համաձայնագրերուն դէմ բողոքի ցոյց կազմակերպեց Երևանի մէջ, որուն մասնակցեցան բազմատասնեակ հազար ազգայիններ:

Իր առած քայլերը բացատրելու նպատակով նախագահ Ս. Սարգսեան ձեռնարկեց զինք սփիւռքեան ներկայացուցչական շրջաններ տանող շրջապտոյտի մը: Ինչպէս նախատեսելի էր, Սփիւռքը Եւրոպայի, Միացեալ Նահանգներու և Միջին Արևելքի մէջ նախագահին ծրագիրը բուռն կերպով մերժեց, իսկ Ռուսաստանի հայութիւնը, ինչպէս նոյնպէս կ'ակնկալուէր, զայն ընդունեց:

Դժուար էր համոզուիլ, որ նախագահը այս արդիւնքները նախատեսած չէր: Հետևաբար վերոյիշեալ շրջապտոյտի կայացումը կը մնայ տակաւին մեկնաբանելի: ■

Պետութեան տեղն ու դերը

Մարիо Նալպանդեան

Քորոնաժահրի համաճարակը սանձարձակ կը շարունակէ իր յառաջխաղացքը: Հետազօտողներ ու գիտնականներ գիշեր ու ցերեկ կ'աշխատին ճար մը գտնելու համար: Ջուգահեռաբար քաղաքական պատասխանատուութիւն կրողներն ու քաղաքագէտները կը քննեն ու կը վերլուծեն համաճարակին հետևանքները, մասնաւորապէս՝ տնտեսական ու ընկերային ոլորտներուն մէջ՝ մտածելով «Յաջորդ օրուան» (The Day After) մասին:

Յաջորդ օրուան մասին մտածելը ինքնաբերաբար մեզ կը մղէ հայեացք մը նետելու, թէ համայն մարդկութիւնը ինչպէս պիտի դիմագրաւէ առաջին համաշխարհային (կլոպալ) ճգնաժամը, ինչ տեսակի ազդու և կանխարգելիչ միջոցներու պիտի դիմէ: Փաստ է, որ չկան ղեկավարներ, որ իրենց գործով ու հեղինակութեամբ առաջնորդի դեր խաղան: Փաստ է նաև, որ վերջին ժամանակներուն հրապարակ ելած են պոպուլիստ ու արկածախնդիր ղեկավարներ, որոնք իրենց գործունէութեամբ աւելի անորոշութեան կը մատնեն աշխարհի ներկայ փուլը:

Ճգնաժամի այս ծանր օրերուն այժմէականութիւն կը ստանայ երբեք չաւարտած բանավէճը պետութեան տեղին ու դերին մասին:

Խորհրդային Միութեան փլուզումէն անմիջապէս յետոյ տարածում գտաւ այն գաղափարը, որ լոզունգի ձևով արագ մը հասաւ ժողովուրդի լայն խաւերուն, թէ «պատմութիւնը վերջացած է», թէ այսուհետև միայն մէկ գաղափարախօսութիւն կը տիրէ՝ազատական (լիպերալ), որ այժմ նորազատականութեան (նէօլիպերալիզմ) է վերածուած: Այս մտածողութիւնը իրեն դաշնակից ունեցաւ լիպերալ մեդիան ու հարիւրաւոր հետազօտական կեդրոններ (think tank). մեծամասնութիւնը՝ ֆինանսաւորուած ելևմտական կեդրոններու կողմէ, որոնք իրենց քարոզչութեան հիմնական թիրախ ընտրեցին պետութիւնը՝ զայն պատասխանատու համարելով ամէն տեսակի աղէտներու ու չարիքներու:

Իննսունական տարիներուն Ուաշինկթընի համախոհութենէն (Washington Consensus) բխող գաղափարները և անկէ վերջ արագ ընթացող համաշխարհայնացումը (globalization) վերատեսութեան ենթարկեցին ազգ-պետութիւն սահմանումը և պատմական հասկացութիւնը: Ազգ-պետութիւնը խարսխուած է երկու հիմնական հասկացութիւններու վրայ՝ ինքնիշխանութիւն և քաղաքացիութիւն, որոնք ևս փոփոխութիւններ կրեցին:

Պետութիւնները ինքնիշխանութենէն զիջեցան, երբ կամաւոր կերպով վերազգային հաստատութիւններ ստեղծեցին: Նաև զիջեցան

Մարիո Նալբանդեան. ՀՅԴ Բիւրոյի նախկին անդամ, Սոցինտերնի (ընկերվար միջազգայնականի) փոխնախագահ

ստորադաս կառոյցներուն, ինչպէս տեղական ինքնակառավարման իշխանութիւններ, որոնց իրաւասութիւններ փոխանցեցին՝նպաստելով քաղաքացիութեան աւելի ազդու և գործօն մասնակցութեան: Այս բոլորը եկան փաստելու, որ իր իրաւունքներուն գիտակից քաղաքացին կը նպաստէ ժողովրդավարութեան հզօրացման, ինչպէս նաև իրաւունքներու ընդլայնման ու գործադրման:

Նէօլիպերալ գաղափարախօսութիւնը չի ձգտիր պետութեան վերացման, այլ կը ձգտի անոր դերը նուազագոյնի իջեցնելու՝անոր վերագրելով անարդիւնաւէտութիւն և փտածութիւն:

Նէօլիպերալիզմը կը փառաբանէ շուկան ու զայն կը վերածէ այն կեդրոնական առանցքը, որուն շուրջ պէտք է ընթանայ կեանքը: Ասոր համար շուկայի ապակարգաւորումը պէտք է ապահովել, քանի որ շուկան իր օրէնքներով ինքն իրեն կը հակակշռուի: Սակայն փորձը ցոյց տուաւ, թէ այդպէս չէ: Շատ արագ ձևաւորուեցան մենաշնորհներ ու օլիկոփոլներ, և ելևմտական մարզի գերակայութիւնը տնտեսութեան վրայ աւելի զգալի դարձաւ: Ֆինանսական կեդրոնները (դրամատուներ և այլն) կը ձգտին հասարակութիւնը ձևաւորելու իրենց շահերուն համապատասխան և կը միտին իրենց ազդեցութիւնը տարածելու միջազգային հաստատութիւններէն ներս ու այս ձևով ազդելու երկիրներու քաղաքական կեանքին վրայ:

Նոյն ժամանակի ընթացքին պետութիւնը նահանջեց իր անզիջելի և անօտարելի պարտաւորութիւններէն, յատկապէս՝ հանրային

առողջապահութեան, կրթութեան և ընկերային ծառայութիւններու պարագային:

Բայց «պատմութիւնը չէ վերջացած». գոյութիւն ունի կենսունակ մտածողութիւն մը, որ կ'արժևորէ պետութեան տեղն ու դերը՝ անոր վերապահելով հիմնական դերակատարութիւն արդար ու արդիական աշխարհի մը ձևաւորման մէջ, ուր շուկան պիտի գոյութիւն ունենայ, բայց ոչ ինքնիշխան ու սանձարձակ:

Այս մտածողութեան կը հետևին ընկերվարական և սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւնները, որոնք հեռու են տոկմաներէ և ամէն տեսակի ամբողջատիրութենէ:

Գաղափարախօսութիւն, որ խարիսխուած է ազատութեան, հաւասարութեան, ընկերային արդարութեան և համերաշխութեան համամարդկային արժէքներուն վրայ:

Քորոնաժահրի ժամանակ պետութեան տեղի ու դերի բանավէճը հրատապ այժմէականութիւն կը ստանայ: Երբ համաճարակին վերաբերող վիճակագրութիւնները կը դիտենք, ի յայտ կու գայ, թէ ինչպէս զարգացած երկիրներ այսօր անզօր են կասեցնելու վարակումը, թէ ինչպէս հանրային առողջապահական համակարգը թուլցած է ժամանակի ընթացքին և անզօրութեան մատնուած:

Այս ուղղութեամբ կ'արժէ կանգ առնել Իտալիոյ և Ամերիկայի Միացեալ Նահանգներու պարագաներուն վրայ. երկուքն ալ՝ հզօր ու Մեծ եօթնեակի (G7) անդամ պետութիւններ:

Իտալիան տարիներով ազատական ու պոպուլիստ կառավարութիւններ ունեցած է, որոնք իրենց վարած քաղաքականութեամբ փորձած են պետութեան դերը նուազագոյնի իջեցնել: Վերջին տասը տարիներու ընթացքին Իտալիոյ պետական հանրային առողջապահութեան համակարգը (SSN) 37 միլիառ նրօ նուազ գումար ստացած է պետական ամավարկէն(պիւտճէ):Նոյնժամանակահատուածին 42800 բժիշկներ ու մասնագէտներ դուրս մղուած են առողջապահական պետական համակարգէն: Մահճակալներուն թիւը նուազած է 5,7էն 5ի՝ իւրաքանչիւր հազար հոգիի համար: Ձարկ տրուած է մասնաւորի մասնակցութեան, որ պէտք էր լրացուցիչ ըլլար և ոչ թէ փոխարինէր հանրային առողջապահական համակարգը:

Նաև կ'արժէ դիտել Ամերիկայի Միացեալ Նահանգներու պարագան: Թէև Ամերիկան առողջապահութեան ամէնէն բարձր տոկոս տրամադրող երկիրն է՝ իր տեղական համախառն արտադրութեան (ՏՀԱ, GDP) 17% ը, այսուհանդերձ, պետութեան մասնակցութիւնը այդ ընդհանուրին մէջ միայն 40%ի կը հասնի, ինչ որ կը թանկացնէ առողջապահութիւնը, ու իր բնակչութեան տասնեակ միլիոններ կը զրկուին որակեալ առողջապահական

սպասարկութենէ:

Ներկայիս աշխարհի մէջ քորոնաժահրով վարակուածները ամէնէն շատ են Ամերիկայի մէջ, է և ապագայի նախատեսումները ահաւոր կ'երևին: Պոպուլիստ Տոնալտ Թրամփի նախագահութեան օրով մեծ ճիգ կը թափուի հանրային առողջապահութեան յատկացուած պիւտճէն ու միջոցները կրճատելու համար:

Թրամփ երեք տարուան ընթացքին ճիգ թափած է իր ժառանգած առողջապահական համակարգը «զինաթափ» ընելու: 2018ին ան գործէ արձակեց Ամերիկայի հանրային առողջապահութեան սպասարկութեան (US Public Health Service) բարձրաստիճան պաշտօնեաներ: Թրամփ գլխապտոյտ պատճառող իր պոպուլիզմով Քոնկրէսին յղած զանազան օրինագիծերով փորձեց 40 տոկոսով կրճատել առողջապահութեան պետական պիւտճէն: Այս քայլը ցարդ եղած է ապարդիւն:

Թրամփի՝ «Obamacare»-ը («Դ». - Այսպէս կը կոչուէր նախագահ Պարաք Օպամայի կողմէ որդեգրուած առողջապահական յայտնի բարեկարգումներու թղթածրարը) վերացնելու ճիգը ոչ միայն կը մեկնի զուտ քաղաքական հաշիւներէ, այլ նաև իր վարչակազմի խոր համոզումէն, որ պետութիւնը գործ չունի առողջապահութեան հետ: Այլ խօսքով՝Թրամփի համար առողջապահութիւնը պիզնես է և… «Business as usual», ինչպէս միւս բոլոր պիզնեսները:

Մինչև «Obamacare»-ի իրականացումը՝ 2010ին, Ամերիկայի տարածքին 48,6 միլիոն անձ առողջապահական համակարգէ դուրս էին, սակայն 2016 թուականին այդ թիւը իջած էր 27,3 միլիոնի:

Վերի դիտարկումներուն լոյսին տակ կ'արժէ արագ նայուածք մը նետել Հայաստանի իրավիճակին վրայ:

Խորհրդային Միութեան փլուզումէն վերջ Հայաստանի Հանրապետութեան պետական ռազմավարական ուղղութիւնը առողջապահական ոլորտին մէջ կրնանք ըսել գրեթէ նոյնը եղած է:

Վերջին տարիներուն ընթացքին առողջապահական հիմնարկներուն մասնաւորեցումը կամ սեփականաշնորհումը կատարուեցաւ՝ նպատակ ունենալով ծառայութիւններու որակին բարելաւումը, ինչ որ միւս կողմէն նպաստեց առողջապահական ծառայութիւններու գիներու աճին:

Այս եղածին նկատմամբ պետութիւնը անտարբեր չէ եղած ու հակազդած է որոշ ծառայութիւններու նպաստաւորումով (սուպսիտաւորում): Իրարայաջորդ կառավարութիւնները այս խնդիրի նկատմամբ որդեգրած են քաղաքական ու ընկերա-տնտեսական տարբեր մարտավարութիւններ:

Հայաստանի Հանրապետութեան՝ Խորհրդային Միութենէն ժառանգած առողջապահական համակարգը, իր թերութիւններով հանդերձ, կարելի էր որակել իբրև բաւական ամուր: 1990 թուականին Խորհրդային Հայաստանի առողջապահութեան յատկացուած պիւտճէն կը կազմեր ընդհանուր պիւտճէին 10 տոկոսը: 1000 բնակիչի համար բժիշկներու թիւը 4 էր, իսկ հիւանդանոցային մահճակալներու թիւը՝ 8,6: Հիւանդանոցներու և առողջապահական հիմնարկներուն ընդհանուր թիւը կը հասնէր 180ի: Սակայն 2019 թուականին առողջապահութեան տրամադրուած ընդհանուր պիւտճէն 6,9% է, 1000 բնակիչի համար ունինք 5,5 բժիշկ ու 4 մահճակալ:

Հիւանդանոցներու ու բժշկական հիմնարկներու ընդհանուր թիւը այսօր 124 է (88 պետական + 36 մասնաւոր):

Եթէ Հայաստան շարունակէ իր որդեգրած այս ուղիով, առողջապահական վիճակը, թէև այսօր բարւօք, այսուհանդերձ անխուսափելիօրէն կրնայ հասնիլ Իտալիոյ ու Ամերիկայի ներկայ վիճակին: Հայաստանի Հանրապետութեան տարածքին քորոնաժահրի վարակումներու ներկայ պատկերը այդքան ալ լաւ չէ:

Ապրիլ 9ի տուեալներով՝ ամէն 1 միլիոն բնակիչից 311ը վարակուած էին: Այս բոլորը նկատի ունենալով՝ կրնանք եզրակացնել, թէ առողջապահական համակարգին մէջ պետութեան դերի նսեմացումը որոշ արդիւնաւէտութիւն կ'ապահովէ... «խաղաղ պայմաններու» մէջ, սակայն լուրջ ճգնաժամի ժամանակ շուտով երևան կու գան անոր խոցելի կողմերը:

Այն տարածաշրջանը, ուր կը գտնուի Հայաստանի Հանրապետութիւնը, կը յատկանշուի մեր անվտանգութեան ուղղուած մարտահրաւէրներով, ինչպէս նաև երկրակեղևի անկայուն (երկրաշարժային) նկարագրով, կլիմայական փոփոխութիւններով ու այս բոլորի անկանխատեսելի հետևանքներով: Այս ազդակները Հայաստանին չեն ապահովեր մնայուն «խաղաղ պայմաններ»:

Այս պատճառով ալ անհրաժեշտ է, որ պետութիւնը իր դերը վերցնէ՝ նախ պաշտպանելով ու զօրացնելով երկրի ընկերային հիւսուածքը և ապահովելով ընդհանուր պիւտճէին մէջ հանրային առողջապահութեան տրամադրուելիք մասնաբաժինը, որպէսզի ան ոչ միայն բաւարարէ համակարգը պահելուն, այլ նաև նպաստէ հետազօտութեան ու արդիական արհեստագիտութեան ձեռքբերման, ինչպէս նաև առողջապահական համակարգի բոլոր աշխատաւորներուն անխտիր արժանապատիւ եկամուտ ապահովէ:

Ասոր կողքին անհրաժեշտ է, որ պետութիւնը նախաձեռնէ ապահովագրական այնպիսի համակարգի մը ստեղծման, որ թիրախ ունենայ բնակչութեան յատկապես անապահով ու կարիքաւոր շերտերը:

Թէև պետութեան տեղի ու դերի բանավէճը պիտի շարունակուի ժամանակի ընթացքին, սուր ճգնաժամի այս օրերը ցոյց կու տան, որ պետութեան տեղը անփոխարինելի է արդի աշխարհին մէջ, որ մասնաւորի մասնակցութիւնը կրնայ նպաստել նաև համայն մարդկութեան զարգացման:

Սակայն պետք է չէ մոռնալ, որ մասնաւորին մղիչ ուժը շահն է: Իսկ պետութեան գոյութեան իմաստն է հասարակական ընդհանուր շահի պաշտպանութիւնը:



1915 թ. ապրիլի 11/24-ի պոլսահայ մտավորականության ձերբակալման մասին ՀՅԴ առաջին տեղեկատվությունը կատարվել է ապրիլի 24/27-ին: Երկու էջանոց այս փաստաթուղթը կիսատ է ու անավարտ: Դրա շարունակությունը կա ՀՅԴ արխիվի նույն թղթածրարում, և այն արտագրվել է ՀՅԴ Բալկանների կենտրոնական կոմիտեի գործավարի կողմից: Առհասարակ այս փաստաթղթերը եղել են ծածկագիր և գրվել են գաղտնի մելանով: Այն արտագրություն է <<Վիշապիե>> ՀՅԴ Պոլսի շրջանի հղած փաստաթղթից: Նպատակ ունենալով ի սկզբանե հավաքելու երկրի տարածքում և ողջ սմանյան կայսրությունում հայության նկատմամբ սանձազերծված վայրագությունների փաստերը ու դրանք փոխանցելու մի քանի հասցեներով՝ վերոնշյալ փաստաթղթի մեկ օրինակն էլ ուղարկվել է Եգիպտոս: Ներկայացնում ենք ՀՅԴ կենտրոնական արխիվում հանգրվանած <<Եգիպտական արխիվում>> պահպանվող պատճենը:

Փաստ. 881

Պոլսէն մեզ հետեւեալը կը գրեն.
Դէպքը տեղի ունեցաւ առանց ոեւէ առիթի:
Ճիշդ է, օրեր առաջ չարագուշակ շշուկներ կը պտտէին, բայց դժուար էր երեւակայել այսպիսի զանգուածային կալանաւորումներ, ուր նկատի չառնուեցան ո՛չ հպատակութիւն, ո՛չ դասակարգ եւ ո՛չ ալ քաղաքական դաւանանք:
Շաբաթ առտուընէ Պոլսի ամբողջ ոստիկանութիւնը շարժման մէջ դրուած էր: Սկսան հատ-հատ ձերբակալումներ նախապէս պատրաստուած ցանկով: Գիշերը տեղի ունեցաւ բուն դաւը՝ տեւելով մինչեւ կիրակի: Հ.Յ. Դաշնակցութեան ծանօթ դէմքերէն գրեթէ ամէնքն ալ ձերբակալուեցան եւ կէս գիշերէն օթոմոպիլներով, ոստիկաններու եւ ժանտարմներու հսկողութեամբ փոխադրուեցան Կեդր. բանտ: Նոյն ժամուն հսկողութեան տակ առնուեցաւ <<Ազատամարտի>> խմբագրատունը, ու հոն գտնուածները նոյնպէս ձերբակալուեցան: Մինչեւ օրս ալ շէնքը փակ է, եւ առջեւը ոստիկաններ դրուած են:
Դաշնակցականներէ զատ՝ ձերբակալուած են հայկական բոլոր կուսակցութիւններու, հիմնարկութիւններու եւ միութիւններու աչքի ինկնող անդամները, մէկ խօսքով՝ բոլոր անոնք, որ կրնային ոեւէ դեր խաղալ հանրային գործերու մէջ:
Մինչեւ ներկայ վայրկեանը ձերբակալուած են ի մէջ այլոց հետեւեալները.- Ակնունի, Խաժակ, Շահրիկեան, Հրաչ, Բ. Շահպազ, Ռ. Զարդարեան, Շամիլ, Սիամանթօ, Մովսէս Պետրոսեան, Դանիէլ Վարուժան, Ժիրայր, Արամ-Աշոտ, Տոքթ. Փաշայեան, Տոքթ. Քեթենճեան, Գ. Բարսեղեան, Հ. Համբարձումեան, Բիւզանդ Քէչեան եւ իր որդին Պարոյր, Տոքթ. Թորգոմեան, Տք. Տաղաւարեան, Տիրան Քելէկեան, Լեւոն Լարենց, Ներսէս Զաքարեան, Չավուշեան, Արամ Անտոնեան, Եր. Օտեան, տպարանատէր Ատոմ Շահէն, Մելքոն Կիւրճեան, Կիկօ, Կավռոշ, Սկիւտարի եւ Գում-Գաբուի միութիւններու վարչութեանց անդամները ու դեռ բազմաթիւ ուրիշ անձեր, բժիշկ, դեղագործ, վաճառական եւայլն:
Հոգեւորականներէն ձերբակալուած են Կոմիտաս, Յովնան, Պալաքեան վարդապետները, Յուսիկ քահանայ եւ ուրիշները:

Վարդգէսին առաջարկուած է երեք օրուան մէջ հեռանալ Պոլսէն ոեւէ թրքաբնակ վայր: Վերջին պահուն Գ. Զօհրապն ալ նոյն իմաստով ազդարարութիւն ստացաւ: Կ՚ըսուի, թէ ձերբակալուածներուն մէջ կայ 15-20 թուրք:
<<Խիստ կերպով խուզարկուեցան Պատրիարքարանը, Գում-Գաբուի, Եէնի Գաբուի, Սամաթիոյ դպրոցներն ու եկեղեցիները: Ամէն տեղ խուզարկութիւնը մեծ յուսախաբութիւն ունեցաւ, որովհետեւ խուզարկութիւնները ոչ մէկ արդիւնք տուին՝ չնայելով որ անգամ բոլորովին անյայտ մարդոց տուներէն պարկերով գիրք, թուղթ ու պատկերներ տարուած են:
Կալանաւորներէն ոչ մէկը կարելի եղաւ տեսնել: Թոյլ չտրուեցաւ մինչեւ իսկ ծնողներուն տեսնուիլ իրենց մերձաւորներուն հետ: Կ՚ըսուի, թէ բոլոր ձերբակալուածները, որոնց թիւը կ՚անցնի 300-ը , աքսորուած են Գոնիա կամ Էնկիւրի:
Վերջին պահուն իմացանք, որ ձերբակալուածներէն մէկ քանին, ինչպէս, օր[ինակի] համար, Բ. Քէչեանը, ազատ արձակուած են>>:

ՀԻՇՈՒՄ ԵՄ ԵՎ ՊԱՀԱՆՋՈՒՄ

ԴՐՕՇԱԿ